

**Լոս Անջելեսի Շրջան.  
Վարքային առողջության  
ձեռնարկ անդամների համար**

**Հոգեկան առողջության ծառայություններ  
և Medi-Cal-ի կողմից կազմակերպված  
դեղերի առաքման համակարգ**

**Հոգեկան Առողջության Վարչություն  
Department of Mental Health  
510 South Vermont Avenue  
Los Angeles, CA 90020**

**Հանրային Առողջության Վարչություն (Թմրանյութերի  
չարաշահման կանխարգելում և վերահսկում)  
Department of Public Health (SAPC)  
1000 South Fremont Avenue, A-9 East, Box #34  
Alhambra, CA 91803**

**(800) 854-7771, հասանելի է 24/7**

**ՓԵՏՐՎԱՐ 2026<sup>1</sup>**

---

<sup>1</sup> Ձեռնարկը պետք է առաջարկվի անդամին ծառայություններից առաջին անգամ օգտվելու պահին:

**NOTICE OF AVAILABILITY OF LANGUAGE ASSISTANCE SERVICES AND  
AUXILIARY AIDS AND SERVICES**

---

**English**

ATTENTION: If you need help in your language call 1-800-854-7771 (TTY: 711). Aids and services for people with disabilities, like documents in braille and large print, are also available. Call 1-800-854-7771 (TTY: 711). These services are free of charge.

**العربية (Arabic)**

يُرجى الانتباه: إذا احتجت إلى المساعدة بلغتك، فاتصل بـ 1-800-854-7771 (TTY: 711). تتوفر أيضًا المساعدات والخدمات للأشخاص ذوي الإعاقة، مثل المستندات المكتوبة بطريقة برييل والخط الكبير. اتصل بـ 1-800-854-7771 (TTY: 711). هذه الخدمات مجانية.

**Հայերեն (Armenian)**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Եթե Ձեզ օգնություն է հարկավոր Ձեր լեզվով, զանգահարեք 1-800-854-7771 (TTY: 711): Կան նաև օժանդակ միջոցներ և ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, օրինակ՝ Բրայլի գրատիպով և խոշոր տառերով տպագրված կյութեր: Չանգահարեք 1-800-854-7771 (TTY: 711): Այդ ծառայություններն անվճար են:

**ខ្មែរ (Cambodian)**

ចំណាំ: បើអ្នក ត្រូវ ការជំនួយ ជាភាសា របស់អ្នក សូម ទូរស័ព្ទទៅលេខ 1-800-854-7771 (TTY: 711)។ ជំនួយ និង សេវាកម្ម សម្រាប់ ជនពិការ ដូចជាឯកសារសរសេរជាអក្សរធំ សម្រាប់ជនពិការភ្នែក ឬឯកសារសរសេរជាអក្សរពុម្ពធំ ក៏អាចរកបានផងដែរ។ ទូរស័ព្ទមកលេខ 1-800-854-7771 (TTY: 711)។ សេវាកម្មទាំងនេះមិនគិតថ្លៃឡើយ។

**繁體中文 (Chinese)**

请注意：如果您需要以您的母语提供帮助，请致电 1-800-854-7771 (TTY: 711)。另外还提供针对残疾人士的帮助和服务，例如盲文和需要较大字体阅读，也是方便取用的。请致电 1-800-854-7771 (TTY: 711)。这些服务都是免费的。

**فارسی (Farsi)**

توجه: اگر می‌خواهید به زبان خود کمک دریافت کنید، با 1-800-854-7771 (TTY: 711) تماس بگیرید. کمک‌ها و خدمات مخصوص افراد دارای معلولیت، مانند نسخه‌های خط بریل و چاپ با حروف بزرگ، نیز موجود است. با 1-800-854-7771 (TTY: 711) تماس بگیرید. این خدمات رایگان ارائه می‌شوند.

## **हिंदी (Hindi)**

ध्यान दें: अगर आपको अपनी भाषा में सहायता की आवश्यकता है तो 1-800-854-7771 (TTY: 711) पर कॉल करें। अशक्तता वाले लोगों के लिए सहायता और सेवाएं, जैसे ब्रेल और बड़े प्रिंट में भी दस्तावेज़ उपलब्ध हैं। 1-800-854-7771 (TTY: 711) पर कॉल करें। ये सेवाएं नि: शुल्क हैं।

## **Hmoob (Hmong)**

CEEB TOOM: Yog koj xav tau kev pab txhais koj hom lus hu rau 1-800-854-7771 (TTY: 711). Muaj cov kev pab txhawb thiab kev pab cuam rau cov neeg xiam oob qhab, xws li puav leej muaj ua cov ntawv su thiab luam tawm ua tus ntawv loj. Hu rau 1-800-854-7771 (TTY: 711). Cov kev pab cuam no yog pab dawb xwb.

## **日本語 (Japanese)**

注意日本語での対応が必要な場合は 1-800-854-7771 (TTY: 711)へお電話ください。点字の資料や文字の拡大表示など、障がいをお持ちの方のためのサービスも用意しています。 1-800-854-7771 (TTY: 711)へお電話ください。これらのサービスは無料で提供しています。

## **한국어 (Korean)**

유의사항: 귀하의 언어로 도움을 받고 싶으시면 1-800-854-7771 (TTY: 711) 번으로 문의하십시오. 점자나 큰 활자로 된 문서와 같이 장애가 있는 분들을 위한 도움과 서비스도 이용 가능합니다. 1-800-854-7771 (TTY: 711) 번으로 문의하십시오. 이러한 서비스는 무료로 제공됩니다.

## **ພາສາລາວ (Laotian)**

ປະກາດ: ຖ້າທ່ານຕ້ອງການຄວາມຊ່ວຍເຫຼືອໃນພາສາຂອງທ່ານໃຫ້ໂທຫາເບີ 1-800-854-7771 (TTY: 711). ຍັງມີຄວາມຊ່ວຍເຫຼືອແລະການບໍລິການສໍາລັບຄົນພິການ ເຊັ່ນເອກະສານທີ່ເປັນອັກສອນນູນແລະມີໂຕພິມໃຫຍ່ ໃຫ້ໂທຫາເບີ 1-800-854-7771 (TTY: 711). ການບໍລິການເຫຼົ່ານີ້ບໍ່ຕ້ອງເສຍຄ່າໃຊ້ຈ່າຍໃດໆ.

## **Mien**

LONGC HNYOUV JANGX LONGX OC: Beiv taux meih qiemx longc mienh tengx faan benx meih nyei waac nor douc waac daaih lorx taux 1-800-854-7771 (TTY: 711). Liouh lorx jauv-louc tengx aengx caux nzie gong bun taux ninh mbuo (Armenian)

wuaaic fangx mienh, beiv taux longc benx nzangc-pokc bun hluo mbiutc aengx caux  
aamz mborqv benx domh sou se mbenc nzoih bun longc. Douc waac daaih lorx 1-800-  
854-7771 (TTY: 711). Naaiv deix nzie weih gong-bou jauv-louc se benx wang-henh  
tengx mv zuqc cuotv nyaanh oc.

### **ਪੰਜਾਬੀ (Punjabi)**

ਧਿਆਨ ਦਿਓ: ਜੇ ਤੁਹਾਨੂੰ ਆਪਣੀ ਭਾਸ਼ਾ ਵਿੱਚ ਮਦਦ ਦੀ ਲੋੜ ਹੈ ਤਾਂ ਕਾਲ ਕਰੋ 1-800-854-7771  
(TTY: 711). ਅਪਾਰਜ ਲੋਕਾਂ ਲਈ ਸਹਾਇਤਾ ਅਤੇ ਸੇਵਾਵਾਂ, ਜਿਵੇਂ ਕਿ ਬ੍ਰੇਲ ਅਤੇ ਮੋਟੀ ਛਪਾਈ ਵਿੱਚ  
ਦਸਤਾਵੇਜ਼, ਵੀ ਉਪਲਬਧ ਹਨ। ਕਾਲ ਕਰੋ 1-800-854-7771 (TTY: 711). ਇਹ ਸੇਵਾਵਾਂ ਮੁਫਤ ਹਨ।

### **Русский (Russian)**

ВНИМАНИЕ! Если вам нужна помощь на вашем родном языке, звоните по номеру  
1-800-854-7771 (линия ТТТ: 711). Также предоставляются средства и услуги для  
людей с ограниченными возможностями, например документы крупным шрифтом  
или шрифтом Брайля. Звоните по номеру 1-800-854-7771 (линия ТТТ:  
711). Такие услуги предоставляются бесплатно.

### **Español (Spanish)**

ATENCIÓN: si necesita ayuda en su idioma, llame al 1-800-854-7771  
(TTY: 711). También ofrecemos asistencia y servicios para personas con  
discapacidades, como documentos en braille y con letras grandes. Llame al  
1-800-854-7771 (TTY: 711). Estos servicios son gratuitos.

### **Tagalog (Filipino)**

ATENSIYON: Kung kailangan mo ng tulong sa iyong wika, tumawag sa  
1-800-854-7771 (TTY: 711). Mayroon ding mga tulong at serbisyo para sa mga taong  
may kapansanan, tulad ng mga dokumento sa braille at malaking print. Tumawag sa 1-  
800-854-7771 (TTY: 711). Libre ang mga serbisyon ng ito.

### **ภาษาไทย (Thai)**

โปรดทราบ: หากคุณต้องการความช่วยเหลือเป็นภาษาของคุณ กรุณาโทรศัพท์ไปที่หมายเลข  
1-800-854-7771 (TTY: 711) น  
นอกจากนี้ ยังพร้อมให้ความช่วยเหลือและบริการต่าง ๆ สำหรับบุคคลที่มีความพิการ เช่น เอกสารต่าง ๆ  
ที่เป็นอักษรเบรลล์และเอกสารที่พิมพ์ด้วยตัวอักษรขนาดใหญ่ กรุณาโทรศัพท์ไปที่หมายเลข  
1-800-854-7771 (TTY: 711) ไม่มีค่าใช้จ่ายสำหรับบริการเหล่านี้

### **Українська (Ukrainian)**

УВАГА! Якщо вам потрібна допомога вашою рідною мовою, телефонуйте на номер  
(Armenian)

1-800-854-7771 (TTY: 711). Люди з обмеженими можливостями також можуть скористатися допоміжними засобами та послугами, наприклад, отримати документи, надруковані шрифтом Брайля та великим шрифтом. Телефонуйте на номер 1-800-854-7771 (TTY: 711). Ці послуги безкоштовні.

**Tiếng Việt (Vietnamese)**

CHÚ Ý: Nếu quý vị cần trợ giúp bằng ngôn ngữ của mình, vui lòng gọi số 1-800-854-7771 (TTY: 711). Chúng tôi cũng hỗ trợ và cung cấp các dịch vụ dành cho người khuyết tật, như tài liệu bằng chữ nổi Braille và chữ khổ lớn (chữ hoa). Vui lòng gọi số 1-800-854-7771 (TTY: 711). Các dịch vụ này đều miễn phí.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՅԼ ԼԵՉՈՒՄՆԵՐ ԵՎ ՁԵՎԱԶՉԱՓԵՐ .....	7
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԱՊԻ ՏՎՅԱԼՆԵՐ .....	9
ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ .....	10
ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....	11
ԻՆՉՊԵՍ ՕԳՏԿԵԼ ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ .....	14
ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ .....	23
ՁԵՐ ԻՐԱԿՈՒՄՆԸ՝ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՓԱՏԱԹՂԹԵՐԻՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՄ «ՍՄԱՐԹ» ՍԱՐՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ .....	26
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ .....	27
ՀԵՌԱԽՈՍՈՎ ԵՎ ՀԵՌԱԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՍԱՆԵԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	54
ԽՆԴԻԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ. ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԲՈՂՈՔ, ԲՈՂՈՔԱՐԿԵԼ ԿԱՄ ՊԱՀԱՆՋԵԼ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԱՐԴԱՐ ԼՍՈՒՄ .....	55
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ .....	67
ԻՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	68
ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....	80
ԾԱՆՈՒՑՈՒՄ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՈՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	84
ԲԱՌԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ .....	85
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ .....	97

## ԱՅԼ ԼԵՉՈՒՆԵՐ ԵՎ ՁԵՎԱԶԱՓԵՐ

### Այլ լեզուներ

Եթե Ձեր լեզվով օգնության կարիք ունեք, գանգահարեք 1-800-854-7771 (TTY: 711): Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար հասանելի են նաև օժանդակություն և ծառայություններ, օրինակ՝ բրայլյան կամ խոշոր տառերով տպված փաստաթղթեր:

Չանգահարեք 1-800-854-7771 (TTY: 711): Այս ծառայություններն անվճար են:

### Այլ ձևաչափեր

Դուք կարող եք տեղեկատվությունը անվճար ստանալ նաև այլ ձևաչափերով, օրինակ՝ բրայլյան կամ 20 միավոր մեծության տառատեսակներով, ձայնային և մատչելի էլեկտրոնային ձևաչափերով: Չանգահարեք Շրջանի (նաև՝ վարչական շրջան) հեռախոսահամարով, որը նշված է այս ձեռնարկի շապիկին (TTY: 711): Չանգն անվճար է:

### Բանավոր թարգմանության ծառայություններ

Վարչական շրջանը (county) մատուցում է անվճար բանավոր թարգմանչական ծառայություններ որակավորված թարգմանչի միջոցով՝ օրը 24-ժամ: Անհրաժեշտ չէ, որ Ձեզ համար թարգմանիչ լինեն Ձեր ընտանիքի անդամը կամ ընկերը: Մենք չենք խրախուսում անչափահասներին որպես թարգմանիչ ներգրավելը, եթե արտակարգ իրավիճակ չէ: Շրջանը կարող է նաև օժանդակող միջոցներ և ծառայություններ տրամադրել Ձեր ընտանիքի

անդամին, ընկերոջը կամ ցանկացած այլ անձի, ով  
նպատակահարմար է, որ հաղորդակցվի Ձեր անունից: Բանավոր  
թարգմանության, լեզվական և մշակութային ծառայությունները  
հասանելի են Ձեզ անվճար: Օգնությունը հասանելի է օրը 24 ժամ՝  
շաբաթը 7 օր: Լեզվի հարցում օգնության կամ այս ձեռնարկն այլ  
լեզվով ստանալու համար զանգահարեք Շրջանի  
հեռախոսահամարով, որը նշված է այս ձեռնարկի շապիկին (TTY՝  
711): Չանգն անվճար է:

## ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԱՊԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Մենք այստեղ ենք՝ օգնելու համար: Հետևյալ կապի տվյալները Ձեզ կօգնեն օգտվել այն ծառայություններից, որոնք Ձեզ անհրաժեշտ են:

**Լոս Անջելեսի Շրջանի՝ Հոգեկան առողջության և թմրանյութերի օգտագործմանն առնչվող ծառայությունների օգնության գիծ**  
**Հեռախոս՝ (800) 854-7771, հասանելի է 24/7:**

**Լոս Անջելեսի Շրջանի Հոգեկան Առողջության Վարչություն**

Կայքէջ՝ <https://dmh.lacounty.gov>

Մատակարարների տեղեկատու՝ <https://dmh.lacounty.gov/pd>

Հիվանդին հասանելի հավելվածների ծրագրավորման հարթակներ (APIs)՝

<https://dmh.lacounty.gov/our-services/access-your-medical-records/patientaccess/>

Բողոքների և բողոքարկման հայտերի ներկայացման ֆաքս (213) 330-0285

**Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն, Թմրանյութերի չարաշահման կանխարգելում և վերահսկում**

Կայքէջ՝ <http://publichealth.lacounty.gov/sapc>

Մատակարարների տեղեկատու՝ <https://SUDHelpLA.org>

Հիվանդին հասանելի հավելվածների ծրագրավորման հարթակներ (APIs)՝

<https://pax.sapc.ph.lacounty.gov/>

Բողոքների և բողոքարկման հայտերի ներկայացման ֆաքս (626) 458-6692

**Ո՛ւմ հետ կապ հաստատեմ, եթե ունենում եմ ինքնասպանության մտքեր**

Եթե Դուք կամ Ձեր ծանոթներից որևէ մեկը ճգնաժամի մեջ է, խնդրում ենք

զանգահարել Ինքնասպանության և ճգնաժամային դեպքերի ուղիղ գծին՝ **988**

հեռախոսահամարով, կամ Ինքնասպանությունների կանխարգելման ազգային ուղիղ

գծին՝ **1-800-273-TALK (8255)**: Չրուցարանը (chat) հասանելի է

այստեղ՝ <https://988lifeline.org/>:

Ձեր տեղական ծրագրերից օգտվելու համար խնդրում ենք զանգահարել վերը նշված

24/7 Հասանելիության գծին (Access Line):

## ԱՅՍ ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ

### Ինչո՞ւ է կարևոր կարդալ այս ձեռնարկը

Ձեր վարչական շրջանն ունի հոգեկան առողջության ծրագիր, որն առաջարկում է հոգեկան առողջության ծառայություններ, որոնք հայտնի են որպես «հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ»: Բացի այդ, Ձեր շրջանն ունի Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգ (Drug Medi-Cal Organized Delivery System), որը մատուցում է ակտիվ կամ թմրամիջոցների օգտագործման հետ կապված ծառայություններ՝ հայտնի որպես «թմրանյութերից կախվածությանն առնչվող ծառայություններ»: Այս ծառայությունները միասին հայտնի են որպես «վարքային առողջության ծառայություններ», և կարևոր է, որ Դուք տեղեկություն ունենաք այդ ծառայությունների մասին, որպեսզի կարողանաք ստանալ Ձեզ անհրաժեշտ բուժումը: Այս ձեռնարկը բացատրում է Ձեր նպաստները և ինչպես ստանալ բուժում: Այն նաև կպատասխանի Ձեր բազմաթիվ հարցերին:

### Դուք կսովորե՞ք՝

- Ինչպես վարքային առողջության ծառայություններ ստանալ Ձեր վարչական շրջանի միջոցով
- Ինչ նպաստներ կարող են Ձեզ հասանելի լինել
- Ինչ անել, եթե ունեք հարց կամ խնդիր
- Ձեր՝ որպես Ձեր վարչական շրջանի անդամի իրավունքներն ու պարտականությունները
- Արդյոք կան Ձեր վարչական շրջանի մասին լրացուցիչ տեղեկություններ, որոնք կարող են նշված լինել այս ձեռնարկի վերջում:

Եթե Դուք հիմա չեք կարդում այս ձեռնարկը, պետք է պահեք այն, որպեսզի կարողանաք կարդալ ավելի ուշ: Այս ձեռնարկը նախատեսված է՝ օգտագործելու այն գրքուկի հետ, որը Դուք ստացել եք Medi-Cal-ի Ձեր նպաստների համար գրանցվելիս: Եթե ունեք հարցեր Ձեր Medi-Cal-ի նպաստների վերաբերյալ, զանգահարեք վարչական շրջան՝ հավաքելով այս ձեռնարկի շապիկին նշված հեռախոսահամարը:

### Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել Medi-Cal-ի մասին լրացուցիչ տեղեկություններ

Medi-Cal-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Առողջապահական Ծառայությունների Վարչության կայքը՝

<https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/eligibility/Pages/Beneficiaries.aspx>:

## ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### **Ինչպե՞ս իմանալ՝ արդյոք Դուք կամ Ձեր ծանոթներից մեկն օգնության կարիք ունի**

Շատ մարդիկ կյանքում դժվարությունների միջով են անցնում և կարող են ունենալ հոգեկան առողջություն կամ թմրանյութերի օգտագործման խնդիրներ: Ամենակարևորը հիշելն է, որ օգնությունը հասանելի է: Եթե Դուք կամ Ձեր ընտանիքի անդամը Medi-Cal-ի թույլտվություն և վարքային առողջության ծառայությունների կարիք ունեք, Դուք պետք է զանգահարեք 24/7 հասանելիության ուղիղ գծին (Access Line), որի համարը նշված է այս ձեռնարկի շապիկին: Ձեր կառավարվող խնամքի ծրագիրը կարող է նաև օգնել Ձեզ կապ հաստատել Ձեր վարչական շրջանի հետ, եթե նրանք կարծում են, որ Դուք կամ Ձեր ընտանիքի անդամը կարիք ունեք վարքային առողջության այնպիսի ծառայությունների, որոնց ծախսերը չի փակում կառավարվող խնամքի ծրագիրը: Ձեր վարչական շրջանը կօգնի Ձեզ գտնել մատակարար, որն առաջարկում է այնպիսի ծառայություններ, որոնց կարիքը հնարավոր է, որ Դուք ունենաք:

Ստորև բերված ցանկը կարող է օգնել Ձեզ որոշել, թե արդյոք Դուք կամ Ձեր ընտանիքի անդամն օգնության կարիք ունեք: Եթե կան մեկից ավելի նշաններ, կամ դրանք տևում են երկար ժամանակ, դա կարող է լինել ավելի լուրջ խնդրի նշան, որը պահանջում է մասնագետի օգնություն: Ահա մի քանի տարածված նշաններ, որոնք ցույց են տալիս, որ Դուք կարող եք ունենալ օգնության կարիք՝ կապված հոգեկան առողջության կամ թմրամիջոցների օգտագործման խնդիրների հետ.

### **Մտքեր և զգացմունքներ**

- Տրամադրության կտրուկ փոփոխություններ, հնարավոր է՝ առանց պատճառի, օրինակ՝
  - Չափից շատ անհանգստություն, տազնապ կամ վախ
  - Չափից ավելի տխուր կամ անտրամադիր
  - Չափից ավելի ուրախ՝ ասես երկնքում
  - Անտրամադիր կամ բարկացած՝ չափազանց երկար ժամանակ
- Ինքնասպանության մասին մտքեր
- Կենտրոնացում միայն ավրոհող կամ թմրանյութեր օգտագործելու վրա
- Կենտրոնացման, հիշողության կամ տրամաբանության ու խոսքի հետ կապված խնդիրներ, որոնք դժվար է բացատրել
- Խնդիրներ՝ կապված այնպիսի բաներ լսելու, տեսնելու կամ զգալու հետ, որոնք դժվար է բացատրել, կամ որոնք շատերն ասում են, որ գոյություն չունեն:

## Ֆիզիկական

- Բազմաթիվ ֆիզիկական խնդիրներ, հնարավոր է՝ առանց բացահայտ պատճառների, օրինակ՝
  - Գլխացավ
  - Ստամոքսի ցավ
  - Չափից ավելի շատ կամ չափից ավելի քիչ քնել
  - Չափից ավելի շատ կամ չափից ավելի քիչ ուտել
  - Պարզ խոսելու անկարողություն
- Արտաքին տեսքի վատթարացում կամ արտաքին տեսքի մասին խիստ մտահոգություն, օրինակ՝
  - Զաշի հանկարծակի կորուստ կամ ավելացում
  - Կարմրած աչքեր և անսովոր մեծ բիբեր
  - Բերանի, մարմնի կամ հագուստի տարօրինակ հոտ

## Վարքային

- Հետևանքներ Ձեր վարքագծի պատճառով, որի հիմքը Ձեր առողջության փոփոխությունն է կամ ակոհոլի կամ թմրանյութերի օգտագործումը, օրինակ՝
  - Խնդիրներ աշխատանքի վայրում կամ դպրոցում
  - Խնդիրներ այլ մարդկանց, ընտանիքի կամ ընկերների հետ հարաբերություններում
  - Պարտականությունների մասին մոռանալը
  - Անկարողություն՝ կատարելու ամենօրյա սովորական գործողությունները
- Խուսափում ընկերներից, ընտանիքից կամ սոցիալական շփումներից
- Գաղտնի գործողություններ կամ փողի գաղտնի կարիք
- Խնդիրներ իրավական համակարգի հետ՝ Ձեր հոգեկան առողջության փոփոխությունների կամ ակոհոլ կամ թմրանյութեր օգտագործելու պատճառով:

## 21 տարեկանից փոքր անդամներ

### ***Ինչպե՞ս իմանամ՝ արդյոք փոքր երեխան կամ դեռահասը օգնության կարիք ունի***

Դուք կարող եք կապ հաստատել Ձեր վարչական շրջանի կամ կառավարվող խնամքի ծրագրի հետ՝ Ձեր փոքր կամ դեռահաս երեխայի՝ զննման և գնահատման համար, եթե կարծում եք, որ նրա մոտ կան վարքային առողջության խնդրի նշաններ: Եթե Ձեր փոքր կամ դեռահաս երեխան բավարարում է Medi-Cal-ի պայմանները, և զննումը կամ գնահատումը ցույց են տալիս, որ անհրաժեշտ են վարքային առողջության ծառայություններ, այդ դեպքում վարչական շրջանը կկազմակերպի, որ Ձեր փոքր կամ դեռահաս երեխան ստանա վարքային առողջության ծառայություններ: Ձեր

կառավարվող խնամքի ծրագիրը կարող է նաև օգնել Ձեզ կապ հաստատել Ձեր վարչական շրջանի հետ, եթե նրանք կարծում են, որ Դուք կամ Ձեր փոքր կամ դեռահաս երեխան կարիք ունեք վարքային առողջության ծառայությունների, որոնց ծախսերը չի փակում կառավարվող խնամքի ծրագիրը: Կան նաև այլ ծառայություններ այն ծնողների համար, ովքեր սթրես են ապրում ծնող լինելու պատճառով:

12 տարեկան և ավելի բարձր տարիքի անչափահասները հնարավոր է, որ կարիք չունենան ծնողների համաձայնության՝ արտահիվանդանոցային (ամբուլատոր, outpatient) հոգեկան առողջության ծառայություններ կամ թմրամիջոցներից կախվածության հետ կապված խնդիրը բուժելու նպատակով բժշկական օգնություն և խորհրդատվություն ստանալու համար: Ծնողների կամ խնամակալների մասնակցությունը պահանջվում է, եթե անչափահասի հետ խորհրդակցելուց հետո ներկա մասնագետը չի որոշում, որ իրենց ներգրավվածությունը տեղին չի լինի:

Ստորև բերված ցանկը կարող է օգնել Ձեզ որոշել, թե արդյոք Ձեր փոքր կամ դեռահաս երեխան օգնության կարիք ունի: Եթե կան մեկից ավելի նշաններ, կամ դրանք տևում են երկար ժամանակ, դա կարող է նշանակել, որ Ձեր փոքր կամ դեռահաս երեխան ունի ավելի լուրջ խնդիր, որը պահանջում է մասնագետի օգնություն: Ահա մի քանի նշաններ, որոնց պետք է ուշադրություն դարձնել.

- Ուշադրություն դարձնելու կամ չշարժվելու մեծ դժվարություններ, որոնք նրանց ֆիզիկական վտանգի են ենթարկում կամ դպրոցում խնդիրներ են առաջանում.
- Խորը անհանգստություններ կամ վախեր, որոնք խանգարում են նրանց ամենօրյա գործունեությանը.
- Առանց պատճառի հանկարծակի շատ ուժեղ վախ, որի հետ երբեմն ունենում են սրտի արագ զարկ կամ արագ շնչառություն.
- Շատ տխուր է կամ հեռու է մնում ուրիշներից երկու կամ ավելի շաբաթ, որն առաջացնում է խնդիրներ՝ կապված առօրյա գործողությունների հետ.
- Տրամադրության կտրուկ փոփոխություններ, որոնք խնդիրներ են առաջացնում հարաբերություններում.
- Մեծ փոփոխություններ վարքագծում.
- Չի ուտում, փսխում է կամ քաշն իջեցնելու համար օգտագործում է դեղեր.
- Ալկոհոլի կամ թմրամիջոցների շարունակական օգտագործում.
- Ծանր, անվերահսկելի վարքագիծ, որը կարող է վնասել իրեն կամ ուրիշներին.
- Ինքն իրեն վնասելու կամ սպանելու լուրջ մտադրություն կամ փորձ.
- Կրկնվող կռիվներ, զենքի օգտագործում կամ մեկին վնասելու լուրջ մտադրություն:

## ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ՎԱՐՔԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

### Ինչպե՞ս օգտվեմ վարքային առողջության ծառայություններից

Եթե կարծում եք, որ Ձեզ անհրաժեշտ են վարքային առողջության ծառայություններ, օրինակ՝ հոգեկան առողջության ծառայություններ և/կամ թմրանյութերից կախվածությանն առնչվող ծառայություններ, կարող եք գանգահարել Ձեր վարչական շրջան՝ օգտագործելով այս ձեռնարկի շապիկին կապակցված հեռախոսահամարը: Շրջանի հետ կապ հաստատելուց հետո Ձեզ կզննեն, և գնահատման համար կնշանակվի ժամադրություն:

Դուք կարող եք նաև վարքային առողջության ծառայություններ խնդրել Ձեր կառավարվող ինսամբի ծրագրից, եթե այդպիսի ծրագրի անդամ եք: Եթե կառավարվող ինսամբի ծրագիրը որոշի, որ Դուք համապատասխանում եք վարքային առողջության ծառայությունների ստանալու չափանիշներին, ապա կառավարվող ինսամբի ծրագիրը կօգնի Ձեզ քննություն անցնել՝ Ձեր վարչական շրջանի միջոցով վարքային առողջության ծառայություններ ստանալու համար: Ի վերջո վարքային առողջության ծառայություններ ստանալու համար սխալ դուռ չկա: Դուք նույնիսկ կարող եք վարքային առողջության ծառայություններ ստանալ Ձեր կառավարվող ինսամբի ծրագրի միջոցով՝ ի հավելումս վարքային առողջության այն ծառայությունների, որոնք ստանում եք Ձեր վարչական շրջանի միջոցով: Դուք կարող եք օգտվել այս ծառայություններից Ձեր վարքային առողջության մատակարարի միջոցով, եթե Ձեր մատակարարը որոշի, որ ծառայությունները բժշկական տեսանկյունից Ձեզ համար պատշաճ են, և այդ ծառայությունները համակարգված են ու չեն կրկնվում:

Բացի այդ, հիշեք հետևյալը.

- Ձեզ վարչական շրջանի վարքային առողջության ծառայություններ կարող է ուղղորդել այլ անձ կամ կազմակերպություն՝ ներառյալ Ձեր ընտանեկան բժիշկը, դպրոցը, ընտանիքի անդամը, ինսամակալը, Ձեր կառավարվող ինսամբի ծրագիրը կամ վարչական շրջանի մեկ այլ գործակալություն: Եթե հրատապ չէ, սովորաբար Ձեր բժշկին կամ կառավարվող ինսամբի ծրագրին անհրաժեշտ է Ձեր համաձայնությունը կամ երեխայի ծնողի կամ ինսամոդի թույլտվությունը՝ անմիջապես վարչական շրջան ուղղորդելու համար:
- Ձեր վարչական շրջանը կարող է չվերծել նախնական գնահատում կատարելու ինդիանքը՝ որոշելու համար, թե արդյոք Դուք բավարարում եք վարքային առողջության ծառայություններ ստանալու չափանիշները:
- Վարքային առողջության ծառայությունները կարող են տրամադրվել վարչական

շրջանի կամ այլ մատակարարների կողմից, որոնց հետ վարչական շրջանը պայմանագիր է կնքել (օրինակ՝ կլինիկաներ, բուժման կենտրոններ, համայնքային կազմակերպություններ կամ անհատ մատակարարներ):

### **Որտե՞ղ կարող եմ ստանալ վարքային առողջության ծառայություններ**

Դուք կարող եք վարքային առողջության ծառայություններ ստանալ այն վարչական շրջանում, որտեղ Դուք ապրում եք, և անհրաժեշտության դեպքում՝ Ձեր շրջանից դուրս: Յուրաքանչյուր վարչական շրջան ունի վարքային առողջության ծառայություններ երեխաների, պատանիների, մեծահասակների և տարեցների համար: Եթե Դուք 21 տարեկանից փոքր եք, ապա իրավասու եք ունենալ լրացուցիչ ապահովագրություն և նպաստներ՝ «Վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում»-ի շրջանակներում: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս այս ձեռնարկի «Վաղ և պարբերական զննում, ախտորոշում և բուժում» բաժինը:

Ձեր վարչական շրջանը կօգնի Ձեզ գտնել մատակարար, ով կարող է Ձեզ համար ապահովել անհրաժեշտ բուժօգնությունը: Վարչական շրջանը պետք է Ձեզ ուղղորդի Ձեր տանն ամենամոտ մատակարարի կամ ժամանակի կամ հեռավորության չափանիշներին համապատասխանող մատակարարի մոտ, որը կբավարարի Ձեր կարիքները:

### **Ե՞րբ կարող եմ ստանալ վարքային առողջության ծառայություններ**

Ձեզ համար ծառայություններ նշանակելիս Ձեր վարչական շրջանը պետք է բավարարի ժամադրության ժամանակի չափանիշները: Հոգեկան առողջության ծառայությունների համար վարչական շրջանը պետք է Ձեզ առաջարկի հանդիպում՝

- Հոգեկան առողջության ծրագրով ծառայություններ սկսելու Ձեր ոչ հրատապ խնդրանքից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում.
- 48 ժամվա ընթացքում, եթե Դուք հրատապ իրավիճակի համար պահանջում եք ծառայություններ, որոնց համար անհրաժեշտ չէ նախօրոք տրված թույլտվություն.
- 96 ժամվա ընթացքում, եթե Դուք հրատապ իրավիճակի համար պահանջում եք ծառայություններ, որոնց համար անհրաժեշտ է նախօրոք տրված թույլտվություն.
- Հոգեբույժի հետ հանդիպման Ձեր ոչ հրատապ խնդրանքից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում և
- Նախորդ հանդիպումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ընթացիկ խնդիրներին առնչվող ոչ շտապ հետագա հանդիպումների համար:

Թմրանյութերից կախվածությանն առնչվող ծառայությունների համար վարչական շրջանը Ձեզ պետք է առաջարկի ժամադրություն՝

- Տասը (10) աշխատանքային օրվա ընթացքում՝ ոչ հրատապ պահանջի դեպքում՝ թմրանյութերից կախվածությունների մատակարարի հետ արտահիվանդանոցային (ամբուլատոր, հիվանդանոցում չգիշերելով) և ինտենսիվ արտահիվանդանոցային ծառայություններ սկսելու համար.
- 48 ժամվա ընթացքում, եթե Դուք հրատապ իրավիճակի համար պահանջում եք ծառայություններ, որոնց համար անհրաժեշտ չէ նախօրոք տրված թույլտվություն.
- 96 ժամվա ընթացքում, եթե Դուք հրատապ իրավիճակի համար պահանջում եք ծառայություններ, որոնց համար անհրաժեշտ է նախօրոք տրված թույլտվություն.
- Թմրանյութերից կախվածության բուժման ծրագրի ծառայությունների Ձեր պահանջից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում.
- Հաջորդող ոչ հրատապ հանդիպում 10 օրվա ընթացքում, եթե Դուք բուժման կուրս եք անցնում թմրանյութերից ընթացիկ կախվածության համար, բացառությամբ այն դեպքերի, որոնք որոշում է Ձեզ բուժող մատակարարը:

Սակայն այս ժամանակահատվածները կարող են ավելի երկար լինել, եթե Ձեր մատակարարը որոշի, որ ավելի երկար սպասելու ժամանակը բժշկական տեսանկյունից հարմար է և վնասակար չէ Ձեր առողջության համար: Եթե Ձեզ ասել են, որ Դուք հայտնվել եք սպասողների ցուցակում և կարծում եք, որ այդ ժամանակահատվածը վնասակար է Ձեր առողջության համար, դիմեք Ձեր վարչական շրջանին այս ձեռնարկի շապիկին նշված հեռախոսահամարով: Դուք իրավունք ունեք բողոք ներկայացնել, եթե ժամանակին օգնություն չստանաք: Բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս այս ձեռնարկի «Բողոքի գործընթաց» բաժինը:

### **Որո՞նք են հրատապ ծառայությունները**

Հրատապ ծառայությունները ծառայություններ են այն մարդկանց համար, ում մոտ առաջացել է անսպասելի առողջական խնդիր, այդ թվում՝ հոգեբուժական միջամտություն պահանջող առողջական խնդիր: Հրատապ բժշկական միջամտություն պահանջող խնդրի դեպքում լինում են այնպիսի ծանր ախտանիշներ (հնարավոր է՝ նաև ուժեղ ցավ), որ միջին մարդը կարող է ողջամտորեն ակնկալել, որ ցանկացած պահի կարող է պատահել հետևյալը.

- Անձի (կամ չճանաչված երեխայի) առողջությունը կարող է լրջորեն վնասվել.
- Լուրջ վնաս է հասցնում ձեր մարմնի աշխատանքին.

- Լուրջ վնաս է հասցնում մարմնի ցանկացած օրգանի կամ մասի:

Անհետաձգելի հոգեբուժական միջամտություն պահանջող առողջական խնդիրն առաջանում է, երբ միջին մարդը կարծում է, որ ինչ-որ մեկը՝

- Ներկայումս վտանգ է ներկայացնում իր կամ մեկ այլ անձի համար՝ հոգեկան առողջության խնդրի կամ հոգեկան առողջության կասկածվող խնդրի պատճառով.
- Չի կարողանում անմիջապես ապահովել իր կարիքները, ինչպիսիք են՝ սնունդը, հագուստը, կացարանը, անձնական անվտանգությունը, կամ ստանալ անհրաժեշտ բժշկական օգնություն՝ հոգեկան առողջության խնդրի կամ հոգեկան առողջության կասկածվող խնդրի և/կամ թմրանյութերի չարաշահման ծանր խնդրի պատճառով:

Հրատապ ծառայությունները Medi-Cal անդամների համար վճարված են օրական 24 ժամ՝ շաբաթական յոթ օր: Հրատապ ծառայությունների համար նախօրոք թույլտվություն չի պահանջվում: Medi-Cal ծրագիրը կվճարի հրատապ դեպքերի համար, անկախ այն հանգամանքից՝ վիճակի պատճառը ֆիզիկական, թե հոգեկան առողջական խնդիրներն են (մտքեր, զգացմունքներ, վարքագծեր, որոնք տառապանքի և/կամ վատ հետևանքներով գործողությունների պատճառ են դառնում իրենց կամ ուրիշների համար): Եթե Դուք գրանցված եք Medi-Cal-ում, Դուք չեք ստանա հաշիվ՝ վճարելու շտապ օգնության բաժին գնալու համար, նույնիսկ եթե պարզվի, որ դա վտանգավոր իրավիճակ չէր: Եթե կարծում եք, որ վտանգավոր վիճակում եք, օգնության համար զանգահարեք 911 կամ դիմեք ցանկացած հիվանդանոց կամ այլ հաստատություն:

**Ո՞վ է որոշում, թե որ ծառայությունները ես պետք է ստանամ**

Բոլորդ՝ Դուք, Ձեր մատակարարը և վարչական շրջանը, մասնակցում եք որոշելուն, թե ինչ ծառայություններ պետք է ստանաք: Վարքային առողջության մասնագետը կխոսի Ձեզ հետ և կօգնի որոշել, թե ինչպիսի ծառայություններ են անհրաժեշտ:

Օգնություն խնդրելու համար Դուք կարիք չունեք իմանալու, թե արդյոք ունեք վարքային առողջության ախտորոշում կամ վարքային առողջության հատուկ խնդիր: Դուք կկարողանաք ստանալ որոշ ծառայություններ, մինչ Ձեր մատակարարը կավարտի գնահատումը:

Եթե 21 տարեկանից փոքր եք, ապա Դուք նույնպես կարող եք օգտվել վարքային առողջության ծառայություններից, եթե ունեք վարքային առողջության խնդիր տրավմայի, երեխաների բարեկեցության համակարգում լինելու, անչափահասների

արդարադատության հետ խնդիրներ ունենալու կամ անօթևանության պատճառով: Բացի այդ, եթե 21 տարեկանից փոքր եք, վարչական շրջանը պետք է տրամադրի բժշկական անհրաժեշտ ծառայություններ՝ Ձեր վարքային առողջական խնդրի հարցում օգնելու համար: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են համարվում այն ծառայությունները, որոնք կայունացնում, բարելավում կամ ավելի տանելի են դարձնում վարքային առողջության խնդիրը կամ օժանդակում են այդ հարցերում:

Որոշ ծառայությունների համար կարող է պահանջվել վարչական շրջանի նախօրոք տրված թույլտվությունը: Ծառայությունները, որոնք նախօրոք պահանջում են թույլտվություն, ներառում են՝ ինտենսիվ տնային ծառայություններ, ցերեկային ինտենսիվ բուժում, ցերեկային վերականգնում, վարքային թերապիայի ծառայություններ, թերապիայի խնամատար տուն և թմրանյութերից կախվածությանն առնչվող բնակարանային ծառայություններ: Դուք կարող եք վարչական շրջանից ավելի շատ տեղեկություններ խնդրել նախնօրոք տրվող թույլտվության գործընթացի վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարեք Ձեր վարչական շրջան այս ձեռնարկի շապիկի հեռախոսահամարով:

Վարչական շրջանի թույլտվության գործընթացը պետք է հետևի հատուկ ժամանակացույցների:

- Թմրամիջոցներից կախվածության ստանդարտ թույլտվության դեպքում վարչական շրջանը պետք է մատակարարի համար Ձեր խնդրանքի վերաբերյալ որոշում կայացնի հիևզ (5) աշխատանքային օրվա ընթացքում:
  - Եթե Դուք կամ Ձեր մատակարարը խնդրեք, կամ եթե վարչական շրջանը համարի, որ Ձեր շահերից է բխում ավելի շատ տեղեկություններ ստանալ Ձեր մատակարարից, ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մինչև ևս 14 օրացուցային օրով: Օրինակ՝ երկարաձգումը կարող է Ձեր շահերից բխել, եթե վարչական շրջանը համարի, որ կարող է հաստատել Ձեր մատակարարի թույլտվության խնդրանքը, եթե վարչական շրջանը լրացուցիչ տեղեկություններ ունենա Ձեր մատակարարից, և ստիպված կլինի մերժել խնդրանքը առանց այդ տեղեկատվության: Եթե վարչական շրջանը երկարաձգի ժամանակահատվածը, այն Ձեզ գրավոր ծանուցում կուղարկի երկարաձգման մասին:
- Հոգեկան առողջության՝ նախօրոք տրվող ստանդարտ թույլտվության համար վարչական շրջանը պետք է որոշում կայացնի Ձեր մատակարարի խնդրանքի հիման վրա այնքան արագ, որքան պահանջում է Ձեր վիճակը, բայց ոչ ավելի ուշ, քան վարչական շրջանի՝ հարցումը ստանալուց հետո հիևզ (5) աշխատանքային օրը:

- Օրինակ՝ եթե ստանդարտ ժամանակացույցին հետևելը կարող է լրջորեն վտանգել Ձեր կյանքը, առողջությունը կամ գործառույթների առավելագույնին հասնելու, դրանք պահպանելու կամ վերականգնելու կարողությունը, Ձեր վարչական շրջանը պետք է շտապի կայացնել թույլտվության որոշումը և ծանուցում տրամադրի՝ հիմնվելով Ձեր առողջական վիճակի հետ կապված ժամկետի վրա, որն ավելի ուշ չէ, քան ծառայության խնդրանք ստանալուց 72 ժամ հետոն: Ձեր վարչական շրջանը կարող է Ձեր խնդրանքը ստանալուց հետո երկարացնել ժամկետը մինչև լրացուցիչ 14 օրացուցային օրով, եթե Դուք կամ Ձեր մատակարարը խնդրեք երկարաձգում, կամ եթե վարչական շրջանը հիմնավորի, թե ինչու է երկարաձգումը բխում Ձեր լավագույն շահերից:

Երկու դեպքում էլ, եթե վարչական շրջանը երկարաձգի մատակարարի թույլտվության խնդրանքի ժամկետը, վարչական շրջանը Ձեզ գրավոր ծանուցում կուղարկի երկարացման մասին: Եթե վարչական շրջանը նշված ժամկետներում որոշում չի կայացնում կամ մերժում, հետաձգում, կրճատում կամ դադարեցնում է պահանջվող ծառայությունները, վարչական շրջանը պետք է Ձեզ ուղարկի «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցում» (Notice of Adverse Benefit Determination), որում ասվում է, որ ծառայությունները մերժվում, հետաձգվում, կրճատվում կամ դադարեցվում են, ինչպես նաև տեղեկացնում է Ձեզ, որ Դուք կարող եք բողոքարկել, և տրամադրում է տեղեկություններ այն մասին, թե ինչպես բողոքարկել:

Դուք կարող եք վարչական շրջանից ավելի շատ տեղեկություններ խնդրել իր թույլտվության գործընթացի մասին:

Եթե համաձայն չեք վարչական շրջանի որոշման հետ թույլտվության գործընթացի վերաբերյալ, կարող եք բողոքարկել: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս այս ձեռնարկի «Խնդրի լուծում» բաժինը:

### **Ի՞նչ է բժշկական անհրաժեշտությունը**

Ձեր ստացած ծառայությունները պետք է լինեն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ և կլինիկապես համապատասխան՝ Ձեր խնդիրը լուծելու համար: 21 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամների համար ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, երբ այն ողջամիտ և անհրաժեշտ է Ձեր կյանքը պահպանելու, նշանակալի հիվանդությունները կամ հաշմանդամությունը կանխելու կամ ուժեղ ցավը թեթևացնելու համար:

21 տարեկանից փոքր անդամների համար ծառայությունը համարվում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, եթե այն ուղղում, կայունացնում, բարելավում է կամ ավելի տանելի է դարձնում վարքային առողջության խնդիրը կամ օժանդակում է այդ հարցերում: Ծառայությունները, որոնք կայունացնում, բարելավում կամ ավելի տանելի են դարձնում վարքային առողջության խնդիրը կամ օժանդակում են այդ հարցերում, համարվում են բժշկական տեսանկյունից անհրաժեշտ և ապահովագրված են որպես «Վաղ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման» ծառայություններ:

**Ինչպե՞ս կարող եմ ստանալ հոգեկան առողջության այլ ծառայություններ, որոնց ծախսերը չի փակում վարչական շրջանը**

Եթե Դուք գրանցված եք կառավարվող խնամքի ծրագրում, Ձեր կառավարվող խնամքի ծրագրի միջոցով Ձեզ հասանելի են հոգեկան առողջության հետևյալ արտահիվանդանոցային (ամբուլատոր, հիվանդանոցում չմնալով) ծառայությունները.

- Հոգեկան առողջության գնահատում և բուժում՝ ներառյալ անհատական, խմբային և ընտանեկան թերապիա.
- Հոգեբանական և նյարդահոգեբանական թեստավորում, երբ ցուցված է բժշկի կողմից՝ հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար.
- Արտահիվանդանոցային ծառայություններ՝ դեղատոմսով տրվող դեղերի մոնիտորինգի համար.
- Հոգեբուժական խորհրդատվություն:

Վերոնշյալ ծառայություններից որևէ մեկը ստանալու համար անմիջապես զանգահարեք կառավարվող խնամքի Ձեր համակարգ: Եթե Դուք կառավարվող խնամքի ծրագրում չեք, հնարավոր է, որ կարողանաք այս ծառայությունները ստանալ առանձին մատակարարներից և կլինիկաներում, որոնք ընդունում են Medi-Cal: Վարչական շրջանը կարող է օգնել Ձեզ գտնել մատակարար կամ կլինիկա:

Ցանկացած դեղատոմս, որն ընդունում է Medi-Cal, կարող է դեղատոմսով տալ հոգեկան առողջության խնդիրները բուժող դեղեր: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Medi-Cal Rx կոչվող դեղատոմս կողմից տրամադրվող դեղատոմսով դեղերի մեծ մասի ծախսերը փակում է Medi-Cal-ի Fee-For-Service («Վճարում ծառայության դիմաց») ծրագիրը, այլ ոչ թե Ձեր կառավարվող խնամքի ծրագիրը:

## **Թմրանյութերից կախվածության ի՞նչ այլ ծառայություններ են հասանելի Կառավարվող խնամքի ծրագրի կամ Medi-Cal-ի Fee-For-Service («Վճարում ծառայության դիմաց») ծրագրի միջոցով**

Կառավարվող խնամքի ծրագրերը պետք է տրամադրեն թմրանյութերից կախվածությանն առնչվող ծառայություններ առողջության առաջնային պահպանման (primary care) հաստատություններում և ծխախոտի, ալկոհոլի և անօրինական թմրամիջոցների համար ստուգումներ, որոնց ծախսերն իրենք փակում են: Դրանք պետք է նաև փակեն հետևյալի ծախսերը՝ հղի անդամների համար թմրանյութերից կախվածությանն առնչվող ծառայություններ, ինչպես նաև ալկոհոլի և թմրամիջոցների օգտագործման գնում, գնահատում, կարճատև միջամտություններ և 11 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամների ուղղորդում բուժման համապատասխան վայրեր: Կառավարվող խնամքի ծրագրերը պետք է տրամադրեն կամ կազմակերպեն ծառայություններ՝ կախվածությունը բուժող դեղերի համար (նաև հայտնի է որպես «Դեղորայքային աջակցությամբ բուժում»), որոնք տրամադրվում են առողջության առաջնային պահպանման հաստատությունում, ստացիոնար հիվանդանոցում, շտապ օգնության բաժանմունքներում և պայմանագրով աշխատող բժշկական այլ հաստատություններում: Կառավարվող խնամքի ծրագրերը պետք է նաև տրամադրեն շտապ օգնության ծառայություններ՝ ներառյալ կամավոր դետոքսիկացիա հիվանդանոցում, որոնք անհրաժեշտ են անդամի վիճակը կայունացնելու համար:

## **Ինչպե՞ս կարող եմ օգտվել Medi-Cal-ի այլ ծառայություններից (առողջության առաջնային պահպանում / Medi-Cal)**

Եթե Դուք ընդգրկված եք կառավարվող խնամքի ծրագրում, վարչական շրջանը պարտավոր է Ձեզ համար մատակարար գտնել: Եթե Դուք գրանցված չեք կառավարվող խնամքի ծրագրում և ունեք «սովորական» Medi-Cal, որը նաև կոչվում է Fee-For-Service Medi-Cal («Medi-Cal-ի վճարում ծառայության դիմաց»), ապա կարող եք գնալ ցանկացած մատակարարի մոտ, որն ընդունում է Medi-Cal: Դուք պետք է տեղեկացնեք Ձեր մատակարարին, որ ունեք Medi-Cal, նախքան ծառայություններ ստանալը: Հակառակ դեպքում Ձեզնից կարող են գումար գանձել այդ ծառայությունների համար: Ընտանիքի պլանավորման ծառայությունների համար Դուք կարող եք դիմել Ձեր կառավարվող խնամքի ծրագրում չգտնվող մատակարարի:

## **Ինչո՞ւ է հնարավոր, որ ինձ անհրաժեշտ լինեն ստացիոնար հիվանդանոցի հոգեբուժական ծառայություններ**

Դուք կարող եք հիվանդանոցում պառկել, եթե ունեք հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ կամ հոգեկան առողջության խնդիրների նշաններ, որոնք չեն կարող

ապահով կերպով բուժվել ավելի ցածր մակարդակում, և հոգեկան առողջության խնդրի կամ հոգեկան առողջության խնդրի ախտանիշների պատճառով Դուք՝

- Վտանգ էք ներկայացնում ինքներդ Ձեզ, ուրիշների կամ գույքի համար.
- Ի վիճակի չեք հոգ տանել Ձեր սննդի, հագուստի կամ կացարանի մասին.
- Ծայրահեղ վտանգ էք ներկայացնում Ձեր ֆիզիկական առողջության համար.
- Հոգեկան առողջության խնդրի պատճառով վերջերս ունեցել էք գործելու կարողության սաստիկ վատթարացում.
- Կարիք ունեք հոգեբուժական նպատակով գնահատման, բուժման կամ այլ բուժօգնության, որը կարող է իրականացվել միայն հիվանդանոցում:

## ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

### **Ինչպե՞ս կարող եմ գտնել մատակարար վարքային առողջության այն ծառայությունների համար, որոնց կարիքը ես ունեմ**

Ձեր վարչական շրջանից պահանջվում է համացանցում տեղադրել ընթացիկ մատակարարների տեղեկատու: Դուք կարող եք գտնել մատակարարների տեղեկատուի հղումը այս ձեռնարկի «Վարչական շրջանի կապի տվյալներ» բաժնում: Բուժօգնությունից օգտվելու հարցում Ձեզ օգնելու համար տեղեկատուն պարունակում է տեղեկություններ այն մասին, թե որտեղ են գտնվում մատակարարները, ինչ ծառայություններ են մատուցում և այլ տեղեկություններ՝ ներառյալ մատակարարների տրամադրած մշակութային և լեզվական ծառայությունների մասին:

Եթե հարցեր ունեք ընթացիկ մատակարարների վերաբերյալ կամ ցանկանում եք մատակարարների թարմացված տեղեկատուն, այցելեք Ձեր վարչական շրջանի կայքը կամ զանգահարեք այս ձեռնարկի շապիկին նշված հեռախոսահամարով: Խնդրելու դեպքում Դուք կարող եք ստանալ մատակարարների ցանկը՝ գրավոր կամ փոստով:

**Նշում:** Վարչական շրջանը կարող է որոշակի սահմանափակումներ դնել մատակարարների Ձեր ընտրության վրա: Երբ Դուք առաջին անգամ սկսեք ստանալ վարքային առողջության ծառայություններ, կարող եք խնդրել, որ Ձեր վարչական շրջանը ընտրության համար նախապես Ձեզ տրամադրի առնվազն երկու մատակարար: Ձեր վարչական շրջանը պետք է նաև թույլ տա Ձեզ փոխել մատակարարներին: Եթե Դուք խնդրում եք փոխել մատակարարներին, վարչական շրջանը պետք է թույլ տա Ձեզ ընտրություն կատարել առնվազն երկու մատակարարների միջև, երբ դա հնարավոր է: Ձեր վարչական շրջանը պատասխանատվություն է կրում ապահովելու համար, որ բուժումը Ձեզ հասանելի լինի ժամանակին, և որ Ձեր մոտակայքում լինեն բավական թվով մատակարարներ, որպեսզի կարողանաք ապահովագրված վարքային առողջության ծառայություններ ստանալ, եթե դրանք Ձեզ անհրաժեշտ լինեն:

Երբեմն վարչական շրջանի հետ պայմանագրով աշխատող մատակարարները նախընտրում են այլևս չտրամադրել վարքային առողջության ծառայություններ, քանի որ հնարավոր է, որ նրանք այլևս պայմանագիր չունենան վարչական շրջանի հետ կամ այլևս չընդունեն Medi-Cal: Երբ դա տեղի ունենա, վարչական շրջանը պետք է բարեխղճորեն ջանքեր գործադրի՝ գրավոր ծանուցելու յուրաքանչյուր անձի, ով ծառայություններ էր ստանում մատակարարից: Պահանջվում է, որ Ձեզ ծանուցում տրվի դադարեցման ուժի մեջ մտնելուց 30 օրացուցային օր առաջ, կամ երբ վարչական շրջանն իմանա, որ մատակարարը դադարելու է աշխատել, 15 օրացուցային օր հետո:

Երբ դա տեղի ունենա, Ձեր վարչական շրջանը պետք է թույլ տա Ձեզ շարունակել ծառայություններ ստանալ շրջանը լքած մատակարարից, եթե Դուք և մատակարարը համաձայն եք: Սա կոչվում է «բուժման շարունակականություն» և բացատրվում է ստորև:

**Նշում:** Ամերիկայի հնդկացի և բնիկ այլասկացի անձինք, ովքեր իրավասու են ստանալ Medi-Cal և բնակվում են այն վարչական շրջաններում, որոնք ընդգրկված են Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգում (Drug Medi-Cal Organized Delivery System), կարող են ծառայություններ ստանալ նաև Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգի՝ Հնդկացիների բժշկական ծառայությունների մատակարարներից:

**Կարո՞ղ եմ շարունակել ստանալ հոգեկան առողջության մասնագիտական ծառայություններ իմ ներկայիս մատակարարից**

Եթե Դուք արդեն ստանում եք հոգեկան առողջության ծառայություններ կառավարվող ինսամքի ծրագրի միջոցով, կարող եք շարունակել ինսամք ստանալ այդ մատակարարից, նույնիսկ եթե հոգեկան առողջության ծառայություններ եք ստանում Ձեր հոգեկան առողջության մատակարարից, քանի դեռ ծառայությունները համաձայնեցված են մատակարարների և ծառայությունների միջև և նույնը չեն:

Բացի այդ, եթե Դուք արդեն ծառայություններ եք ստանում հոգեկան առողջության մեկ այլ ծրագրից, կառավարվող ինսամքի ծրագրից կամ Medi-Cal ընդունող առանձին մատակարարից, կարող եք խնդրել «բուժման շարունակականություն», որպեսզի կարողանաք մնալ Ձեր ներկայիս մատակարարի մոտ մինչև 12 ամիս: Դուք կարող եք պահանջել բուժման շարունակականություն, եթե Ձեզ անհրաժեշտ է մնալ Ձեր ներկայիս մատակարարի մոտ՝ շարունակելու Ձեր ընթացիկ բուժումը, կամ որովհետև նոր մատակարարի մոտ գնալը կարող է լուրջ վնաս հասցնել Ձեր հոգեկան առողջությանը: Ձեր բուժման շարունակականության խնդրանքը կարող է բավարարվել հետևյալը դեպքերում.

- Դուք շարունակական կապ ունեք այն մատակարարի հետ, ում ծառայությունները հայցում եք, և այդ մատակարարի մոտ բուժվել եք վերջին 12 ամիսների ընթացքում:
- Ձեզ անհրաժեշտ է մնալ Ձեր ներկայիս մատակարարի մոտ՝ ընթացիկ բուժումը շարունակելու համար, որպեսզի կանխվի Ձեր առողջության լուրջ վնասումը կամ նվազեցվի հոսպիտալացման կամ հաստատություններում հայտնվելու վտանգը:
- Մատակարարը որակավորված է և բավարարում է Medi-Cal-ի պահանջները:
- Մատակարարը համաձայնում է հոգեկան առողջության ծրագրի պահանջներին,

որոնք առնչվում են հոգեկան առողջության ծրագրի հետ պայմանագիր կնքելուն և ծառայությունների դիմաց վճարելուն:

- Մատակարարը վարչական շրջանին տրամադրում է հարակից փաստաթղթեր, որոնք վերաբերում են Ձեզ անհրաժեշտ ծառայություններին:

### **Կարո՞ղ եմ շարունակել ստանալ թմրանյութերից կախվածությանը վերաբերող ծառայություններ իմ ներկայիս մատակարարից**

Դուք կարող եք խնդրել որոշ ժամանակ շարունակել մնալ ցանցի մեջ չմտնող Ձեր մատակարարի հետ, եթե՝

- Դուք շարունակական կապ ունեք այն մատակարարի հետ, ում ծառայությունները հայցում եք, և այդ մատակարարի ծառայություններից օգտվել եք մինչև վարչական շրջանի՝ Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգին անցնելու օրը:
- Ձեզ անհրաժեշտ է մնալ Ձեր ներկայիս մատակարարի հետ՝ ընթացիկ բուժումը շարունակելու համար, որպեսզի կանխվի Ձեր առողջության լուրջ վնասումը կամ նվազեցվի հոսպիտալացման կամ հաստատություններում հայտնվելու վտանգը:

**ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ՎԱՐՔԱՅԻՆ  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՄ  
«ՍՄԱՐԹ» ՍԱՐՔԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

Դուք կարող եք ձեռք բերել Ձեր վարքային առողջության տվյալները և/կամ գտնել մատակարար՝ օգտվելով համակարգչի, ինտեռնետի կամ շարժական սարքի վրա ներբեռնված հավելվածից: Տեղեկությունները, որոնք պետք է նկատի ունենալ նախքան այս եղանակով տեղեկատվություն ստանալու համար հավելված ընտրելը, կարելի է գտնել Ձեր վարչական շրջանի կայքէջում, որը նշված է այս ձեռնարկի «Վարչական շրջանի կապի տվյալներ» բաժնում:

## **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ**

Եթե Դուք բավարարում են վարքային առողջության ծառայություններից օգտվելու չափանիշները, ապա հետևյալ ծառայությունները հասանելի են Ձեզ՝ ըստ Ձեր կարիքի: Ձեր մատակարարը կաշխատի Ձեզ հետ՝ որոշելու, թե որ ծառայությունները լավագույնս կօգնեն Ձեզ:

### **Հոգեկան առողջության հատուկ ծառայություններ**

#### ***Հոգեկան առողջության ծառայություններ***

- Հոգեկան առողջության ծառայություններն անհատական, խմբային կամ ընտանիքը ներառող ծառայություններ են, որոնք օգնում են հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող մարդկանց զարգացնել առօրյա կյանքին դիմակայելու հմտություններ: Այս ծառայությունները ներառում են նաև աշխատանքներ, որոնք անում է մատակարարը, որպեսզի օգնի ծառայություններն ավելի լավը դարձնել ինչպես ստացող անձի համար: Այս տեսակի աշխատանքները ներառում են գնահատումներ՝ պարզելու, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է ծառայությունը և արդյոք ծառայությունն արդյունավետ է: Ներառում են նաև բուժման ծրագրի մշակում՝ որոշելու Ձեր հոգեկան առողջության բուժման նպատակները և մատուցվող հատուկ ծառայությունները, ինչպես նաև «աջակից հարազատներ», ինչը նշանակում է աշխատել ընտանիքի անդամների և Ձեր կյանքում կարևոր մարդկանց հետ (եթե թույլտվություն եք տալիս)՝ օգնելու Ձեզ բարելավել կամ պահպանել Ձեր առօրյա կյանքով ապրելու ունակությունները:
- Հոգեկան առողջության ծառայությունները կարող են տրամադրվել կլինիկայում կամ մատակարարի գրասենյակում, Ձեր տանը կամ համայնքի այլ միջավայրում, հեռախոսով կամ հեռաառողջապահության կապի միջոցով (որը ներառում է ինչպես միայն ձայնային կապ, այնպես էլ տեսահաղորդակցություն): Վարչական շրջանը և մատակարարը կաշխատեն Ձեզ հետ՝ որոշելու Ձեր ծառայությունների/ժամադրությունների հաճախականությունը:

#### ***Դեղամիջոցների հարցում աջակցության ծրագիր***

- Այս ծառայությունները ներառում են հոգեբուժական դեղերի նշանակում, տնօրինում, տրամադրում և հսկողություն: Ձեր մատակարարը կարող է նաև գիտելիքներ տալ դեղորայքի վերաբերյալ: Այս ծառայությունները կարող են տրամադրվել կլինիկայում, բժշկի գրասենյակում, Ձեր տանը, համայնքային միջավայրում, հեռախոսով կամ հեռաառողջապահության կապի միջոցով (որը

ներառում է ինչպես միայն ձայնային կապ, այնպես էլ տեսահաղորդակցություն):

### **Գործի նպատակային կառավարում**

- Այս ծառայությունն օգնում է անդամներին ստանալ բժշկական, կրթական, սոցիալական, նախամասնագիտական, մասնագիտական, վերականգնողական կամ համայնքային այլ ծառայություններ, երբ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց համար դժվար է լինում ինքնուրույն ստանալ այդ ծառայությունները: Գործերի նպատակային կառավարումը ներառում է հետևյալը, բայց չի սահմանափակվում սրանցով.
  - Ծրագրի մշակում
  - Հաղորդակցություն, համակարգում և ուղղորդում
  - Ծրագրի մատուցման հսկողություն՝ ապահովելու ծառայությունների հասանելիությունը անձին և ծառայությունների մատուցման համակարգը, և
  - Հետևելու անձի առաջընթացին:

### **Ճգնաժամի դեպքում միջամտության ծառայություններ**

- Այս ծառայությունը հասանելի է՝ անդրադառնալու այն հրատապ իրավիճակներին, որոնք ունեն շտապ ուշադրության կարիք: Ճգնաժամի դեպքում միջամտության նպատակն է օգնել համայնքի մարդկանց, որպեսզի նրանք հիվանդանոց գնալու կարիք չունենան: Ճգնաժամի դեպքում միջամտությունը կարող է տևել մինչև ութ ժամ և կարող է իրականացվել կլինիկայում, մատակարարի գրասենյակում, Ձեր տանը կամ համայնքային այլ միջավայրում: Այս ծառայությունները կարող են իրականացվել նաև հեռախոսով կամ հեռաառողջապահության կապի միջոցով:

### **Ճգնաժամի կայունացման ծառայություններ**

- Այս ծառայությունը հասանելի է՝ անդրադառնալու այն վտանգավոր իրավիճակներին, որոնք ունեն անհետաձգելի ուշադրության կարիք: Ճգնաժամի կայունացումը տևում է 24 ժամից պակաս և պետք է տրամադրվի արտոնագիր ունեցող 24-ժամյա առողջապահական հաստատությունում, հիվանդանոցում հիմնված արտահիվանդանոցային (հիվանդանոցում չգիշերելով) ծրագրում կամ այդ ծառայությունները տրամադրելու հավաստագիր ունեցող մատակարարի տարածքում:

### **Չափահասների՝ բնակության վայրում բուժման ծառայություններ**

- Այս ծառայություններն ապահովում են հոգեկան առողջության բուժօգնություն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող այն մարդկանց համար, որոնք ապրում են արտոնագիր ունեցող բնակելի հաստատություններում: Դրանք օգնում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց զարգացնել հմտություններ և նրանց տրամադրում են բուժօգնության ծառայություններ բնակության վայրում: Այս ծառայությունները հասանելի են օրը 24 ժամ՝ շաբաթը յոթ օր: Medi-Cal-ը չի փակում այս հաստատություններում սենյակի կամ ապրելու ծախսերը:

### **Ճգնաժամի դեպքում միջամտության ծառայություններ բնակության վայրում**

- Այս ծառայություններն առաջարկում են հոգեկան առողջության բուժօգնություն և հմտությունների զարգացում այն մարդկանց համար, ովքեր լուրջ հոգեկան կամ հուզական ճգնաժամ են ապրում: Սա այն մարդկանց համար չէ, ովքեր հիվանդանոցային պայմաններում հոգեբուժական օգնության կարիք ունեն: Ծառայությունները հասանելի են արտոնագիր ունեցող հաստատություններում օրը 24 ժամ՝ շաբաթը յոթ օր: Medi-Cal-ը չի փակում այս հաստատությունների սենյակի և ապրելու ծախսերը:

### **Ցերեկային ինտենսիվ բուժման ծրագրեր**

- Սա հոգեկան առողջության բուժման համակարգված ծրագիր է, որը տրամադրվում է մի խումբ մարդկանց, ովքեր այլապես կարող են կարիք ունենալ լինել հիվանդանոցում կամ 24-ժամյա խնամքի այլ հաստատությունում: Ծրագիրը տևում է օրական երեք ժամ: Այն ներառում է թերապիա, հոգեթերապիա և հմտություններ ձևավորող վարժություններ:

### **Վերկանգնողական ցերեկային ծրագրեր**

- Այս ծրագրի նպատակն է օգնել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց սովորել և զարգացնել հաղթահարման ու կյանքի համար կարևոր հմտություններ՝ իրենց ախտանիշներն ավելի լավ կառավարելու համար: Այս ծրագիրը տևում է օրական առնվազն երեք ժամ: Այն ներառում է թերապիա և հմտություններ ձևավորող վարժություններ:

### **Հոգեբուժական ստացիոնար (հիվանդանոցում գիշերելով) ծառայություններ հիվանդանոցում**

- Սրանք ծառայություններ են, որոնք մատուցվում են արտոնագիր ունեցող հոգեբուժարաններում: Արտոնագիր ունեցող հոգեկան առողջության

մասնագետը որոշում է, թե արդյոք անձն իր հոգեկան առողջության խնդրի պատճառով կարիք ունի ինտենսիվ շուրջօրյա բուժման: Եթե մասնագետը որոշի, որ անդամին անհրաժեշտ է շուրջօրյա բուժում, վերջինս պետք է մնա հիվանդանոցում օրը 24 ժամ:

### **Հոգեբուժական ծառայություններ առողջապահական հաստատություններում**

- Այս ծառայություններն առաջարկվում են արտոնագիր ունեցող հոգեբուժական հաստատություններում, որոնք մասնագիտացած են հոգեկան առողջության լուրջ խնդիրներ ունեցողների 24-ժամյա վերականգնողական բուժման մեջ: Հոգեբուժական առողջապահական հաստատությունները պետք է համաձայնություն ունենան մոտակա հիվանդանոցի կամ կլինիկայի հետ՝ բուժհաստատությունում գտնվող մարդկանց ֆիզիկական առողջության հետ կապված կարիքները հոգալու համար: Հոգեբուժական առողջապահական հաստատությունները կարող են ընդունել և բուժել միայն այն հիվանդներին, ովքեր չունեն ֆիզիկական այնպիսի հիվանդություններ կամ վնասվածքներ, որոնց բուժումը կպահանջի ավելին, քան սովորաբար կարող է արվել արտահիվանդանոցային հիմունքներով:

### **Վարքային թերապիայի ծառայություններ**

Վարքային թերապիայի ծառայություններն ինտենսիվ կարճաժամկետ արտահիվանդանոցային բուժման միջամտություններ են մինչև 21 տարեկան անդամների համար: Այս ծառայությունները հատուկ յուրաքանչյուր անդամի համար մշակվում են առանձին: Այս ծառայությունները ստացող անդամներն ունենում են լուրջ հուզական խանգարումներ, սթրեսային փոփոխություններ կամ կյանքի ճգնաժամ են ապրում և կարիք են ունենում լրացուցիչ կարճաժամկետ հատուկ աջակցության ծառայությունների:

Այս ծառայությունները հոգեկան առողջության մասնագիտացված ծառայության տեսակ են, որոնք հասանելի են վարչական շրջանի միջոցով, եթե Դուք լուրջ հուզական խնդիրներ ունեք: Վարքային թերապիայի ծառայություններից օգտվելու համար Դուք պետք է ստանաք հոգեկան առողջության ծառայություն, լինեք 21 տարեկանից փոքր և ունենաք լիարժեք Medi-Cal:

- Եթե Դուք ապրում եք տանը, վարքային թերապիայի ծառայության աշխատակիցը կարող է անհատապես աշխատել Ձեզ հետ՝ նվազեցնելու վարքագծի ծանր խնդիրները՝ փորձելով Ձեզ հետ պահել ավելի բարձր մակարդակի բուժման անհրաժեշտությունից, օրինակ՝ շատ լուրջ հուզական խնդիրներ ունեցող երեխաների և մինչև 21 տարեկան պատանիների խմբակային տան

անհրաժեշտությունից:

- Եթե Ձեզ տեղավորել են տնից դուրս միջավայրում, վարքային թերապիայի ծառայության աշխատակիցը կարող է աշխատել Ձեզ հետ, որպեսզի կարողանաք վերադառնալ տուն կամ ընտանիքի վրա հիմնված միջավայր, օրինակ՝ ինսամատար տուն:

Վարքային թերապիայի ծառայությունները կօգնեն Ձեզ և Ձեր ընտանիքին, ինսամոդին կամ ինսամակալին սովորել ինդրահարույց վարքագծի լուծման նոր ուղիներ և ավելացնել այն վարքագծերի տեսակները, որոնք թույլ կտան Ձեզ հաջողակ լինել: Դուք, վարքային առողջության ծառայությունների անձնակազմը, Ձեր ընտանիքը, Ձեզ ինսամոդը կամ ինսամակալը միասին կաշխատեք որպես թիմ՝ կարճ ժամանակահատվածում լուծելու ինդրահարույց վարքագիծն այնքան ժամանկ, մինչև որ այլևս ծառայությունների կարիքը չունենաք: Դուք կունենաք վարքային թերապիայի ծառայությունների ծրագիր, որը կնշի, թե ինչ եք անելու Դուք, Ձեր ընտանիքը, ինսամոդը կամ ինսամակալը և վարքային թերապիայի ծառայությունների անձնակազմը, երբ ստանաք այս ծառայությունները: Վարքային թերապիայի ծառայությունների ծրագիրը կներառի նաև ծառայությունների վայրը և ժամանակը: Վարքային թերապիայի ծառայությունների անձնակազմը Ձեզ հետ կարող է աշխատել գրեթե բոլոր այն վայրերում, որտեղ Դուք հնարավոր է, որ օգնության կարիք ունենաք: Սա ներառում է Ձեր տունը, ինսամատարության տունը, դպրոցը, ցերեկային բուժման ծրագրի հաստատությունը և համայնքի այլ տարածքներ:

### ***Ինտենսիվ բուժման համակարգում***

Սա գործի կառավարման նպատակային ծառայություն է, որը հեշտացնում է 21 տարեկանից փոքր շահառուների ծառայությունների գնահատումը, ինսամքի ծրագրումը և ծառայությունների համակարգումը: Այս ծառայությունը նախատեսված է նրանց համար, ովքեր իրավասու են օգտվել Medi-Cal ծառայությունների ամբողջական շրջանակից և ում ուղղորդել են այդ ծառայություններին՝ բժշկական անհրաժեշտության հիման վրա: Այս ծառայությունը տրամադրվում է Զամապարփակ հիմնական գործողությունների մոդելի (Integrated Core Practice Model) սկզբունքներով: Այն ներառում է «Երեխայի և ընտանիքի» թիմի ստեղծումը, որը կօգնի ապահովել առողջ հաղորդակցությամբ հարաբերություններ երեխայի, նրա ընտանիքի և ներգրավված երեխաներին սպասարկող համակարգերի միջև:

«Երեխայի և ընտանիքի» թիմը ներառում է մասնագիտական աջակցություն (օրինակ՝ բուժման համակարգող, մատակարարներ և երեխաներին սպասարկող գործակալությունների գործի կառավարիչներ), բնական աջակցություն (օրինակ՝

ընտանիքի անդամներ, հարևաններ, ընկերներ և հոգևորականներ) և այլ մարդիկ, ովքեր աշխատում են միասին՝ հաճախորդի համար ծրագիր կազմելու և այն իրականացնելու համար: Այս թիմն աջակցում է երեխաներին ու ընտանիքներին և ապահովում, որ նրանք հասնեն իրենց նպատակներին:

Այս ծառայությունը նաև ունի համակարգող, որը՝

- Ապահովում է, որ բժշկական անհրաժեշտ ծառայությունները հասանելի լինեն, համակարգվեն և մատուցվեն ուժեղ կողմերը նկատի ունեցող, անհատականացված, հաճախորդահեն, տվյալ մշակույթին և լեզվին համապատասխան ձևով.
- Ապահովում է, որ ծառայությունները և աջակցությունը հիմնված լինեն երեխայի կարիքների վրա.
- Ստեղծում է միջոց, որպեսզի բոլորը՝ երեխան, ընտանիքը, մատակարարները և մյուսները, աշխատեն միասին.
- Աջակցում է ծնողին/խնամակալին՝ օգնելու բավարարել երեխայի կարիքները.
- Օգնում է ստեղծել «Երեխայի և ընտանիքի» թիմ և տրամադրում է շարունակական աջակցություն.
- Ապահովում է, որ անհրաժեշտության դեպքում երեխային խնամեն երեխաներին սպասարկող այլ համակարգեր:

### ***Տնային ինտենսիվ ծառայություններ***

- Այս ծառայությունները նախատեսված են հատուկ յուրաքանչյուր անդամի համար առանձին: Դրանք ներառում են ուժեղ կողմերի վրա հիմնված միջամտություններ՝ բարելավելու հոգեկան առողջության խնդիրները, որոնք կարող են խանգարել երեխաների/պատանիների գործունեությանը: Այս ծառայությունները նպատակ ունեն օգնելու երեխաներին/պատանիներին ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ՝ տանը և համայնքում ավելի լավ գործելու համար, ինչպես նաև բարելավելու նրանց ընտանիքների կարողությունը՝ օգնելու նրանց դա անել:
- Տնային ինտենսիվ ծառայությունները տրամադրվում են «Երեխայի և ընտանիքի» թիմի կողմից՝ Համապարփակ հիմնական գործողությունների մոդելի շրջանակներում: Դրանք օգտագործում են ընտանիքի ծառայությունների ընդհանուր ծրագիրը: Այս ծառայությունները տրամադրվում են 21 տարեկանից փոքր անդամներին, որոնք իրավասու են օգտվել Medi-Cal-ի ծառայությունների ամբողջական շրջանակից: Այս ծառայությունները ստանալու համար պետք է լինի բժշկական անհրաժեշտության վրա հիմնված ուղեգիր:

### **Թերապիայի խնամատար տուն**

- Թերապիայի խնամատար տան ծառայության մոդելը տրամադրում է կարճաժամկետ, ինտենսիվ և տրավմայի մասին տեղեկությունների վրա հիմնված հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ մինչև 21 տարեկան երեխաներին, ովքեր ունեն բարդ հուզական և վարքային խնդիրները լուծելու կարիք: Այս ծառայությունները նախատեսված են հատուկ յուրաքանչյուր անդամի համար առանձին: Թերապիայի խնամատար տան շրջանակներում երեխաներին տեղավորում են վերապատրաստված, վերահսկվող և աջակցություն ստացող Թերապիայի խնամատար տան ծնողների մոտ:

### **Ծնող-երեխա փոխհարաբերությունների թերապիա (PCIT)**

- Ծնող-երեխա փոխհարաբերությունների թերապիան ծրագիր է, որն օգնում է 2-7 տարեկան բարդ վարք ունեցող երեխաներին, ինչպես նաև օգնում է նրանց ծնողներին կամ խնամողներին սովորել նրանց կառավարելու նոր եղանակներ: Այսպիսի վարքագիծ են գայրույթը կամ կանոններին չհետևելը:
- Ծնող-երեխա փոխհարաբերությունների թերապիայի ժամանակ ծնողը կամ խնամակալը ականջակալներ է կրում, երբ խաղում է իր երեխայի հետ հատուկ խաղասենյակում: Թերապիստը հետևում է մեկ այլ սենյակից կամ տեսանյութով և ականջակալների միջոցով խորհուրդներ է տալիս ծնողին կամ խնամողին: Թերապիստը օգնում է ծնողին կամ խնամողին սովորել, թե ինչպես խրախուսել առողջ վարքագիծը և բարելավել իր հարաբերությունները երեխայի հետ:

### **Արդյունավետ գործող ընտանիքի թերապիա (FFT)**

- Արդյունավետ գործող ընտանիքի թերապիան կարճատև և կենտրոնացված խորհրդատվական ծրագիր է 11-18 տարեկան այն պատանիների և նրանց ընտանիքների համար, ովքեր ունեն բարդ վարքագիծ կամ դժվարանում են կառավարել իրենց հույզերը: Այսպիսի վարքագծերից են կանոնների խախտումը, կռիվը կամ թմրանյութերի օգտագործումը:
- Պատանու անառողջ վարքը բարելավելու համար Արդյունավետ գործող ընտանիքի թերապիան աշխատում է պատանու ընտանիքի և երբեմն նաև նրա աջակցության համակարգի այլ անդամների հետ, օրինակ՝ ուսուցիչների կամ բժիշկների հետ:

### **Բազմահամակարգային թերապիա (MST)**

- Բազմահամակարգային թերապիան ընտանիքը ներառող ծրագիր է 12-17 տարեկան այն պատանիների համար, ովքեր ունեն վարքի հետ կապված լուրջ դժվարություններ: Բազմահամակարգային թերապիան հաճախ կիրառվում է այն

պատանիների համար, ովքեր խնդիրներ են ունեցել օրենքի հետ կամ իրենց վարքի պատճառով կարող են օրենքի հետ բախվելու կամ տնից վտարվելու վտանգի տակ լինել:

- Բազմահամակարգային թերապիան ներառում է ընտանիքի և համայնքի աջակցությունը թերապիայի մեջ, որպեսզի պատանիներին օգնի աշխատել այնպիսի վարքագծերի վրա, ինչպիսիք են օրենքը խախտելը կամ թմրանյութեր օգտագործելը: Բազմահամակարգային թերապիան նաև օգնում է ծնողներին սովորել հմտություններ, որոնք կօգնեն նրանց կառավարել այդ վարքագծերը տանը, իրենց հասակակիցների հետ կամ համայնքային այլ միջավայրերում:
- Բազմահամակարգային թերապիայի միջոցով ծնողներն ու խնամակալները կարող են սովորել, թե ինչպես հաղթահարել իրենց երեխաների կամ դեռահասների հետ կապված դժվարությունները: Նրանք նաև կսովորեն ավելի լավ հաղթահարել տանը, ընկերների հետ կամ իրենց թաղամասում առկա խնդիրները: Ծրագիրը հարգում է տարբեր մշակույթները և կենտրոնանում է ընտանիքներին իրենց տներում և համայնքներում օգնելու վրա: Այն նաև համագործակցում է դպրոցների, ոստիկանության և դատարանների հետ:
- Ընտանիքների հետ հանդիպումների հաճախականությունը ծրագրում կարող է փոխվել: Որոշ ընտանիքներ կարող են պարզապես կարճատև ստուգումների կարիք ունենալ, մինչդեռ մյուսները կարող են հանդիպել երկու ժամով՝ ամեն օր կամ ամեն շաբաթ: Այս օգնությունը սովորաբար տևում է 3-ից 5 ամիս:

### ***Արդարադատության հետ խնդիրներ ունեցողների վերադարձ***

- Առողջապահական ծառայություններ է մատուցում արդարադատության հետ խնդիր ունեցող անդամներին՝ նրանց ազատ արձակվելուց մինչև 90 օր առաջ: Հասանելի ծառայությունների տեսակները ներառում են՝ վերադարձողների գործի կառավարում, վարքային առողջության բժշկական խորհրդատվական ծառայություններ, վիճակակցի (peer) աջակցություն, վարքային առողջության խորհրդատվություն, թերապիա, բուժառուների կրթություն, դեղերին վերաբերող ծառայություններ, ազատման և ազատմանը հաջորդող շրջանի ծրագրում, լաբորատոր և ռադիոլոգիական ծառայություններ, դեղերի մասին տեղեկատվություն, օժանդակության ծառայություններ, ինչպես նաև օգնություն՝ գրանցվելու համապատասխան մատակարարի մոտ, օրինակ՝ «Թմրամիջոցներից կախվածության բուժման» ծրագրում, որպեսզի ազատվելուց հետո շարունակի դեղորայքով օժանդակվող բուժումը: Այս ծառայությունները ստանալու համար անհատները պետք է լինեն Medi-Cal-ի կամ CHIP-ի անդամ, և
  - Եթե 21 տարեկանից փոքր են, գտնվեն անչափահասների / պատանիների ուղղիչ հաստատությունում:

- Եթե չափահաս են, կալանքի տակ լինեն և բավարարեն ծրագրի առողջապահական պահանջներից մեկը:
- Այս ծառայության մասին լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք Ձեր վարչական շրջանի հետ՝ զանգահարելով այս ձեռնարկի շապիկի հեռախոսահամարով:

**Medi-Cal-ի՝ վիճակակցի (peer) աջակցության ծառայություններ (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)**

- Medi-Cal-ի վիճակակցի (peer) աջակցության ծառայությունները համակարգված գործողությունների միջոցով խթանում են ապաքինումը, դիմակայումը, ներգրավվածությունը, սոցիալական շփումը, ինքնաբավությունը, ինքնապաշտպանությունը, բնական աջակցության զարգացումը և ուժեղ կողմերի բացահայտումը: Այս ծառայությունները կարող են տրամադրվել Ձեզ կամ Ձեր՝ կարևոր աջակցության նշանակված անձին (անձերին), և Դուք կարող եք այդ ծառայությունները ստանալ հոգեկան առողջության այլ ծառայությունների հետ միաժամանակ կամ երբ օգտվում եք Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգից: Medi-Cal-ի վիճակակցի աջակցության ծառայությունների ոլորտում վիճակակցի աջակցության մասնագետն այն անհատն է, ով վարքային առողջության կամ թմրամիջոցների օգտագործման խնդիրների անձնական փորձ ունի և գտնվում է ապաքինման փուլում, ով կատարել է վարչական շրջանի՝ Նահանգի կողմից հաստատված հավաստագրման ծրագրի պահանջները. այս անձը տրամադրում է այս ծառայությունները վարքային առողջության մի մասնագետի ղեկավարությամբ, ով ունի արտոնագիր, թույլտվություն (waivered) կամ գրանցված է Նահանգում:
- Medi-Cal-ի՝ վիճակակցի աջակցության ծառայությունները ներառում են անհատական և խմբային ուսուցում, հմտությունների ձևավորման կրթական խմբեր, տեղեկատվական աղբյուրների հարցում կողմնորոշում, ներգրավվածության ծառայություններ՝ Ձեզ խրախուսելու մասնակցել վարքային առողջության բուժմանը և թերապիայի գործողություններին, օրինակ՝ ինքնապաշտպանության խթանմանը:
- Մինչև 21 տարեկան անդամները հնարավոր է, որ իրավասու լինեն օգտվել «Վաղ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման» ծառայություններից՝ անկախ այն հանգամանքից, թե որ վարչական շրջանում են ապրում:
- Medi-Cal-ի՝ վիճակակցի աջակցության ծառայություններ տրամադրվել կամընտրական է մասնակից վարչական շրջանների համար: Պարզելու համար, թե արդյոք Ձեր վարչական շրջանը տրամադրում է այս ծառայությունը, ստուգեք

«Լրացուցիչ տեղեկություններ Ձեր շրջանի մասին» բաժինը, որը գտնվում է այս ձեռնարկի վերջում:

### **Ճգնաժամային դեպքերի շարժական ծառայություններ**

- Հասանելի են ճգնաժամային դեպքերի համար շարժական ծառայություններ, եթե Դուք հոգեկան առողջության ճգնաժամ եք ապրում:
- Ճգնաժամային դեպքերի շարժական ծառայությունները տրամադրվում են առողջապահական մատակարարների կողմից այն վայրում, որտեղ Դուք ճգնաժամ եք ապրում՝ ներառյալ Ձեր տանը, աշխատավայրում, դպրոցում կամ համայնքային այլ վայրերում, բացառությամբ հիվանդանոցի կամ նմանատիպ հաստատությունների: Ճգնաժամային շարժական ծառայությունները հասանելի են օրը 24 ժամ՝ շաբաթը 7 օր և տարին 365 օր:
- Ճգնաժամային դեպքերի շարժական ծառայությունները ներառում են արագ արձագանքում, անհատական գնահատում և համայնքի վրա հիմնված կայունացում: Եթե Ձեզ անհրաժեշտ է լրացուցիչ բժշկական խնամք, ապա ճգնաժամային շարժական ծառայությունների մատակարարները նաև կուղղորդեն կամ Ձեզ կծանուղացնեն այլ ծառայությունների և գործը կփոխանցեն նրանց:

### **Հետևողական խնամք համայնքում (ACT) (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)**

- «Հետևողական խնամք համայնքում» ծրագիրը ծառայություն է, որն օգնում է լուրջ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց: Այս ծառայության կարիքն ունեցող մարդիկ սովորաբար եղել են հիվանդանոցում, այցելել են շտապօգնության բաժին, մնացել են բուժման կենտրոններում և/կամ խնդիրներ են ունեցել օրենքի հետ: Նրանք կարող են նաև անօթևան լինել կամ չկարողանալ օգնություն ստանալ սովորական կլինիկաներից:
- «Հետևողական խնամք համայնքում» ծրագիրը հարմարեցնում է ծառայությունները յուրաքանչյուր մարդու և նրա կարիքներին: Նպատակն է օգնել մարդկանց ավելի լավ զգալ և սովորել, թե ինչպես ապրել իրենց համայնքում: Տարբեր մասնագետներից բաղկացած թիմը համատեղ աշխատում է՝ ապահովելու բոլոր տեսակի աջակցությունները և բուժումը: Այս թիմը օգնում է մարդկանց հաղթահարել իրենց հոգեկան առողջության հետ կապված խնդիրները, սովորեցնում է նրանց կարևոր կենսական հմտություններ, համակարգում է նրանց խնամքը և աջակցություն է ցուցաբերում համայնքում: Ընդհանուր նպատակն է օգնել յուրաքանչյուր մարդու բարելավել իր վարքային առողջության խնդիրը և իր համայնքում ապրել ավելի լավ կյանքով:

- «Յետևողական խնամք համայնքում» ծրագրի տրամադրումը մասնակից շրջանների համար կամավոր է: Ստուգեք այս ձեռնարկի վերջում գտնվող «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր վարչական շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանը մատուցում է այս ծառայությունը:

***Յետևողական խնամք համայնքում՝ դատաիրավական խնդիրներ ունեցողների համար (FACT) (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)***

- «Յետևողական խնամք համայնքում՝ դատաիրավական խնդիրներ ունեցողների համար» ծրագիրը (FACT) ծառայություն է, որն օգնում է լուրջ հոգեկան խնդիրներ ունեցող այն մարդկանց, ովքեր նաև խնդիրներ են ունեցել օրենքի հետ: Այն գործում է ճիշտ այնպես, ինչպես «Յետևողական խնամք համայնքում» ծրագիրը (ACT), բայց ունի որոշ լրացուցիչ հնարավորություններ՝ օգնելու բարձր ռիսկի խմբում գտնվող կամ նախկինում դատաիրավական համակարգի հետ առնչություն ունեցած մարդկանց:
- FACT թիմը կազմված է մասնագետներից, ովքեր անցել են հատուկ վերապատրաստում՝ օրենքի հետ խնդիրներ ունեցող մարդկանց կարիքները հասկանալու համար: Նրանք տրամադրում են այնպիսի աջակցություն և բուժում, ինչպիսիք տրամադրում է ACT-ը, օրինակ՝ վարքային առողջության հարցում օգնություն, կյանքի հմտությունների ուսուցում, բժշկական խնամքի համակարգում և համայնքային աջակցություն:
- Նպատակն է օգնել յուրաքանչյուր մարդու իրեն ավելի լավ զգալ, խուսափել խնդիրներից և իր համայնքում ապրել ավելի առողջ կյանքով:
- Մասնակից շրջանների համար FACT-ի տրամադրումը կամավոր է: Ստուգեք այս ձեռնարկի վերջում գտնվող «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր վարչական շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանը մատուցում է այս ծառայությունը:

***Համակարգված մասնագիտացված բուժօգնություն (CSC) փսիխոզի (FEP) առաջին դեպքից հետո (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)***

- Համակարգված մասնագիտացված բուժօգնությունը ծառայություն է, որն օգնում է այն մարդկանց, ովքեր առաջին անգամ են հոգեբանական խանգարում՝ փսիխոզ ունենում: Հոգեկան խանգարման ախտանիշները բազմաթիվ են, այդ թվում՝ տեսնել կամ լսել այնպիսի բաներ, որոնք մյուս մարդիկ չեն տեսնում կամ լսում: Համակարգված մասնագիտացված բուժօգնությունը հոգեկան խանգարման վաղ փուլերում ապահովում է արագ և համակցված աջակցություն, որը օգնում է կանխել հիվանդանոցում մնալը, շտապ օգնության բաժին այցները, բուժման կենտրոններում ժամանակ անցկացնելը, օրենքի հետ խնդիրները, թմրանյութեր

օգտագործելը և անօթևանությունը:

- Համակարգված մասնագիտացված բուժօգնությունը կենտրոնանում է յուրաքանչյուր մարդու և նրա կարիքների վրա: Տարբեր մասնագետներից բաղկացած թիմը համատեղ աշխատում է ամեն տեսակի օգնություն տրամադրելու համար: Նրանք օգնում են հոգեկան առողջության բուժման հարցում, սովորեցնում են կյանքի համար կարևոր հմտություններ, համակարգում են բուժխնամքը և աջակցություն են ցուցաբերում համայնքում: Նպատակն է օգնել յուրաքանչյուր մարդու իրեն ավելի լավ զգալ, խուսափել խնդիրներից և իր համայնքում ապրել ավելի առողջ կյանքով:
- Մասնակից շրջանների համար առաջին փսիխոզից հետո համակարգված մասնագիտացված բուժօգնությունը տրամադրումը կամավոր է: Ստուգեք այս ձեռնարկի վերջում գտնվող «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր վարչական շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանը մատուցում է այս ծառայությունը:

### **«Խմբակ-տների» ծառայություններ (Clubhouse Services) (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)**

- Խմբակ-տները հատուկ վայրեր են, որոնք օգնում են մարդկանց վերացնել վարքային առողջության խնդիրները: Դրանք կենտրոնանում են մարդկանց ուժեղ կողմերի վրա և ստեղծում են աջակից համայնք:
- Խմբակ-տներում մարդիկ կարող են աշխատանք գտնել, ընկերներ ձեռք բերել, նոր բաներ սովորել և զարգացնել հմտություններ՝ իրենց առողջությունն ու բարեկեցությունը բարելավելու համար: Մարդիկ նաև աշխատում են խմբակ-տների աշխատակիցների հետ միասին՝ խմբակ-տների ընդհանուր կարիքները հոգալու համար, օրինակ՝ ճաշ պատրաստելով խմբակ-տան մյուս անդամների համար: Նպատակն է օգնել բոլորին լինել համայնքի անդամ, խրախուսել մյուսներին հասնել իրենց նպատակներին և բարելավել իրենց կյանքի ընդհանուր որակը:
- Մասնակից շրջանների համար Խմբակ-տների ծառայությունների տրամադրումը կամավոր է: Ստուգեք այս ձեռնարկի վերջում գտնվող Լրացուցիչ տեղեկություններ Ձեր վարչական շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանը մատուցում է այս ծառայությունը:

### **Համայնքային առողջապահության աշխատողների (CHW) ընդլայնված ծառայություններ (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)**

- Համայնքային առողջապահության աշխատողները (CHW) առողջապահության աշխատողներ են, որոնք անցել են հատուկ վերապատրաստում և իրենց

համայնքների վստահելի անդամներ են:

- Համայնքային առողջապահության աշխատողների ընդլայնված ծառայությունների նպատակն է օգնել կանխել հիվանդությունները, հաշմանդամությունները և այլ առողջական խնդիրներ՝ նախքան դրանց վատթարացումը: Համայնքային առողջապահության աշխատողների ընդլայնված ծառայությունները ներառում են նույն բաժինները ու կիրառում են նույն կանոնները, ինչ սովորական Համայնքային առողջապահության աշխատողների կանխարգելիչ ծառայությունները, բայց դրանք հարմարեցված են այն մարդկանց համար, ովքեր վարքային առողջության համար լրացուցիչ աջակցության կարիք ունեն: Նպատակն է հավելյալ օգնություն ցույց տալ՝ այս անդամներին առողջ և լավ վիճակում պահելու համար:
- Այս ծառայություններից են՝ առողջապահության ուսուցում և վերապատրաստում՝ ներառյալ քրոնիկ կամ վարակիչ հիվանդությունների վերահսկումը և կանխարգելումը, նաև՝ վարքի, նախաձեռնության և հետծննդյան շրջանի, բերանի խոռոչի առողջության հետ կապված խնդիրները, և վնասվածքների կանխարգելումը, ինչպես նաև առողջության խթանումը և ուղղորդումը՝ ներառյալ նպատակների սահմանումը և հիվանդությունների կանխարգելման և կառավարման գործողությունների ծրագրերի մշակումը:
- Մասնակից շրջանների համար Համայնքային առողջապահության աշխատողների ընդլայնված ծառայությունների տրամադրումը կամավոր է: Ստուգեք այս ձեռնարկի վերջում գտնվող «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր վարչական շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանը մատուցում է այս ծառայությունը:

***Օժանդակության վրա հիմնված աշխատանք (Supported Employment) (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)***

- Օժանդակության վրա հիմնված աշխատանքի՝ «Անհատների աշխատանքի տեղավորում և աջակցություն»(IPS) մոդելը ծառայություն է, որն օգնում է լուրջ վարքային առողջության կարիք ունեցող մարդկանց գտնել և պահպանել մրցունակ աշխատանք իրենց համայնքում:
- Մասնակցելով Օժանդակության վրա հիմնված աշխատանքի՝ «Անհատների աշխատանքի տեղավորման և աջակցության»(IPS) ծրագրին, մարդիկ կարող են ստանալ ավելի լավ աշխատանքային արդյունքներ և նպաստել իրենց վարքային առողջության խնդրից ազատվելուն:
- Այս ծրագիրը նաև նպաստում է ինքնուրույնության, պատկանելության զգացողության, ինչպես նաև ընդհանուր առողջության և բարեկեցության բարելավմանը:

- Մասնակից շրջանների համար «Օժանդակության վրա հիմնված աշխատանքի» տրամադրումը կամավոր է: Ստուգեք այս ձեռնարկի վերջում գտնվող «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր վարչական շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանը մատուցում է այս ծառայությունը:

***Հասանելի (In-Reach) ծառայություններ (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)***

- Համայնք փոխադրվելու հասանելի ծառայություններն օգնում են երկար ժամանակ հոգեբուժական հիվանդանոցում կամ հաստատությունում գտնվող կամ այնտեղ երկար ժամանակ մնալու ռիսկի տակ գտնվող մարդկանց: Ծրագիրը համագործակցում է Ձեզ հետ, Ձեր ընտանիքի, հիվանդանոցի կամ հաստատության և աջակցող այլ մարդկանց հետ՝ համայնք վերադառնալու հարցում Ձեզ օգնելու համար: Նպատակն է օգնել Ձեզ խուսափել հոգեբուժարանում կամ բժշկական խնամքի այլ կենտրոններում երկար մնալուց:

***Թմրանյութերից կախվածությունների հետ կապված ծառայություններ***

***Որո՞նք են Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգների ծառայությունները***

Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգերի (Drug Medi-Cal Organized Delivery System) շրջանային ծառայությունները նախատեսված են այն մարդկանց համար, ովքեր ունեն թմրամիջոցների օգտագործման խնդիր, ինչը նշանակում է, որ նրանք կարող են չարաշահել ալկոհոլը կամ այլ թմրանյութեր, կամ այն մարդկանց համար է, ովքեր կարող են հայտնվել թմրանյութերի օգտագործման այնպիսի խնդրի առաջացման վտանգի տակ, որը մանկաբույժը կամ ընդհանուր բժիշկը չի կարող բուժել: Այս ծառայությունները ներառում են նաև աշխատանք, որն անում է մատակարարը, որպեսզի օգնի ծառայություններն ավելի լավ դարձնել խնամք ստացող անձի համար: Սրանց մեջ են մտնում նաև գնահատումները՝ պարզելու՝ թե արդյոք Ձեզ անհրաժեշտ է ծառայությունը, և արդյոք ծառայությունն արդյունավետ է:

Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգերը կարող են ծառայություններ տրամադրել կլինիկայում կամ մատակարարի գրասենյակում, Ձեր տանը կամ համայնքային այլ միջավայրում՝ հեռախոսով կամ հեռաառողջապահության կապի միջոցով (ներառում է և միայն ձայնային, և տեսակապով հաղորդակցություն): Վարչական շրջանը և մատակարարը կաշխատեն Ձեզ հետ՝ որոշելու Ձեր ծառայությունների / ժամադրությունների հաճախականությունը:

**Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միություն (ASAM)**

Վարչական շրջանը և մատակարարը կօգտագործեն Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միության գործիքը՝ գտնելու Ձեզ համար ամենահարմար ծառայությունը: Այս տեսակի ծառայությունները նկարագրվում են որպես «բուժման / խնամքի մակարդակ» և սահմանված են ստորև:

**Ստուգում, գնահատում, կարճատև միջամտություն և բուժման ուղղորդում (Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միություն, մակարդակ 0.5)**

«Ալկոհոլի և թմրանյութերի ստուգում, գնահատում, կարճատև միջամտություն, բուժման ուղղորդում»-ը (SABIRT) Medi-Cal-ի կողմից կազմակերպվող դեղերի առաքման համակարգի նպաստների մեջ չի մտնում: Դա Medi-Cal-ի Fee-for-Service («վճարում ծառայության դիմաց») և Medi-Cal-ի կառավարվող խնամքի առաքման համակարգի մաս է 11 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց համար: Կառավարվող խնամքի ծրագրերը պետք է տրամադրեն թմրանյութերից կախվածությանն առնչվող ապահովագրված ծառայություններ՝ ներառյալ 11 տարեկան և բարձր տարիքի անդամների համար:

**Վաղ միջամտության ծառայություններ**

Վաղ միջամտության ծառայությունները Medi-Cal-ի կողմից կազմակերպվող դեղերի առաքման համակարգի ապահովագրված ծառայություններ են 21 տարեկանից փոքր անդամների համար: 21 տարեկանը չբոլորած յուրաքանչյուր անդամ, ով ստուգվել է, և որոշվել է, որ թմրանյութերից կախվածության խնդիր առաջանալու վտանգը նրա համար մեծ է, կարող է որպես վաղ միջամտության ծառայություն ստանալ ցանկացած ծառայություն, որն ապահովագրված է իբրև արտահիվանդանոցային մակարդակի ծառայություն: Վաղ միջամտության ծառայություններից օգտվելու համար 21 տարեկանից փոքր երեխաներից չի պահանջվում թմրանյութերից կախվածության ախտորոշում:

**Վաղ պարբերական ստուգում, ախտորոշում և բուժում**

21 տարեկանից փոքր անդամները կարող են ստանալ այս ձեռնարկում ավելի վաղ նկարագրված ծառայությունները, ինչպես նաև Medi-Cal-ի այլ ծառայություններ «Վաղ պարբերական ստուգում, ախտորոշում և բուժում» (Early and Periodic Screening, Diagnostic, and Treatment) կոչվող նպաստի միջոցով:

Որպեսզի կարողանա ստանալ «Վաղ պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման» ծառայություններ, անդամը պետք է լինի 21 տարեկանից փոքր և ունենա

լիարժեք Medi-Cal: Այս նպաստը փակում է այն ծառայությունների ծախսերը, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են՝ ուղղելու ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրները կամ օգնելու այդ հարցում: Այն ծառայությունները, որոնք կայունացնում, բարելավում է կամ ավելի տանելի են դարձնում վարքային առողջության խնդիրը կամ օժանդակում են այդ հարցերում, համարվում է, որ օգնում են և ապահովագրված են որպես «Վաղ պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման» ծառայություններ: Վաղ պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման պահանջները, ինչպես նաև թմրանյութերից կախվածության խնդիրների կանխարգելման և վաղ միջամտության նպատակը բավարարելու համար Medi-Cal-ի կողմից կազմակերպվող դեղերի առաքման համակարգի ծառայությունների հասանելիության չափանիշները 21 տարեկանից փոքր անդամների համար տարբեր են և ավելի ճկուն, քան հասանելիության չափանիշները մեծահասակների համար:

Եթե հարցեր ունեք այս ծառայությունների մասին, խնդրում ենք զանգահարել վարչական շրջան կամ այցելել [Առողջապահական Ծառայությունների Վարչության «Վաղ պարբերական ստուգում, ախտորոշում և բուժում» կայքէջը:](#)

***Արտահիվանդանոցային բուժման ծառայություններ (Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միություն, մակարդակ 1)***

- Անհետաձգելի անհրաժեշտության դեպքում տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ չափահաս անդամներին շաբաթական մինչև 9 ժամ, իսկ 21 տարեկանից փոքր անդամներին՝ շաբաթական մինչև 6 ժամ: Ըստ Ձեր կարիքների՝ Դուք կարող եք ունենալ լրացուցիչ ժամեր: Ծառայությունները կարող են տրամադրվել արտոնագիր ունեցող որևէ մեկի կողմից, օրինակ՝ խորհրդատու՝ անձամբ ներկա լինելով, հեռախոսով կամ հեռաառողջապահության կապով:
- Արտահիվանդանոցային ծառայությունները ներառում են գնահատում, բուժման համակարգում, խորհրդատվություն (անհատական և խմբակային), ընտանեկան թերապիա, դեղորայքին առնչվող ծառայություններ, Կախվածությունը բուժող դեղեր՝ ափիոնատիպ թմրամիջոցներից կախվածությունը բուժելու համար, Կախվածությունը բուժող դեղեր՝ ակոհոլից կախվածությունը և ոչ ափիոնատիպ այլ նյութերից կախվածությունը բուժելու համար, բուժառուների ուսուցում, վերականգնողական ծառայություններ և թմրամիջոցներից կախվածության ճգնաժամերի դեպքում միջամտության ծառայություններ:

***Ինտենսիվ արտահիվանդանոցային ծառայություններ (Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միություն, մակարդակ 2.1)***

- Ինտենսիվ արտահիվանդանոցային ծառայությունները չափահաս անդամներին տրամադրվում են շաբաթական նվազագույնս ինը ժամ և առավելագույնը 19 ժամ, իսկ մինչև 21 տարեկան անդամներին տրամադրվում են շաբաթական նվազագույնը վեց ժամ և առավելագույնը 19 ժամ, երբ բժշկական տեսանկյունից դա անհրաժեշտ է: Ծառայությունները կարող են գերազանցել առավելագույն ժամերը՝ ելնելով առանձին անհատների բժշկական անհրաժեշտությունից: Ծառայությունները հիմնականում խորհրդատվություն և դասեր են կախվածության հետ կապված խնդիրների վերաբերյալ: Ծառայությունները կարող են տրամադրվել արտոնագիր ունեցող մասնագետի կամ հավաստագրված խորհրդատուի կողմից՝ համակարգված միջավայրում: Ինտենսիվ արտահիվանդանոցային բուժման ծառայությունները կարող են տրամադրվել անձամբ ներկա լինելով, հեռաառողջապահության կապի միջոցով կամ հեռախոսով:
- Ինտենսիվ արտահիվանդանոցային ծառայությունները ներառում են նույնը, ինչ արտահիվանդանոցային ծառայությունները: Հիմնական տարբերությունը ծառայությունների ժամերի մեջ է:

***Մասնակի հոսպիտալացում (տարբեր վարչական շրջաններում տարբեր է) (Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միություն, մակարդակ 2.5).***

***Լոս Անջելեսի Շրջանում չի տրամադրվում***

- 21 տարեկանից ցածր տարիքի անդամները կարող են ստանալ այս ծառայությունները «Վաղ պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման» շրջանակներում՝ անկախ այն հանգամանքից, թե որ վարչական շրջանում են ապրում:
- Մասնակի հոսպիտալացման ծառայությունները ներառում են շաբաթական 20 կամ ավելի ժամ ծառայություն՝ ըստ բժշկական անհրաժեշտության: Մասնակի հոսպիտալացման ծրագրերին անմիջականորեն հասանելի են նաև հոգեբուժական, բժշկական և լաբորատոր ծառայություններ և բավարարում են հայտնաբերված կարիքները, որոնք թույլ են տալիս ամենօրյա հսկողություն կամ կառավարում, սակայն կարող են պատշաճ լուծում ստանալ կլինիկայում: Ծառայությունները կարող են մատուցվել անձամբ ներկա լինելով, հեռաառողջապահական կապի միջոցով կամ հեռախոսով:
- Մասնակի հոսպիտալացման ծառայությունները նման են արտահիվանդանոցային ծառայություններին. հիմնական տարբերություններն են՝ ավելի շատ ժամեր և հասանելի հավելյալ բժշկական ծառայություններ:

**Բուժում բնակության վայրում (ենթակա է վարչական շրջանի կողմից թույլտվության) (Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միություն, մակարդակներ 3.1-4.0)**

- «Բնակության վայրում բուժումը» ծրագիր է, որը վերականգնողական ծառայություններ է տրամադրում թմրամիջոցների օգտագործման խանգարման ախտորոշում ունեցող անդամներին, երբ որոշվում է, որ բժշկական առումով դա անհրաժեշտ է: Անդամը պետք է ապրի այդ շինությունում, և պետք է աջակություն տրվի նրա ջանքերին՝ փոխելու, պահպանելու, կիրառելու միջանձնային և ինքնուրույն ապրելու հմտությունները՝ հասանելի դարձնելով համայնքային աջակցության համակարգերը: Ծառայությունների մեծ մասը տրամադրվում է անձամբ ներկա լինելով. սակայն ծառայություններ մատուցելու համար կարող են օգտագործվել նաև հեռաառողջապահության և հեռախոսային կապ, երբ անձը բուժումը ստանում է բնակության վայրում: Մատակարարներն ու բնակիչները միասին աշխատում են՝ պարզելու խոչընդոտները, որոշելու առաջնահերթությունները, սահմանելու նպատակները և լուծելու թմրամիջոցներից կախվածության հետ կապված խնդիրները: Նպատակները ներառում են՝ նյութեր չօգտագործել, կրկին օգտագործելու դրոշմներին նախապատրաստվել, անձնական առողջության և սոցիալական շփման հմտությունների բարելավել և երկարատև խնամքի մեջ ներգրավվել:
- Բնակության վայրում բուժման համար պահանջվում է նախապես տրված թույլտվություն վարչական շրջանի Medi-Cal-ի կողմից կազմակերպվող դեղերի առաքման համակարգի կողմից:
- Բնակարանային ծառայությունները ներառում են ընդունում և գնահատում, բուժման համակարգում, անհատական խորհրդատվություն, խմբային խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, դեղորայքի հետ կապված ծառայություններ, Կախվածությունը բուժող դեղեր՝ ափիոնատիպ թմրամիջոցներից կախվածությունը բուժելու համար, Կախվածությունը բուժող դեղեր՝ ակոհոլից կախվածությունը և ոչ ափիոնատիպ այլ նյութերից կախվածությունը բուժելու համար, բուժառուների ուսուցում, վերականգնողական ծառայություններ և թմրամիջոցներից կախվածության ճգնաժամերի դեպքում միջամտության ծառայություններ:
- Բնակարանային ծառայությունների մատակարարներից պահանջվում է կամ ուղղակիորեն տեղում դեղեր առաջարկել կախվածության բուժման համար, կամ օգնել անդամներին կախվածությունը բուժող դեղորայք ստանալ մեկ այլ տեղ: Բնակարանային ծառայությունների մատակարարները չեն բավարարում այս պահանջը՝ միայն տրամադրելով Կախվածությունը բուժող դեղորայքի մատակարարների կապի տվյալները: Բնակելի ծառայությունների

մատակարարներից պահանջվում է անդամներին առաջարկել և նշանակել դեղեր, որոնց ծախսերը փակում է Medi-Cal-ի կողմից կազմակերպվող դեղերի առաքման համակարգը:

***Հիվանդանոցային՝ ստացիոնար բուժման ծառայություններ (ենթակա է վարչական շրջանի կողմից թույլտվության) (տարբեր վարչական շրջաններում տարբեր է) (Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միություն, մակարդակներ 3.1-4.0)***

- 21 տարեկանից ցածր տարիքի անդամները կարող են իրավասու լինել ստանալ այս ծառայությունները «Վաղ պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման» շրջանակներում՝ անկախ այն հանգամանքից, թե որ վարչական շրջանում են ապրում:
- Հիվանդանոցային ծառայությունները մատուցվում են 24 ժամ գործող միջավայրում, որն ապահովում է մասնագիտորեն ուղղորդված գնահատում, քննում, բժշկական հսկողություն և կախվածության բուժում ստացիոնար (հիվանդանոցում գիշերելով) պայմաններում: Ծառայությունների մեծ մասը տրամադրվում է անձամբ ներկա լինելով. սակայն ծառայություններ մատուցելու համար կարող են օգտագործվել նաև հեռաառողջապահության և հեռախոսային կապեր, երբ անձը բուժումը ստանում է հիվանդանոցում մնալով:
- Ստացիոնար ծառայությունները գերհամակարգված են, և հավանական է, որ բժիշկը, ինչպես նաև գրանցված բուժակները (Registered Nurses), կախվածության հարցերով խորհրդատուները և բժշկական անձնակազմի այլ անդամներ հասանելի լինեն տեղում օրական 24 ժամ: Ստացիոնար ծառայությունները ներառում են գնահատում, բուժման համակարգում, խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, դեղորայքի հետ կապված ծառայություններ, Կախվածությունը բուժող դեղեր՝ ափիոնատիպ թմրամիջոցներից կախվածությունը բուժելու համար, Կախվածությունը բուժող դեղեր՝ ալկոհոլից կախվածությունը և ոչ ափիոնատիպ այլ նյութերից կախվածությունը բուժելու համար, բուժառուների ուսուցում, վերականգնողական ծառայություններ և թմրամիջոցներից կախվածության ճգնաժամերի դեպքում միջամտության ծառայություններ:

***Թմրանյութերից կախվածության բուժման ծրագիր***

- Թմրամիջոցներից կախվածության բուժման ծրագրերը հիվանդանոցից դուրս գործող ծրագրեր են, որոնք դեղեր են տրամադրում թմրանյութերից կախվածությունների բուժման համար, երբ բժիշկը հանձնարարում է դա՝ որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտություն: Թմրանյութերից կախվածության

բուժման ծրագրերը պահանջում են անդամներին տրամադրել դեղեր՝ ներառյալ մեթադոն, բուպրենորֆին, նալոքսոն և դիսուլֆիրամ:

- Անդամին պետք է առաջարկել յուրաքանչյուր օրացույցային ամիս առնվազն 50 րոպե խորհրդատվություն: Այս խորհրդատվական ծառայությունները կարող են տրամադրվել անձամբ ներկա լինելով, հեռաառողջապահության կապի կամ հեռախոսի միջոցով: Թմրանյութերից կախվածության բուժման ծառայությունները ներառում են գնահատում, բուժման համակարգում, խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, դեղորայքի հետ կապված ծառայություններ, Կախվածությունը բուժող դեղեր՝ ափիոնատիպ թմրամիջոցներից կախվածությունը բուժելու համար, Կախվածությունը բուժող դեղեր՝ ալկոհոլից կախվածությունը և ոչ ափիոնատիպ այլ նյութերից կախվածությունը բուժելու համար, բուժառուների ուսուցում, վերականգնողական ծառայություններ և թմրամիջոցներից կախվածության ճգնաժամերի դեպքում միջամտության ծառայություններ:

### ***Չրկանքի (withdrawal) կառավարում***

- Չրկանքի կառավարման ծառայությունները հրատապ են և տրամադրվում են կարճաժամկետ հիմունքներով: Այս ծառայությունները կարող են տրամադրվել նախքան ամբողջական գնահատում կատարելը: Չրկանքի կառավարման ծառայությունները կարող են տրամադրվել արտահիվանդանոցային, բնակարանային կամ հիվանդանոցային պայմաններում:
- Անկախ միջավայրից՝ զրկանքի կառավարման գործընթացի ժամանակ անդամը պետք է հսկողության ենթարկվի: Բնակարանային կամ ստացիոնար (հիվանդանոցային) պայմաններում զրկանքի կառավարման ենթարկվող անդամները պետք է բնակվեն այդ վայրում: Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ զարգացման և վերականգնողական ծառայությունները նշանակվում են արտոնագիր ունեցող բժշկի կամ դեղեր նշանակվող արտոնագիր ունեցողի կողմից:
- Չրկանքի կառավարման ծառայությունները ներառում են գնահատում, բուժման համակարգում, դեղորայքի հետ կապված ծառայություններ, Կախվածությունը բուժող դեղեր՝ ափիոնատիպ թմրամիջոցներից կախվածությունը բուժելու համար, Կախվածությունը բուժող դեղեր՝ ալկոհոլից կախվածությունը և ոչ ափիոնատիպ այլ նյութերից կախվածությունը բուժելու համար, բուժառուների ուսուցում, վերականգնողական ծառայություններ և թմրամիջոցներից կախվածության ճգնաժամային դեպքում միջամտության ծառայություններ:

### **Կախվածությունը բուժող դեղեր**

- Կախվածությունը բուժող դեղերի ծրագրերը հասանելի են բժշկական և ոչ բժշկական պայմաններում: Կախվածությունը բուժող դեղերը ներառում են Սևնդի և Դեղորայքի Վարչության (FDA) կողմից հաստատված բոլոր դեղամիջոցները և կենսաբանական արտադրանքները՝ ավրոհոլից կախվածությունը, ափիոնատիպ նյութերից կախվածությունը և ցանկացած նյութից կախվածությունը բուժելու համար: Անդամներն իրավունք ունեն, որ իրենց առաջարկեն կախվածությունը բուժող դեղեր հաստատությունում կամ հաստատությունից դուրս՝ ուղեգրով: Հաստատված դեղերի ցանկը ներառում է՝
  - Կալցիումային ակամպրոսատ
  - Բուպրենորֆինի հիդրոքլորիդ
  - Ներարկվող Բուպրենորֆին՝ երկարատև ազդեցությամբ (Sublocade)
  - Բուպրենորֆինի/ Նալոքսոնի հիդրոքլորիդ
  - Նալոքսոնի հիդրոքլորիդ
  - Նալտրեքսոն (բերանով ընդունվող)
  - Նալտրեքսոնի միկրոսֆերայի կասեցնող ներարկում (Vivitrol)
  - Լոֆեքսիդինի հիդրոքլորիդ (Lucemyra)
  - Դիսուլֆիրամ (Antabuse)
  - Մեթադոն (առաքվում է Թմրանյութերից կախվածության բուժման ծրագրի միջոցով)
- Կախվածությունը բուժող դեղերը կարող են տրամադրվել հետևյալ ծառայությունների հետ՝ գնահատում, բուժման համակարգում, անհատական խորհրդատվություն, խմբային խորհրդատվություն, ընտանեկան թերապիա, դեղորայքի հետ կապված ծառայություններ, բուժառուների ուսուցման, վերականգնողական ծառայություններ, թմրամիջոցներից կախվածության ճգնաժամային դեպքերի միջամտության ծառայություններ և զրկանքի (withdrawal) կառավարման ծառայություններ: Կախվածությունը բուժող դեղերը կարող են տրամադրվել որպես Medi-Cal կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգի բոլոր ծառայությունների մաս՝ ներառյալ արտահիվանդանոցային բուժման ծառայությունների, ինտենսիվ արտահիվանդանոցային ծառայությունների և բնակության վայրում բուժման ծառայությունների մաս:
- Անդամները կարող են օգտվել «Կախվածությունը բուժող դեղերի» ծրագրից նաև շրջանի Medi-Cal-ի կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգից դուրս: Օրինակ, կախվածության բուժման համար նախատեսված դեղերը, ինչպիսին բուպրենորֆինն է, կարող են նշանակվել առողջության առաջնային պահպանման (primary care) հաստատություններում որոշ նշանակողների

կողմից, որոնք աշխատում են Ձեր կառավարվող ինսամքի ծրագրի հետ և կարող են տրամադրվել կամ ներարկվել դեղատանը:

**Արդարադատության հետ խնդիրներ ունեցողների վերադարձ**

- Առողջապահական ծառայություններ է մատուցում արդարադատության հետ խնդիր ունեցող անդամներին՝ նրանց ազատ արձակվելուց մինչև 90 օր առաջ: Հասանելի ծառայությունների տեսակները ներառում են՝ վերադարձողների գործի կառավարում, վարքային առողջության բժշկական խորհրդատվական ծառայություններ, վիճակակցի (peer) աջակցություն, վարքային առողջության խորհրդատվություն, թերապիա, բուժառուների կրթություն, դեղերին վերաբերող ծառայություններ, ազատման և ազատմանը հաջորդող շրջանի ծրագրում, լաբորատոր և ռադիոլոգիական ծառայություններ, դեղերի մասին տեղեկատվություն, օժանդակող ծառայություններ, ինպես նաև օգնություն՝ գրանցվելու համապատասխան մատակարարի մոտ, օրինակ՝ Թմրամիջոցներից կախվածության բուժման ծրագրում, որպեսզի ազատվելուց հետո շարունակի Դեղորայքով օժանդակվող բուժումը: Այս ծառայությունները ստանալու համար անհատները պետք է լինեն Medi-Cal-ի կամ CHIP-ի անդամ, և
  - Եթե 21 տարեկանից փոքր են, գտնվեն անչափահասների / պատանիների ուղղիչ հաստատությունում:
  - Եթե չափահաս են, կալանքի տակ լինեն և բավարարեն ծրագրի առողջապահական պահանջներից մեկը:
- Այս ծառայության մասին լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք Ձեր վարչական շրջանի հետ՝ զանգահարելով այս ձեռնարկի շապիկի հեռախոսահամարով:

**Medi-Cal-ի վիճակակցի աջակցության ծառայություններ (տարբեր շրջաններում տարբեր է)**

- Medi-Cal-ի վիճակակցի (peer) աջակցության ծառայությունները համակարգված գործողությունների միջոցով խթանում են ապաքինումը, դիմակայումը, ներգրավվածությունը, սոցիալական շփումը, ինքնաբավությունը, ինքնապաշտպանությունը, բնական աջակցության զարգացումը և ուժեղ կողմերի բացահայտումը: Այս ծառայությունները կարող են տրամադրվել Ձեզ կամ Ձեր՝ կարևոր աջակցության նշանակված անձին (անձերին), և Դուք կարող եք այդ ծառայությունները ստանալ հոգեկան առողջության այլ ծառայությունների հետ միաժամանակ կամ Medi-Cal կողմից կազմակերպված դեղերի առաքման համակարգից օգտվելիս: Medi-Cal-ի վիճակակցի աջակցության ծառայությունների ոլորտում վիճակակցի աջակցության մասնագետն այն

անհատն է, ով վարքային առողջության կամ թմրամիջոցների օգտագործման խնդիրների անձնական փորձ ունի և գտնվում է ապաքինման փուլում, ով կատարել է վարչական շրջանի՝ նահանգի կողմից հաստատված հավաստագրման ծրագրի պահանջները. այս անձը տրամադրում է այս ծառայությունները վարքային առողջության մի մասնագետի ղեկավարությամբ, ով ունի արտոնագիր, թույլտվություն (waivered) կամ գրանցված է նահանգում:

- Medi-Cal-ի վիճակակցի աջակցության ծառայությունները ներառում են անհատական և խմբային ուսուցում, հմտությունների ձևավորման կրթական խմբեր, տեղեկատվական աղբյուրների հարցում կողմնորոշում, ներգրավվածության ծառայություններ՝ Ձեզ խրախուսելու մասնակցել վարքային առողջության բուժմանը և թերապիայի գործողություններին, օրինակ՝ ինքնապաշտպանության խթանմանը:
- Մինչև 21 տարեկան անդամները հնարավոր է, որ իրավասու լինեն օգտվել Վաղ և պարբերական զննման, ախտորոշման և բուժման ծառայություններից՝ անկախ այն հանգամանքից, թե որ վարչական շրջանում են ապրում:
- Medi-Cal-ի վիճակակցի աջակցության ծառայություններ տրամադրելը կամընտրական է մասնակից վարչական շրջանների համար: Պարզելու համար, թե արդյոք Ձեր վարչական շրջանը տրամադրում է այս ծառայությունը, ստուգեք «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր շրջանի մասին» բաժինը, որը գտնվում է այս ձեռնարկի վերջում:

#### **Վերականգնողական ծառայություններ**

- Վերականգնողական ծառայությունները կարող են լինել Ձեր ապաքինման և առողջության կարևոր մասը: Վերականգնողական ծառայությունները կարող են օգնել Ձեզ կապ հաստատել բուժող համայնքի հետ՝ կառավարելու Ձեր առողջությունն ու բուժումը: Հետևաբար, այս ծառայությունն ընդգծում է Ձեր դերը Ձեր առողջությունը կառավարելու, ինքնակառավարման արդյունավետ աջակցության ռազմավարություններ կիրառելու և ներքին ու համայնքային աղբյուրները կազմակերպելու գործում՝ ինքնակառավարման շարունակական աջակցություն ապահովելու համար:
- Դուք կարող եք ստանալ վերականգնողական ծառայություններ՝ հիմնվելով թմրակախության օգտագործումը վերսկսելու վտանգի՝ Ձեր ինքնագնահատման կամ Ձեր մատակարարի գնահատման վրա: Դուք կարող եք նաև վերականգնողական ծառայություններ ստանալ անձամբ ներկա լինելով, հեռաառողջապահության կապով կամ հեռախոսով:
- Վերականգնողական ծառայությունները ներառում են գնահատում, բուժման համակարգում, անհատական խորհրդատվություն, խմբային խորհրդատվություն,

ընտանեկան թերապիա, վերականգնման հսկողություն և թմրանյութերի վերօգտագործումը կանխարգելող բաղադրիչներ:

### ***Բուժման համակարգում***

- Բուժումը համակարգող ծառայությունները բաղկացած են գործողություններից, որոնք ապահովում են թմրանյութերից կախվածության բուժման, հոգեկան առողջության պահպանման և ֆիզիկական բուժման համակարգում, ինչպես նաև ապահովում են կապեր Ձեր առողջությանը նպաստող ծառայությունների և օժանդակություն տրամադրողների հետ: Բուժման համակարգումը կազմակերպվում է բոլոր ծառայությունների համար և կարող է լինել բժշկական կամ ոչ բժշկական միջավայրերում՝ ներառյալ Ձեր համայնքում:
- Բուժումը համակարգող ծառայությունները ներառում են բժշկական և հոգեկան առողջության մատակարարների հետ համաձայնեցում՝ վերահսկելու առողջական խնդիրները, դուրսգրման ծրագրումը և օժանդակ ծառայությունների հետ համաձայնեցումը՝ ներառյալ Ձեզ կապելը համայնքային ծառայությունների հետ, որոնցից են երեխաների խնամքը, փոխադրամիջոցով և բնակարանով ապահովումը. ծրագիրը նաև օժանդակում է այս հարցերում:

### ***Պատահարների կառավարում (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)***

- 21 տարեկանից փոքր անդամները հնարավոր է, որ իրավասու լինեն օգտվել այս ծառայություններից «Վաղ և պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման» շրջանակներում՝ անկախ այն հանգամանքից, թե որ վարչական շրջանում են բնակվում:
- Պատահարների կառավարման ծառայություններ տրամադրելը պարտադիր չէ մասնակից վարչական շրջանների համար: Պարզելու համար, թե արդյոք Ձեր վարչական շրջանը տրամադրում է այս ծառայությունը, տե՛ս «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր շրջանի մասին» բաժինը, որը գտնվում է այս ձեռնարկի վերջում:
- Պատահարների կառավարման ծառայությունները խթանիչների օգտագործման խանգարումների՝ ապացույցների վրա հիմնված բուժումներ են, որոնց ընթացքում իրավասու անդամները մասնակցում են պատահարների համակարգված կառավարման 24-շաբաթյա արտահիվանդանոցային ծառայության գործողություններին, որին հետևում են վեց կամ ավելի ամիս տևողությամբ լրացուցիչ բուժման և վերականգնման աջակցության ծառայություններ՝ առանց խրախուսանքի:

- Պատահարների կառավարման ծառայությունների սկզբնական 12 շաբաթները ներառում են մի շարք խրախուսանքներ՝ բուժման նպատակներին հասնելու համար, հատկապես խթանիչներ (օրինակ՝ կոկաին, ամֆետամին և մետամֆետամին) չօգտագործելու համար: Մասնակիցները պետք է համաձայնեն թմրամիջոցների ստուգման համար մեզի թեստ հանձնել այնքան հաճախ, որքան որոշվում է պատահարների կառավարման ծառայությունների ծրագրով: Խրախուսանքները բաղկացած են դրամական միջոցների համարժեքներից (օրինակ՝ նվեր-քարտեր):
- Պատահարների կառավարման ծառայությունները հասանելի են միայն այն անդամներին, ովքեր ծառայություններ են ստանում ոչ բնակելի միջավայրում, որն աշխատեցնում է մասնակից մատակարարը, և ովքեր անցնում են համապարփակ, անհատականացված բուժման կուրս:

### ***Ճգնաժամային դեպքերի շարժական ծառայություններ***

- Հասանելի են ճգնաժամային դեպքերի համար շարժական ծառայություններ, եթե Դուք հոգեկան առողջության ճգնաժամ եք ապրում:
- Ճգնաժամային դեպքերի շարժական ծառայությունները տրամադրվում են առողջապահական մատակարարների կողմից այն վայրում, որտեղ Դուք ճգնաժամ եք ապրում՝ ներառյալ Ձեր տանը, աշխատավայրում, դպրոցում կամ համայնքային այլ վայրերում, բացառությամբ հիվանդանոցի կամ նմանատիպ հաստատությունների: Ճգնաժամային շարժական ծառայությունները հասանելի են օրը 24 ժամ՝ շաբաթը 7 օր և տարին 365 օր:
- Ճգնաժամային դեպքերի շարժական ծառայությունները ներառում են արագ արձագանքում, անհատական գնահատում և համայնքի վրա հիմնված կայունացում: Եթե Ձեզ անհրաժեշտ է լրացուցիչ բժշկական խնամք, ապա ճգնաժամային շարժական ծառայությունների մատակարարները նաև կուղղորդեն կամ Ձեզ կձանոդացնեն այլ ծառայությունների և գործը կփոխանցեն նրանց:

### ***Առողջապահության ավանդական գործողություններ***

- Ակնկալվում է, որ առողջապահական ավանդական գործողությունները կբարելավեն տվյալ մշակույթին համապատասխան բուժօգնության հասանելիությունը, կնպաստեն այս հաստատությունների՝ իրենց հիվանդներին սպասարկելու կարողությանը, կպահպանեն և կամրապնդեն առողջությունը, կբարելավեն առողջապահության արդյունքները, խնամքի որակն ու փորձառությունը և կնվազեցնեն բուժօգնության հասանելիության առկա անհավասարությունը:

- Առողջապահական ավանդական գործողությունները ներառում են ծառայությունների երկու նոր տեսակ՝ «Ավանդական միջոցներով բուժման» և «Բնական օգնականի» ծառայություններ: «Ավանդական միջոցներով բուժման» ծառայությունները ներառում են երաժշտաթերապիա (օրինակ՝ ավանդական երգ և երաժշտություն, պար, թմբկահարում), հոգևորություն (օրինակ՝ արարողություններ, ծեսեր, բուսական դեղամիջոցներ) և այլ ներառական մոտեցումներ: «Բնական օգնականի» ծառայությունները կարող են օգնել կողմնորոշման, սոցիալ-հոգեբանական հմտությունների ձևավորման, ինքնակառավարման և տրավմայի դեպքում աջակցության հարցերում:
- Այս ծառայության մասին լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատեք ձեր վարչական շրջանի հետ՝ օգտագործելով այս ձեռնարկի շապիկի հեռախոսահամարը:

***Համայնքային առողջապահության աշխատողների (CHW) ընդլայնված ծառայություններ (տարբեր վարչական շրջաններում տարբեր E)***

- Համայնքային առողջապահության աշխատողները (CHW) առողջապահության աշխատողներ են, որոնք անցել են հատուկ վերապատրաստում և իրենց համայնքների վստահելի անդամներ են:
- Համայնքային առողջապահության աշխատողների ընդլայնված ծառայությունների նպատակն է օգնել կանխել հիվանդությունները, հաշմանդամությունները և այլ առողջական խնդիրներ՝ նախքան դրանց վատթարացումը: Համայնքային առողջապահության աշխատողների ընդլայնված ծառայությունները ներառում են նույն բաժինները ու կիրառում են նույն կանոնները, ինչ սովորական Համայնքային առողջապահության աշխատողների կանխարգելիչ ծառայությունները, բայց դրանք հարմարեցված են այն մարդկանց համար, ովքեր վարքային առողջության համար լրացուցիչ աջակցության կարիք ունեն: Նպատակն է հավելյալ օգնություն ցույց տալ՝ այս անդամներին առողջ և լավ վիճակում պահելու համար:
- Այս ծառայություններից են՝ առողջապահության ուսուցում և վերապատրաստում՝ ներառյալ քրոնիկ կամ վարակիչ հիվանդությունների վերահսկումը և կանխարգելումը, նաև՝ վարքի, նախաձեռնության և հետձեռնության շրջանի, բերանի խոռոչի առողջության հետ կապված խնդիրները, և վնասվածքների կանխարգելումը, ինչպես նաև առողջության խթանումը և ուղղորդումը՝ ներառյալ նպատակների սահմանումը և հիվանդությունների կանխարգելման և կառավարման գործողությունների ծրագրերի մշակումը:
- Մասնակից շրջանների համար Համայնքային առողջապահության աշխատողների ընդլայնված ծառայությունների տրամադրումը կամավոր է:

Ստուգեք այս ձեռնարկի վերջում գտնվող «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր վարչական շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանը մատուցում է այս ծառայությունը:

***Օժանդակության վրա հիմնված աշխատանք (Supported Employment) (տարբեր վարչական շրջաններում տարբեր է)***

- Օժանդակության վրա հիմնված աշխատանքի՝ «Անհատների աշխատանքի տեղավորում և աջակցություն»(IPS) մոդելը ծառայություն է, որն օգնում է լուրջ վարքային առողջության կարիք ունեցող մարդկանց գտնել և պահպանել մրցունակ աշխատանք իրենց համայնքում:
- Մասնակցելով Օժանդակության վրա հիմնված աշխատանքի՝ «Անհատների աշխատանքի տեղավորման և աջակցության»(IPS) ծրագրին, մարդիկ կարող են ստանալ ավելի լավ աշխատանքային արդյունքներ և նպաստել իրենց վարքային առողջության խնդրից ազատվելուն:
- Այս ծրագիրը նաև նպաստում է ինքնուրույնության, պատկանելության զգացողության, ինչպես նաև ընդհանուր առողջության և բարեկեցության բարելավմանը:
- Մասնակից շրջանների համար «Օժանդակության վրա հիմնված աշխատանքի» տրամադրումը կամավոր է: Ստուգեք այս ձեռնարկի վերջում գտնվող «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր վարչական շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե արդյոք Ձեր շրջանը մատուցում է այս ծառայությունը:

## ՀԵՌԱԽՈՍՈՎ ԵՎ ՀԵՌԱԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՍԱՆԵԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպեսզի կարողանաք ստանալ վարքային առողջության ծառայություններ, միշտ չէ, որ պահանջվում է Ձեր և Ձեր մատակարարի միջև անձամբ, դեմ առ դեմ շփում: Կախված ծառայության տեսակից՝ Դուք կարող եք ստանալ Ձեր ծառայությունները հեռախոսի կամ հեռաառողջապահության կապի միջոցով: Ձեր մատակարարը պետք է բացատրի Ձեզ ինչպես օգտվել հեռախոսից կամ հեռաառողջապահության կապից և համոզվի, որ Դուք համաձայն եք դրան՝ նախքան հեռախոսի կամ հեռաառողջապահության միջոցով ծառայություններ սկսելը: Նույնիսկ եթե Դուք համաձայն եք ստանալ Ձեր ծառայությունները հեռաառողջապահության կապի կամ հեռախոսի միջոցով, ավելի ուշ կարող եք ընտրել Ձեր ծառայությունները ստանալ անձամբ ներկա լինելով կամ դեմ առ դեմ: Վարքային առողջության ծառայությունների որոշ տեսակներ չեն կարող տրամադրվել միայն հեռաառողջապահության կամ հեռախոսի միջոցով, քանի որ դրանք պահանջում են, որ ծառայության համար Դուք լինեք հատուկ վայրում, օրինակ՝ երբ օգտվում եք բնակության վայրում բուժման ծառայություններից կամ հիվանդանոցային ծառայություններից:

## ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ. ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԲՈՂՈՔ, ԲՈՂՈՔԱՐԿԵԼ ԿԱՄ ՊԱՅԱՆՁԵԼ ՆԱՅԱՆԳԱՅԻՆ ԱՐԴԱՐ ԼՍՈՒՄ

**Ի՞նչ պետք է անեմ, եթե իմ վարչական շրջանն ինձ չի տրամադրում իմ  
ցանկացած ծառայությունները:**

Ձեր վարչական շրջանը պետք է ունենա միջոց, որով Դուք կկարողանաք լուծել  
ցանկացած խնդիր, որը կապված է այն ծառայությունների հետ, որոնք Դուք ցանկանում  
եք ստանալ կամ ստանում եք: Սա կոչվում է խնդրի լուծման գործընթաց և կարող է  
ներառել հետևյալը.

- Բողոքի գործընթաց: Բանավոր կամ գրավոր դժգոհության արտահայտություն  
ցանկացած հարցի վերաբերյալ, որոնք վերաբերում են Ձեր հոգեկան  
առողջության մասնագիտացված ծառայություններին, թմրանյութերից  
կախվածությանն առնչվող ծառայություններին, մատակարարին կամ վարչական  
շրջանին: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս այս ձեռնարկի «Բողոքի  
գործընթաց» բաժինը:
- Բողոքարկման գործընթաց: Բողոքարկումն այն է, երբ Դուք համաձայն չեք  
վարչական շրջանի որոշման հետ՝ փոխելու Ձեր ծառայությունները (օրինակ՝  
մերժում, դադարեցում կամ ծառայությունների կրճատում) կամ չփակելու դրանց  
ծախսերը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս այս ձեռնարկի  
«Բողոքարկման գործընթաց» բաժինը:
- Նահանգային արդար լուծման գործընթաց: Նահանգային արդար լուծմը  
հանդիպում է Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության  
(CDSS) դատավորի հետ, եթե վարչական շրջանը մերժում է Ձեր բողոքարկումը:  
Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս այս ձեռնարկի «Նահանգային արդար  
լուծման» բաժինը:

Բողոք ներկայացնելը, բողոքարկելը կամ նահանգային արդար լուծմ պահանջելը չեն  
օգտագործվի Ձեր դեմ և չեն ազդի Ձեր ստացած ծառայությունների վրա: Բողոք կամ  
բողոքարկում ներկայացնելն օգնում է ստանալ Ձեզ անհրաժեշտ ծառայությունները և  
լուծել Ձեր վարքային առողջության ծառայությունների հետ կապված ցանկացած խնդիր:  
Բողոքներն ու բողոքարկումները նաև օգնում են վարչական շրջանին՝ տալով նրանց այն  
տեղեկությունները, որոնք նրանք կարող են օգտագործել ծառայությունների  
բարելավման համար: Ձեր վարչական շրջանը արդյունքի մասին կտեղեկացնի Ձեզ,  
մատակարարներին և ծնողներին/խնամակալներին, երբ Ձեր բողոքի կամ բողոքարկման  
գործընթացն ավարտվի: Արդար լուծման նահանգային գրասենյակը կտեղեկացնի Ձեզ  
և մատակարարին արդյունքների մասին, երբ նահանգային արդար լուծմն ավարտվի:

**Նշում:** Իմացեք յուրաքանչյուր խնդրի լուծման գործընթացի մասին ստորև:

**Ինձ կարո՞ղ եմ օգնել ներկայացնել բողոքարկում, բողոք կամ նահանգային արդար լսման պահանջ:**

Ձեր վարչական շրջանը կօգնի՝ Ձեզ բացատրելով այս գործընթացները, և պետք է օգնի Ձեզ ներկայացնել բողոք, բողոքարկում կամ նահանգային արդար լսման պահանջ: Վարչական շրջանը կարող է նաև օգնել Ձեզ պարզել՝ արդյոք Դուք բավարարում եք «արագացված բողոքարկման» գործընթացի պահանջները, ինչը նշանակում է, որ այն ավելի արագ կվերանայվի, քանի որ Ձեր առողջությունը, հոգեկան առողջությունը և/կամ կայունությունը վտանգված են: Դուք կարող եք նաև լիազորել մեկ այլ անձի՝ ներառյալ Ձեր մատակարարին կամ փաստաբանին, գործել Ձեր անունից:

Եթե ցանկանում եք օգնություն, դիմեք Ձեր վարչական շրջան՝ զանգահարելով այս ձեռնարկի շապիկին նշված հեռախոսահամարով: Ձեր վարչական շրջանը պետք է Ձեզ ողջամիտ աջակցություն ցուցաբերի բողոքի կամ բողոքարկման ձևաթղթերը լրացնելու և դրանց հետ կապված ընթացակարգային քայլերի հարցում: Սա ներառում է հետևյալը, բայց չի սահմանափակվում այսքանով՝ տրամադրել թարգմանչական ծառայություններ և անվճար հեռախոսահամարներ, որոնք ունեն TTY/TDD և բանավոր թարգմանության հնարավորություններ:

**Եթե Ձեզ անհրաժեշտ է հավելյալ աջակցություն**

*Կապ հաստատեք Առողջապահական Ծառայությունների Վարչության՝ Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) գրասենյակի հետ.*

- Հեռախոս՝ 1-888-452-8609, երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8-ից երեկոյան 5-ը (բացի տոներից):

*ԿԱՍ*

- Էլ նամակ՝ [MMCOmbudsmanOffice@dhcs.ca.gov](mailto:MMCOmbudsmanOffice@dhcs.ca.gov): **Խնդրում ենք նկատի ունենալ.** Էլեկտրոնային նամակները չեն համարվում գաղտնի (խնդրում ենք չներառել անձնական տվյալներ Էլ. նամակում):

Դուք կարող եք նաև անվճար իրավաբանական օգնություն ստանալ Ձեր տեղական իրավաբանական օգնության գրասենյակում կամ այլ խմբերում: Ձեր նահանգային արդար լսումների իրավունքների մասին հարցնելու համար կարող եք կապ հաստատել Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության՝ Հանրության հարցերի և դրանց արձագանքման բաժնի հետ այս հեռախոսահամարով՝ **1-800-952-5253** (TTY-ի համար զանգահարել **1-800-952-8349**):

## **Բողոք**

### ***Ի՞նչ է բողոքը***

Բողոքը (Grievance) Ձեր դժգոհությունն է Ձեր վարքային առողջության ծառայությունների կամ վարչական շրջանի որևէ քայլի վերաբերյալ, որն ընդգրկված չէ բողոքարկման կամ նահանգային արդար լուծման գործընթացում: Սա ներառում է Ձեր խնամքի որակին, Ձեր նկատմամբ անձնակազմի և մատակարարների վերաբերմունքին առնչվող մտահոգությունները, ինչպես նաև Ձեր խնամքին վերաբերող որոշումների հետ անհամաձայնությունը:

### Բողոքի օրինակներ

- Եթե կարծում եք, որ մատակարարը անքաղաքավարի է եղել Ձեր նկատմամբ կամ չի հարգել Ձեր իրավունքները:
- Եթե վարչական շրջանին ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի որոշում կայացնի այն ծառայությունների հաստատման համար, որոնք Ձեր մատակարարը խնդրել է Ձեզ համար, և Դուք համաձայն չեք այս երկարաձգման հետ:
- Եթե Դուք գոհ չեք Ձեր ստացած բուժօգնության որակից կամ Ձեր բուժման ծրագիրը Ձեզ ներկայացնելու ձևից:

### ***Ի՞նչ է բողոքի գործընթացը***

#### Բողոքի գործընթացը`

- Կներառի պարզ քայլեր` Ձեր բողոքը բանավոր կամ գրավոր ներկայացնելու համար.
- Պատճառ չի դառնա, որ Դուք կորցնեք Ձեր իրավունքները կամ ծառայությունները, կամ որ Ձեր մատակարարը Ձեր դեմ վատ տրամադրվի.
- Ձեզ թույլ կտա լիազորել մեկ այլ անձի գործել Ձեր անունից: Դա կարող է լինել մատակարար կամ փաստաբան: Եթե Դուք համաձայն եք, որ մեկ այլ անձ հանդես գա Ձեր անունից, Ձեզնից կարող է պահանջվել ստորագրել թույլտվության ձևաթուղթ, որը Ձեր վարչական շրջանին թույլ կտա տեղեկություններ տրամադրել այդ անձին:
- Կապահովի, որ լիազորված անձը, ով որոշում է կայացնում բողոքի վերաբերյալ, իրավասու լինի որոշումներ կայացնել և ընդգրկված չլինի նախորդ մակարդակներում վերանայման կամ որոշումներ կայացնելու գործում.
- Կորոշի Ձեր վարչական շրջանի, մատակարարի և Ձեր պարտականությունները.

- Կապահովի, որ բողոքի արդյունքները տրամադրվեն պահանջվող ժամկետներում:

***Ե՞րբ կարող եմ բողոք ներկայացնել***

Դուք կարող եք բողոք ներկայացնել ցանկացած ժամանակ, երբ դժգոհ եք Ձեր ստացած բուժումից կամ այլ մտահոգություն ունեք Ձեր վարչական շրջանի վերաբերյալ:

***Ինչպե՞ս կարող եմ բողոք ներկայացնել***

Բողոքի հետ կապված օգնություն ստանալու համար Դուք կարող եք 24/7 անվճար զանգահարել Ձեր վարչական շրջանի շուրջօրյա հասանելիության գծին (Access Line): Բողոքները կարող են ներկայացվել բանավոր կամ գրավոր: Պարտադիր չէ, որ բանավոր բողոքներին հետևի գրավոր բողոքը: Եթե Ձեր բողոքը ներկայացնում եք գրավոր, խնդրում ենք նկատի ունենալ հետևյալը. եթե չունեք ինքնահասցեագրված ծրար, ուղարկեք Ձեր գրավոր բողոքները այս ձեռնարկի շապիկին նշված հասցեով:

***Ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ արդյոք վարչական շրջանը ստացել է իմ բողոքը***

Ձեր վարչական շրջանից պահանջվում է բողոքը ստանալուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում Ձեզ տրամադրել գրավոր նամակ՝ տեղեկացնելու համար, որ Ձեր բողոքը ստացվել է: Բացառություն են այդ դեպքերը, երբ Դուք ընդունում եք, որ հեռախոսով կամ անձամբ ստացած բողոքը բավարարվել է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, և այս դեպքում Դուք կարող եք նամակ չստանալ:

***Ե՞րբ որոշում կկայացվի իմ բողոքի վերաբերյալ***

Ձեր վարչական շրջանը պետք է որոշում կայացնի Ձեր բողոքի վերաբերյալ Ձեր բողոքը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում:

***Ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ արդյոք վարչական շրջանը որոշում կայացրել է իմ բողոքի վերաբերյալ***

Երբ Ձեր բողոքի վերաբերյալ որոշում կայացվի, վարչական շրջանը՝

- Ձեզ կամ Ձեր կողմից լիացրված անձին կուղարկի որոշման մասին գրավոր ծանուցում.
- Ձեզ կամ Ձեր կողմից լիազորված անձին կուղարկի «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցում» (Notice of Adverse Benefit Determination)՝ տեղեկացնելով Ձեզ նահանգային արդար լուծ պահանջելու Ձեր իրավունքի մասին, եթե վարչական շրջանը ժամանակին չի ծանուցում Ձեզ բողոքի վերաբերյալ որոշման մասին.

- Ձեզ կտեղեկացնի նահանգային արդար լսում պահանջելու Ձեր իրավունքի մասին:

Դուք կարող եք չստանալ որոշման մասին գրավոր ծանուցում, եթե Ձեր բողոքը ներկայացվել է հեռախոսով կամ անձամբ, և Դուք ընդունում եք, որ Ձեր հարցը լուծվել է բողոքը ներկայացնելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

**Նշում:** Ձեր վարչական շրջանը պարտավոր է Ձեզ տրամադել «Նպաստի բացասական որոշում» ժամկետի ավարտի օրը: Դուք կարող եք զանգահարել Ձեր վարչական շրջան լրացուցիչ տեղեկությունների համար, եթե չեք ստացել «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցում»:

### ***Կա՞րողոք բողոք ներկայացնելու համար ժամկետ***

Ոչ, Դուք կարող եք բողոք ներկայացնել ցանկացած ժամանակ: Մի՛ հապաղեք խնդիրները ներկայացնել վարչական շրջանի ուշադրությանը: Շրջանը միշտ կաշխատի Ձեզ հետ՝ Ձեր մտահոգությունների համար լուծում գտնելու համար:

### **Բողոքարկում**

Դուք կարող եք բողոքարկել (appeal), երբ համաձայն չեք վարչական շրջանի որոշման հետ՝ կապված վարքային առողջության այն ծառայությունների հետ, որոնք Դուք ներկայումս ստանում եք կամ կցանկանաք ստանալ: Դուք կարող եք պահանջել վերանայել վարչական շրջանի որոշումը՝ օգտվելով՝

- Բողոքարկման ստանդարտ գործընթացից  
ԿԱՄ
- Բողոքարկման արագացված գործընթացից:

**Նշում:** Բողոքարկման երկու տեսակները նման են, սակայն արագացված բողոքարկման համար կան հատուկ պահանջներ, որոնք պետք է բավարարել (տե՛ս ստորև ներկայացված պահանջները):

Բողոքարկում ներկայացնելու համար վարչական շրջանը կօգնի Ձեզ լրացնել ձևերը և ձեռնարկել այլ ընթացակարգային քայլեր, այդ թվում՝ կօգնի գրավոր բողոքարկում պատրաստել, Ձեզ կծանուցի իրենց կայքում ձևաթղթի գտնվելու վայրի մասին կամ Ձեր խնդրանքով Ձեզ կտրամադրի ձևաթուղթը: Վարչական շրջանը նաև խորհուրդ կտա և կօգնի Ձեզ նպաստի բացասական որոշումը բողոքարկելու ժամանակ խնդրել նպաստների շարունակում՝ համաձայն դաշնային կանոնակարգերի:

## **Ի՞նչ է անում բողոքարկման ստանդարտ գործընթացը**

Բողոքարկման ստանդարտ գործընթացը՝

- Ձեզ թույլ կտա բողոքարկել բանավոր կամ գրավոր կերպով.
- Կապահովի, որ բողոքարկումը պատճառ չդառնա, որ Դուք կորցնեք Ձեր իրավունքները կամ ծառայությունները, կամ Ձեր մատակարարը Ձեր դեմ վատ տրամադրվի.
- Ձեզ թույլ կտա լիազորել մեկ այլ անձի (ներառյալ մատակարարին և փաստաբանին) գործել Ձեր անունից: Խնդրում ենք նկատի ունենալ, որ եթե Դուք համաձայն եք, որ մեկ այլ անձ հանդես գա Ձեր անունից, Ձեզնից կարող է պահանջվել ստորագրել թույլտվության ձևաթուղթ՝ լիազորելով վարչական շրջանին տեղեկություններ տրամադրել այդ անձին.
- Կապահովի, որ բողոքարկման ընթացքում Ձեր նպաստները շարունակվեն պահանջվող ժամկետում: Խնդրում ենք նկատի ունենալ. Սա տևում է «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցումը» Ձեզ փոստով ուղարկելու կամ անձամբ հանձնելու օրվանից հետո 10 օր:
- Կապահովի, որ Դուք չվճարեք շարունակվող ծառայությունների համար, քանի դեռ բողոքարկումն ընթացքի մեջ է, և եթե բողոքարկման վերջնական որոշումը հօգուտ վարչական շրջանի՝ «Նպաստի բացասական որոշման» է.
- Կապահովի, որ լիազորված անձը, ով որոշում է կայացնում բողոքի վերաբերյալ, իրավասու լինի որոշումներ կայացնել և ընդգրկված չլինի նախորդ մակարդակներում վերանայման կամ որոշումներ կայացնելու գործում.
- Թույլ կտա Ձեր ներկայացուցչին ծանոթանալ Ձեր գործի՝ ներառյալ բժշկական տվյալների և հարակից այլ փաստաթղթերի հետ.
- Թույլ կտա Ձեզ ողջամիտ հնարավորություն ունենալ անձամբ կամ գրավոր կերպով ներկայացնելու ապացույցներ, ցուցմունքներ և փաստարկներ.
- Թույլ կտա Ձեզ, Ձեր լիազորած անձին կամ մահացած անդամի կալվածքի օրինական ներկայացուցչին ներգրավվել որպես բողոքարկման կողմ.
- Ձեզ կտրամադրի վարչական շրջանի գրավոր հաստատումն այն մասին, որ Ձեր բողոքարկումը գտնվում է վերանայման փուլում.
- Ձեզ կտեղեկացնի Ձեր իրավունքի մասին՝ բողոքարկման գործընթացի ավարտից հետո պահանջել նահանգային արդար լում:

## **Ե՞րբ կարող եմ բողոքարկում ներկայացնել**

Դուք կարող եք Ձեր վարչական շրջանին բողոքարկում ներկայացնել եթե՝

- Վարչական շրջանը կամ պայմանագիր ունեցող մատակարարը որոշում է, որ Դուք չեք համապատասխանում վարքային առողջության ծառայություններից

օգտվելու չափանիշներին.

- Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը Ձեզ խորհուրդ է տալիս վարքային առողջության ծառայություն և Ձեր վարչական շրջանից ինդրում է թույլտվություն, սակայն վարչական շրջանը մերժում է ինդրանքը կամ փոխում է ծառայության տեսակը կամ հաճախականությունը.
- Ձեր մատակարարը վարչական շրջանից պահանջում է թույլտվություն, սակայն վարչական շրջանը պահանջում է ավելի շատ տեղեկություններ և ժամանակին չի ավարտում թույլատրման գործընթացը.
- Ձեր վարչական շրջանը ծառայություններ չի մատուցում համաձայն իր նախապես որոշած ժամանակացույցի.
- Դուք կարծում եք, որ վարչական շրջանը ժամանակին չի բավարարում Ձեր կարիքները.
- Ձեր բողոքը, բողոքարկումը կամ արագացված բողոքարկումը ժամանակին լուծում չի ստանում.
- Դուք և Ձեր մատակարարը համաձայն չեք վարքայինն առողջության անհրաժեշտ ծառայությունների հարցում:

### ***Ինչպե՞ս կարող եմ բողոքարկել***

- Դուք կարող եք բողոքարկել հետևյալ երեք միջոցներից մեկով.
  - Չանգահարեք Ձեր վարչական շրջանի անվճար հեռախոսահամարին, որը նշված է այս ձեռնարկի շապիկին: Չանգելուց հետո Դուք պետք է նաև հաջորդող գրավոր բողոք ներկայացնեք, կամ
  - Փոստով ուղարկեք Ձեր բողոքարկումը (վարչական շրջանը կտրամադրի սեփական հասցեով ծրարներ բոլոր մատակարարների հաստատություններում, որպեսզի Դուք փոստով ուղարկեք Ձեր բողոքարկումը): Նկատի ունեցեք. եթե չունեք ինքնահասցեագրված ծրար, կարող եք Ձեր բողոքարկումն ուղարկել ուղիղ այս ձեռնարկի շապիկի հասցեին, կամ
  - Ներկայացրեք Ձեր բողոքարկումը էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս այս ձեռնարկի վերջում գտնվող «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր շրջանի մասին» բաժինը՝ պարզելու համար, թե որն է Ձեր բողոքարկումը ներկայացնելուն համապատասխան մեթոդը (օրինակ՝ էլ. փոստ, ֆաքս):

**Ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ արդյոք իմ բողոքարկման մասին որոշում է կայացվել**  
Դուք կամ Ձեր լիազորված անձը Ձեր վարչական շրջանից կստանաք գրավոր ծանուցում  
Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշման մասին: Ծանուցումը կներառի հետևյալ  
տեղեկատվությունը.

- Բողոքարկման վճռի գործընթացի արդյունքները
- Բողոքարկման որոշումն ընդունելու ամսաթիվը
- Եթե բողոքարկումը չի վճռվել Ձեր օգտին, ծանուցումը Ձեզ կտեղեկացնի  
նահանգային արդար լուծման Ձեր իրավունքի մասին և այն մասին, թե ինչպես  
պահանջեք նահանգային արդար լուծում:

#### **Կա՞րող եմ ժամկետ բողոքարկում ներկայացնելու համար**

Դուք պետք է բողոքարկեք «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցման» մեջ  
նշված ամսաթվից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում: Բողոք ներկայացնելու  
վերջնաժամկետ չկա, եթե Դուք չեք ստանում «Նպաստի բացասական որոշման մասին  
ծանուցում»: այնպես որ, Դուք կարող եք ցանկացած ժամանակ ներկայացնել այս  
տեսակի բողոքարկումը:

#### **Ե՞րբ կկայացվի որոշում իմ բողոքարկման վերաբերյալ**

Վարչական շրջանը պետք է Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշում կայացնի Ձեր  
հայցը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

#### **Ի՞նչ կլինի, եթե իմ բողոքարկամ վերաբերյալ որոշմանը ես չեմ կարող սպասել 30 օր**

Եթե բողոքարկումը բավարարի արագացված բողոքարկման պահանջները, այն կարող է  
ավարտվել ավելի վաղ:

#### **Ի՞նչ է արագացված բողոքարկումը**

Արագացված բողոքարկումն ունի ստանդարտ բողոքարկման նույն գործընթացը, բայց  
ավելի արագ է: Ահա լրացուցիչ տեղեկություններ արագացված բողոքարկումների  
վերաբերյալ.

- Դուք պետք է ցույց տաք, որ ստանդարտ բողոքարկմանը սպասելը կարող է  
վատթարացնել Ձեր վարքային առողջական վիճակը:
- Արագացված բողոքարկման գործընթացի ժամկետները տարբերվում են  
ստանդարտ բողոքարկման ժամկետներից:
- Վարչական շրջանն ունի 72 ժամ՝ արագացված բողոքարկումները վերանայելու  
համար:
- Դուք կարող եք բանավոր պահանջ ներկայացնել արագացված բողոքարկման

համար:

- Դուք կարիք չունեք Ձեր արագացված բողոքարկման հայցը գրավոր ներկայացնել:

### ***Ե՞րբ կարող եմ ներկայացնել արագացված բողոքարկում***

Եթե ստանդարտ բողոքարկման որոշման համար մինչև 30 օր սպասելը կվտանգի Ձեր կյանքը, առողջությունը կամ գործառնությունների առավելագույնին հասնելու, դրանք պահպանելու կամ վերականգնելու կարողությունը, Դուք կարող եք պահանջել բողոքարկման արագ վճիռ:

### ***Լրացուցիչ տեղեկություններ արագացված բողոքարկման մասին***

- Եթե Ձեր բողոքարկումը համապատասխանում է արագացված բողոքարկման պահանջներին, վարչական շրջանը որոշում կկայացնի այն ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:
- Եթե վարչական շրջանը որոշի, որ Ձեր բողոքարկումը չի համապատասխանում արագացված բողոքարկման չափանիշներին, նրանք պարտավոր են Ձեզ ժամանակին բանավոր ծանուցել և երկու օրացուցային օրվա ընթացքում գրավոր ծանուցել՝ բացատրելով իրենց որոշման պատճառը: Ձեր բողոքարկման համար այնուհետև կկիրառվեն այս բաժնում ավելի վաղ նկարագրված բողոքարկման ստանդարտ ժամկետները:
- Եթե Դուք համաձայն չեք վարչական շրջանի այն որոշման հետ, որ Ձեր բողոքարկումը չի համապատասխանում արագացված բողոքարկման չափանիշներին, կարող եք բողոք ներկայացնել:
- Ձեր արագացված բողոքարկման հայցի վերաբերյալ վարչական շրջանի որոշումից հետո Դուք և բոլոր առնչվող կողմերը կտեղեկացվեն ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր:

## **Նահանգային արդար լսումներ**

### ***Ի՞նչ է Նահանգային արդար լսումը***

Նահանգային արդար լսումը (State Fair Hearing) անկախ վերանայման գործընթաց է, որն իրականացնում է Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության (CDSS) վարչական իրավունքի դատավորը՝ ապահովելու համար, որ Դուք ստանաք վարքային առողջության այն ծառայությունները, որոնք իրավունք ունեք ստանալ Medi-Cal ծրագրի շրջանակներում:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության կայքը՝ <https://www.cdss.ca.gov/hearing-requests>:

### ***Որո՞նք են Նահանգային արդար լուսմների իմ իրավունքները***

Դուք իրավունք ունեք՝

- Խնդրել լուսմ վարչական իրավունքի դատավորի մոտ՝ Ձեր գործին անդրադառնալու համար. սա հայտնի է նաև որպես «Նահանգային արդար լուսմ».
- Իմանալ, թե ինչպես պահանջել Նահանգային արդար լուսմ.
- Իմանալ այն կանոնակարգերի մասին, որոնք թելադրում են, թե ինչպես է գործում ներկայացնելը Նահանգային արդար լուսմների ժամանակ.
- Խնդրել, որ Ձեր նպաստները շարունակվեն Նահանգային արդար լուսմների գործընթացի ժամանակ, եթե Նահանգային արդար լուսմ եք հայցում պահանջվող ժամկետներում.
- Չվճարել շարունակվող ծառայությունների համար, քանի դեռ Նահանգային արդար լուսմը չի ավարտվել և եթե վերջնական վճիռը կայացվել է հոգուտ վարչական շրջանի՝ «նպաստի բացասական որոշման»:

### ***Ե՞րբ կարող եմ ներկայացնել Նահանգային արդար լուսմների պահանջ***

Դուք կարող եք ներկայացնել Նահանգային արդար լուսմների պահանջ, եթե՝

Բողոքարկում եք ներկայացրել և ստացել եք բողոքարկման վճռի մասին նամակ, որում ասվում է, որ Ձեր վարչական շրջանը մերժել է Ձեր բողոքարկման հայցը.

- Ձեր բողոքի, բողոքարկման կամ արագացված բողոքարկման մասին ժամանակին որոշում չի կայացվել:

### ***Ինչպե՞ս կարող եմ պահանջել Նահանգային արդար լուսմ***

Դուք կարող եք պահանջել Նահանգային արդար լուսմ՝

- Առցանց՝ Սոցիալական Ծառայությունների Վարչության՝ Բողոքարկման գործերի կառավարման կայքէջում՝ <https://acms.dss.ca.gov/acms/login.request.do>
- Գրավոր. հանձնեք Ձեր դիմումը շրջանի բարեկեցության (welfare) բաժին՝ նպաստի բացասական որոշման մասին ծանուցման մեջ նշված հասցեով, կամ փոստով ուղարկեք այն հետևյալ հասցեին.

**California Department of Social Services**

**State Hearings Division**

**P.O. Box 944243, Mail Station 9-17-37**

**Sacramento, CA 94244-2430**

- Ֆաքսով՝ 916-651-5210 կամ 916-651-2789

Դուք կարող եք նաև պահանջել նահանգային արդար լուր կամ արագացված նահանգային արդար լուր՝

- Հեռախոսով՝
  - *Նահանգային լուրմների բաժին՝ անվճար 1-800-743-8525 կամ 1-855-795-0634* հեռախոսահամարներով
  - *Հանրության հարցերի և դրանց արձագանքման բաժին՝ անվճար 1-800-952-5253 կամ TDD՝ 1-800-952-8349* հեռախոսահամարներով:

### ***Կա՞րողյոք նահանգային արդար լուր պահանջելու համար ժամկետ***

Նահանգային արդար լուր պահանջելու համար Դուք ունեք 120 օր՝ բողոքարկման որոշման մասին վարչական շրջանի գրավոր ծանուցման օրվանից հետո: Եթե Դուք չեք ստացել «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցում», ցանկացած ժամանակ կարող եք դիմել Նահանգային արդար լուրմների համար:

### ***Կարո՞ղ եմ շարունակել ստանալ ծառայություններ, քանի դեռ սպասում եմ նահանգային արդար լսման վերաբերյալ որոշմանը***

Այո, եթե ներկայումս ստանում եք թույլատրված ծառայություններ և ցանկանում եք շարունակել ստանալ այդ ծառայությունները, քանի դեռ սպասում եք նահանգային արդար լուրմների որոշմանը, ապա Դուք պետք է պահանջեք նահանգային արդար լուրմ բողոքարկման վերաբերյալ որոշման մասին ծանուցման վրա փոստային կնիք դնելու կամ ծանուցումը Ձեզ առաքելու օրվանից մինչև 10 օր հետո: Որպես այլընտրանք՝ Դուք կարող եք պահանջել լուրմներ նախքան այն ամսաթիվը, երբ Ձեր վարչական շրջանը կհայտարարի, որ ծառայությունները դադարեցվում կամ կրճատվում են:

### **Նշում**

- Երբ պահանջում եք նահանգային արդար լուրմներ, Դուք պետք է նշեք, որ ցանկանում եք շարունակել ծառայություններ ստանալ նահանգային արդար լուրմների գործընթացի ժամանակ:
- Եթե ինդրում եք շարունակել ծառայություններ ստանալ, և նահանգային արդար լուրմների վերջնական որոշումը հաստատում է Ձեր ստացած ծառայության կրճատումը կամ դադարեցումը, Դուք պատասխանատվություն չեք կրում մատուցված ծառայությունների արժեքը վճարելու համար, քանի դեռ նահանգային արդար լուրմներն ավարտված չեն:

**Ե՞րբ կկայացվի որոշում իմ նահանգային արդար լսման վերաբերյալ**

Նահանգային արդար լսման հայցը ստանալուց հետո կարող է 90 օր տևել, մինչև որոշում կկայացվի:

**Կարո՞ղ է նահանգային արդար լսման որոշումն ավելի արագ կայացվել**

Եթե կարծում եք, որ այդքան երկար սպասելը կվնասի Ձեր առողջությանը, ապա հնարավոր է, որ Դուք կարողանաք պատասխան ստանալ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Դուք կարող եք խնդրել արագացված նահանգային արդար լսումներ կամ ինքներդ նամակ գրելով, կամ խնդրելով Ձեր ընդհանուր բժշկին կամ հոգեկան առողջության մասնագետին նամակ գրել Ձեզ համար: Նամակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

1. Մանրամասն բացատրեք, թե ինչպես կարող է Ձեր գործի վերաբերյալ որոշմանը մինչև 90 օր սպասելը լրջորեն վնաս հասցնել Ձեր կյանքին, առողջությանը կամ գործառույթների առավելագույնին հասնելու, դրանք պահպանելու կամ վերականգնելու կարողությանը:
2. Խնդրեք «արագացված լսում», և այդ նամակը տրամադրեք լսումների համար Ձեր հայցադիմումի հետ միասին:

Սոցիալական Ծառայությունների Վարչության՝ Նահանգային լսումների բաժինը կվերանայի արագացված նահանգային արդար լսումների Ձեր դիմումը և կորոշի, թե արդյոք այն համապատասխանում է չափանիշներին: Եթե Ձեր հայցը բավարարվի, լսում կնշանակվի, և որոշում կկայացվի երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ նահանգային լսումների բաժինը ստանա Ձեր դիմումը:

## ԱՌՈՂՋԱԿԱՅԻՆ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

### **Ի՞նչ է Առողջապահական լիազորագիրը**

Դուք ունեք առողջապահական լիազորագրի (advance directive) իրավունք:

Առողջապահական լիազորագիրը գրավոր փաստաթուղթ է Ձեր առողջապահական խնամքի մասին, որը ճանաչված է Կալիֆորնիայի օրենքով: Երբեմն կարող եք լսել, որ առողջապահական լիազորագիրը նկարագրվի որպես առողջապահական կտակ (living will) կամ երկարաժամկետ լիազորագիր (durable power of attorney): Այն ներառում է տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կուզենայիք, որ Ձեր առողջապահական խնամքն իրականացվեր, կամ նշում է, թե ինչ որոշումներ կուզենայիք ընդունել, եթե կամ երբ Դուք անկարող լինեք ինքներդ խոսել: Սա կարող է ներառել այնպիսի բաներ, ինչպիսիք են բուժումը, վիրահատությունն ընդունելու կամ մերժելու իրավունքը կամ առողջապահական խնամքի այլ ընտրություն կատարելը: Կալիֆորնիայում առողջապահական լիազորագիրը բաղկացած է երկու մասից.

- Դուք նշանակում եք լիազորված անձ, որը որոշումներ է կայացնում Ձեր առողջության պահպանման վերաբերյալ, և
- Նշում եք Ձեր անհատական առողջապահական ցուցումները:

Ձեր վարչական շրջանից պահանջվում է պատրաստ ունենալ առողջապահական լիազորագրի ծրագիր: Ձեր վարչական շրջանից պահանջվում է գրավոր տեղեկություններ տրամադրել առողջապահական լիազորագրի քաղաքականության վերաբերյալ և բացատրել նահանգի օրենքը, եթե այդ տեղեկատվությունը պահանջվի: Եթե ցանկանում եք տեղեկատվություն պահանջել, ապա լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք այս ձեռնարկի շապիկի հեռախոսահամարով:

Դուք կարող եք ստանալ առողջապահական լիազորագրի ձևաթուղթը Ձեր շրջանից կամ առցանց: Կալիֆորնիայում Դուք իրավունք ունեք առողջապահական լիազորագիր տալ Ձեր բոլոր առողջապահական ծառայություններ մատուցողներին: Դուք նաև իրավունք ունեք փոփոխելու կամ չեղարկելու Ձեր առողջապահական լիազորագիրը ցանկացած ժամանակ:

Եթե հարցեր ունեք Կալիֆորնիայի օրենքների վերաբերյալ՝ կապված առողջապահական լիազորագրի հետ, կարող եք նամակ ուղարկել հետևյալ հասցեին՝

**California Department of Justice**  
**Attn: Public Inquiry Unit**  
**P. O. Box 944255**  
**Sacramento, CA 94244-2550**

## ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Վարչական շրջանի պարտականությունները

#### **Ինչի՞ համար է պատասխանատու իմ վարչական շրջանը**

Ձեր վարչական շրջանը պատասխանատու է հետևյալի համար.

- Պարզել, արդյոք Դուք բավարարում եք վարչական շրջանից կամ դրա մատակարարների ցանցից վարքային առողջության ծառայություններ ստանալու չափանիշները:
- Իրականացնել ստուգում կամ գնահատում որոշելու համար, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ են վարքային առողջության ծառայություններ:
- Տրամադրել անվճար հեռախոսահամար, որին պատասխանում են օրը 24 ժամ շաբաթը յոթ օր, և որի միջոցով Ձեզ կարող են բացատրել, թե ինչպես ծառայություններ ստանալ վարչական շրջանից: Հեռախոսահամարը նշված է այս ձեռնարկի շապիկին:
- Ապահովել, որ մոտակայքում լինեն բավարար թվով վարքային առողջության մատակարարներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում կարողանաք օգտվել Ձեր վարչական շրջանի կողմից վճարվող ծառայություններից:
- Տեղեկացնել և գիտելիքներ տալ Ձեր շրջանից հասանելի ծառայությունների մասին:
- Մատուցել անվճար ծառայություններ Ձեր լեզվով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Ձեզ տրամադրել անվճար բանավոր թարգմանիչ:
- Ձեզ տրամադրել գրավոր տեղեկություններ այն մասին, թե ինչն է Ձեզ հասանելի այլ լեզուներով կամ այլընտրանքային ձևաչափերով, ինչպիսիք են բրայլյան կամ խոշոր տառերով տպված նյութերը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Լրացուցիչ տեղեկություններ Ձեր շրջանի մասին» բաժինը, որը գտնվում է այս ձեռնարկի վերջում:
- Տեղեկացնել Ձեզ այս ձեռնարկում նշված տեղեկատվության ցանկացած էական փոփոխության մասին՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 30 օր առաջ: Փոփոխությունը էական է համարվում, երբ կա առաջարկվող ծառայությունների քանակի կամ տեսակների ավելացում կամ նվազում, եթե կա ցանցի մատակարարների թվի աճ կամ նվազում, կամ եթե կա որևէ այլ փոփոխություն, որը կազդի Ձեր վարչական շրջանից ստացած Ձեր նպաստների վրա:
- Ապահովել, որ Ձեր առողջապահության ծրագիրը կապ հաստատի ցանկացած այլ ծրագրի կամ համակարգի հետ, որը կարող է անհրաժեշտ լինել Ձեր բուժումը սահուն փոխանցելու համար: Սա ներառում է երաշխավորելը, որ

մասնագետների կամ այլ մատակարարների ուղղորդումներին պատշաճ կերպով կհետևեն և որ նոր մատակարարը պատրաստ է զբաղվել Ձեր բժշկական խնամքով:

- Ապահովել, որ կարողանաք շարունակել որոշ ժամանակ այցելել Ձեր ընթացիկ բժշկական ծառայությունների մատակարարին, նույնիսկ եթե նա Ձեր ցանցում չէ: Սա կարևոր է, եթե մատակարարներ փոխելը կվնասի Ձեր առողջությունը կամ կմեծացնի հիվանդանոց գնալու անհրաժեշտության հավանականությունը:

### **Արդյո՞ք հասանելի է փոխադրամիջոց**

Եթե Դուք դժվարանում եք գնալ Ձեր բժշկական կամ վարքային առողջության ժամադրությանը, Medi-Cal ծրագիրն օգնում է կազմակերպել Ձեր փոխադրումը: Փոխադրամիջոցը պետք է տրամադրվի Medi-Cal-ի այն անդամներին, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ապահովել փոխադրամիջոց և ովքեր ունեն բժշկական անհրաժեշտություն՝ Medi-Cal-ով ապահովագրված ծառայություններ ստանալու համար: Ժամադրությունների համար կա փոխադրամիջոցի երկու տեսակ.

- Ոչ բժշկական: Փոխադրում մասնավոր կամ հասարակական փոխադրամիջոցով այն մարդկանց համար, ովքեր այլ միջոց չունեն՝ հասնելու իրենց ժամադրության վայր:
- Ոչ շտապ բժշկական: Շտապօգնության մեքենայով, անվասայլակի հարմարանք ունեցող մեքենայով (van), պատգարակի հարմարանք ունեցող մեքենայով տեղափոխում է այն մարդկանց, ովքեր չեն կարող օգտվել մասնավոր կամ հանրային փոխադրամիջոցներից:

Փոխադրամիջոցը հասանելի է դեղատուն մեկնելու կամ անհրաժեշտ բժշկական պարագաներ, պրոթեզներ, օրթեզներ և այլ սարքավորումներ վերցնելու համար:

Եթե Դուք ունեք Medi-Cal, բայց գրանցված չեք կառավարվող խնամքի ծրագրում, և Ձեզ անհրաժեշտ է ոչ բժշկական փոխադրամիջոց առողջապահական ծառայությունների համար, օգնության համար Դուք կարող եք ուղղակիորեն կապ հաստատել ոչ բժշկական փոխադրամիջոցի մատակարարի կամ Ձեր մատակարարի հետ: Երբ Դուք կապվեք տրանսպորտային ընկերության հետ, նրանք կխնդրեն տեղեկություններ Ձեր ժամադրության ամսաթվի և ժամի մասին:

Եթե Ձեզ անհրաժեշտ է ոչ շտապ բժշկական փոխադրամիջոց, Ձեր մատակարարը կարող է նշանակել ոչ շտապ բժշկական փոխադրում և Ձեզ կապել փոխադրամիջոցի մատակարարի հետ՝ դեպի ժամադրության վայր և այնտեղից վերադարձի Ձեր ուղևորությունը համակարգելու համար:

Փոխադրման հետ կապված լրացուցիչ տեղեկությունների և օգնության համար դիմեք Ձեր կառավարվող ինսամքի ծրագրին:

## **Անդամի իրավունքներ**

### ***Որո՞նք են իմ՝ որպես Medi-Cal-ի վարքային առողջության ծառայություններից օգտնվողի իրավունքները***

Որպես Medi-Cal-ի անդամ Դուք իրավունք ունեք Ձեր վարչական շրջանից ստանալ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ վարքային առողջության ծառայություններ: Վարքային առողջության ծառայություններից օգտվելիս Դուք իրավունք ունեք՝

- Որ Ձեր անձի նկատմամբ վերաբերվեն հարգանքով, և որ հարգեն Ձեր արժանապատվությունը և անձնական գաղտնիքները.
- Ստանալ հասանելի բուժման տարբերակների պարզ և հասկանալի բացատրություններ.
- Մասնակցել Ձեր վարքային առողջությանը վերաբերող որոշումներին: Սա ներառում է հրաժարվելու իրավունքը ցանկացած բուժումից, որը Դուք չեք ցանկանում ստանալ.
- Ստանալ այս ձեռնարկը՝ իմանալու շրջանի ծառայությունների, շրջանի պարտավորությունների և Ձեր իրավունքների մասին.
- Խնդրել Ձեր բժշկական տվյալների պատճենը և անհրաժեշտության դեպքում պահանջել փոփոխություններ.
- Ձերձ մնալ զսպման կամ մեկուսացման ցանկացած ձևից, որը պարտադրվում է որպես հարկադրանքի, կարգապահության, հարմարության կամ վրեժխնդրության միջոց.
- Երբ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, 24/7 Ձեզ հասանելի լինի ժամանակին տրվող բուժօգնություն արտակարգ իրավիճակների, շտապ կամ ճգնաժամային իրավիճակների դեպքում.
- Պահանջելու դեպքում ժամանակին ստանալ գրավոր նյութեր այլընտրանքային ձևաչափերով, ինչպիսիք են բրայլյան, խոշոր տառերով տպված և ձայնային ձևաչափերը.
- Ստանալ վարքային առողջության ծառայություններ վարչական շրջանից, որը հետևում է իր նահանգային պայմանագրի պահանջներին, որոնք վերաբերում են հասանելիությանը, կարողություններին, համակարգմանը, փոխհատուցմանը և բուժման թույլտվությանը: Վարչական շրջանից պահանջվում է՝

- Գործի ընդունել կամ գրավոր պայմանագրեր ունենալ բավարար թվով մատակարարների հետ՝ ապահովելու, որ Medi-Cal-ի բոլոր իրավասու անդամները, ովքեր բավարարում են վարքային առողջության ծառայությունների պայմանները, կարողանան դրանք ժամանակին ստանալ.
- Ժամանակին փակել ցանցի մեջ չմտնող բժշկական անհրաժեշտ Ձեր ծառայությունների ծախսերը, եթե վարչական շրջանը չունի աշխատող կամ պայմանագրային մատակարար, ով կարող է մատուցել ծառայությունները:
 

**Նշում:** Վարչական շրջանը պետք է ապահովի, որ Դուք լրացուցիչ ոչինչ չվճարեք ցանցի մեջ չմտնող մատակարարին տեսնելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ստորև.

  - 21 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար *բժշկական տեսանկյունից անհրաժեշտ վարքային առողջության ծառայություններն* այն ծառայություններն են, որոնք ողջամիտ և անհրաժեշտ են կյանքը պահպանելու, լուրջ հիվանդությունները կամ ծանր հաշմանդամությունը կանխելու կամ ծանր ցավը մեղմելու համար: Մինչև 21 տարեկան անհատների համար բշկական առումով անհրաժեշտ վարքային առողջության ծառայություններն այն ծառայություններ են, որոնք ամրապնդում, բարելավում կամ ավելի տանելի են դարձնում վարքային առողջության խնդիրը կամ օժանդակում են այդ հարցում:
  - *Ցանցի մեջ չմտնող (out-of-network)* մատակարարն այն մատակարար է, որը վարչական շրջանի մատակարարների ցանկում չէ:
- Ձեր պահանջի դեպքում առանց հավելյալ ծախսերի տրամադրել երկրորդ կարծիք՝ առողջապահության որակավորված մասնագետի կողմից, որը ցանցի մեջ է կամ դրանից դուրս է:
- Ապահովել, որ մատակարարները պատրաստված լինեն մատուցելու համար վարքային առողջության այն ծառայությունները, որոնք մատակարարները համաձայնում են իրականացնել:
- Ապահովել, որ վարչական շրջանի ապահովագրված վարքային առողջության ծառայությունները բավարար լինեն քանակով, ժամանակի առումով և ծավալով՝ Medi-Cal-ի իրավասու անդամների կարիքները հոգալու համար: Սա ներառում է ապահովելը, որ վարչական շրջանի մեթոդը՝ հաստատել ծառայության համար վճարումները, հիմնված լինի բժշկական անհրաժեշտության վրա, և որ հասանելիության չափանիշներն

օգտագործվեն արդարացիորեն:

- Ապահովել, որ իր մատակարարներն իրականացնեն մանրակրկիտ գնահատումներ և համագործակցեն Ձեզ հետ՝ բուժման նպատակները սահմանելու համար:
- Անհրաժեշտության դեպքում համաձայնեցնել իր տրամադրած ծառայություններն այն ծառայությունների հետ, որոնք Ձեզ տրամադրվում են կառավարվող խնամքի ծրագրի միջոցով կամ Ձեր առողջության առաջնային պահպանման մատակարարի միջոցով:
- Մասնակցել նահանգի աշխատանքներին՝ տվյալ մշակույթն ընթանող ծառայություններ մատուցելու բոլորին՝ ներառյալ անգլերենի սահմանափակ իմացությամբ և տարբեր մշակութային և էթնիկական ծագում ունեցողներին:
- Արտահայտել Ձեր իրավունքները՝ առանց Ձեր բուժման համար վնասակար փոփոխությունների:
- Ստանալ բուժում և ծառայություններ՝ համաձայն այս ձեռնարկում նկարագրված Ձեր իրավունքների և դաշնային ու նահանգային բոլոր կիրառելի օրենքների, ինչպիսիք են՝
  - «Քաղաքացիական իրավունքների մասին 1964 թ.-ի ակտի» (Civil Rights Act of 1964) VI խորագիր, որը կիրառվում է 45 CFR-ի 80-րդ մասի կանոնակարգերով.
  - «Տարիքային խտրականության մասին 1975 թ.-ի ակտ» (The Age Discrimination Act of 1975), ինչպես կիրառվում է 45 CFR-ի 91-րդ մասի կանոնակարգերով.
  - «Վերականգնման 1973 թ.-ի ակտ»(The Rehabilitation Act of 1973).
  - «Կրթության 1972 թ.-ի փոփոխությունների» (Education Amendments of 1972) IX խորագիր (կրթական ծրագրերի և գործունեության վերաբերյալ):
  - «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին» օրենքի (Americans with Disabilities Act) II և III խորագրեր.
  - «Հիվանդների պաշտպանության և մատչելի խնամքի մասի» օրենքի (Patient Protection and Affordable Care Act) 1557-րդ հոդված:
- Դուք կարող եք ունենալ նաև այլ իրավունքներ՝ համաձայն վարքային առողջության բուժման մասին պետական օրենքների: Ձեր վարչական շրջանի Հիվանդների իրավունքների պաշտպանի հետ կապ հաստատելու համար խնդրում ենք կապ հաստատել Ձեր վարչական շրջանի հետ՝ զանգահարելով ձեռնարկի շապիկին նշված հեռախոսահամարով:

## **Նպաստի բացասական որոշում**

***Ի՞նչ իրավունքներ ես ունեմ, եթե վարչական շրջանը մերժի տրամադրել այն ծառայությունները, որոնք ես ցանկանում եմ կամ որոնց կարիքը կարծում եմ, որ ունեմ***

Եթե Ձեր վարչական շրջանը մերժում , սահմանափակում, կրճատում, հետաձգում կամ դադարեցնում է այն ծառայությունը, որը կարծում եք, որ Ձեզ անհրաժեշտ է, Դուք իրավունք ունեք վարչական շրջանից գրավոր ծանուցում ստանալու: Այս ծանուցումը կոչվում է «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցում» (Notice of Adverse Benefit Determination): Դուք նաև իրավունք ունեք չհամաձայնել որոշման հետ՝ բողոքարկելով: Ստորև բերված բաժինները տեղեկացնում են Ձեզ նպաստի բացասական որոշման ծանուցման մասին և այն մասին, թե ինչ անել, եթե համաձայն չեք վարչական շրջանի որոշման հետ:

### ***Ի՞նչ է Նպաստի բացասական որոշումը***

Նպաստի բացասական որոշումը (Adverse Benefit Determination) սահմանվում է վարչական շրջանի հետևյալ գործողություններից որևէ մեկով.

- Հայցվող ծառայության մերժում կամ սահմանափակ թույլտվություն: Սա ներառում է որոշումները, որոնք հիմնված են ծառայության տեսակի կամ մակարդակի, բժշկական անհրաժեշտության, պատշաճության, միջավայրի կամ ապահովագրված նպաստի արդյունավետության վրա.
- Նախկինում թույլատրված ծառայության կրճատում, կասեցում կամ դադարեցում.
- Ծառայության համար վճարման լրիվ կամ մասնակի մերժում.
- Ծառայությունները ժամանակին չմատուցելը.
- Բողոքների և բողոքարկումների ստանդարտ վճռի համար պահանջվող ժամկետներում չգործելը: Պահանջվող ժամկետները հետևյալն են.
  - Եթե Դուք բողոք եք ներկայացնում վարչական շրջան, և վարչական շրջանը 30 օրվա ընթացքում Ձեզ գրավոր չի պատասխանում Ձեր բողոքի վերաբերյալ որոշման մասին.
  - Եթե Դուք բողոքարկում եք ներկայացնում վարչական շրջան, և վարչական շրջանը 30 օրվա ընթացքում Ձեզ գրավոր չի պատասխանում Ձեր բողոքի վերաբերյալ որոշման մասին.
  - Եթե Դուք արագացված բողոքարկում եք ներկայացնում և պատասխան

չէք ստանում 72 ժամվա ընթացքում.

- Անդամի՝ ֆինանսական պարտավորությունը վիճարկելու ինդրանքի մերժում:

### ***Ի՞նչ է Նպաստի բացասական որոշման մասին ծանուցումը***

«Նպաստի բացասական որոշման մասին ծանուցումը» (A Notice of Adverse Benefit Determination) գրավոր նամակ է, որը Ձեր վարչական շրջանը կուղարկի Ձեզ, եթե այն որոշի մերժել, սահմանափակել, նվազեցնել, հետաձգել կամ դադարեցնել ծառայությունները, որոնք Դուք և Ձեր մատակարարը կարծում եք, որ պետք է ստանաք:

Սա ներառում է հետևյալի մերժումները.

- Վճարում ծառայության դիմաց
- Այնպիսի ծառայությունների պահանջներ, որոնք ապահովագրված չեն
- Այնպիսի ծառայությունների պահանջներ, որոնք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չեն
- Այնպիսի ծառայությունների պահանջներ, որոնք ոչ ճիշտ առաքման համակարգից են
- Ֆինանսական պարտավորությունը վիճարկելու պահանջ:

**Նշում:** Նպաստի բացասական որոշման մասին ծանուցումը նաև օգտագործվում է Ձեզ տեղեկացնելու համար, եթե Ձեր բողոքի, բողոքարկման կամ արագացված բողոքարկման վերաբերյալ ժամանակին որոշում չի կայացվել, կամ եթե Դուք ծառայությունները չէք ստացել ծառայությունների մատուցման շրջանի ժամանակացույցի չափորոշիչների շրջանակներում:

### ***Ծանուցման ժամանակը***

Վարչական շրջանը պետք է փոստով ուղարկի ծանուցումը անդամին՝

- Նախօրոք թույլատրված վարքային առողջության ծառայությունը դադարեցնելու, կասեցնելու կամ կրճատելու գործողությունների օրվանից առնվազն 10 օր առաջ.
- Վճարումը մերժելու մասին որոշում կայացնելուց կամ վարքային առողջության ծառայությունների ամբողջ կամ մասնակի մերժմանը, ուշացմանը կամ փոփոխմանը հանգեցրած որոշումներ կայացնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:

**Արդյո՞ք ես ամեն անգամ կստանամ «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցում», երբ ինձ չտրվեն իմ ցանկացած ծառայությունները**

Այո, Դուք պետք է ստանաք «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցում»: Եթե Դուք ծանուցում չեք ստանում, կարող եք բողոք ներկայացնել վարչական շրջան, կամ եթե ավարտել եք բողոքարկման գործընթացը, կարող եք նահանգային արդար լսում պահանջել: Երբ կապ եք հաստատում Ձեր վարչական շրջանի հետ, նշեք, որ Դուք նկատել եք նպաստի բացասական որոշման արդյունքը, բայց ծանուցում չեք ստացել: Բողոք ներկայացնելու կամ նահանգային արդար լսում պահանջելու մասին տեղեկությունները ներառված են այս ձեռնարկում և պետք է հասանելի լինեն նաև Ձեր մատակարարի գրասենյակում:

**Ինչի՞ մասին ինձ կտեղեկացնի «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցումը»**

«Նպաստի բացասական որոշման մասին ծանուցումը» Ձեզ կտեղեկացնի հետևյալի մասին.

- Ինչ է արել վարչական շրջանը, որն ազդում է Ձեր և ծառայություններից օգտվելու Ձեր կարողության վրա:
- Ամսաթիվը, երբ որոշումն ուժի մեջ կմտնի, և որոշման պատճառները:
- Եթե մերժման պատճառն այն է, որ ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չէ, ծանուցումը կներառի հստակ բացատրություն, թե ինչու է վարչական շրջանը կայացրել այս որոշումը: Այս բացատրությունը կներառի այն կոնկրետ կլինիկական պատճառները, որոնք հիմք ընդունելով ծառայությունը ձեզ համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ չի համարվում:
- Նահանգային և դաշնային օրենքները, որոնց վրա հիմնված է որոշումը:
- Ձեր իրավունքը՝ ներկայացնել բողոքարկում, եթե Դուք համաձայն չե՛ն վարչական շրջանի որոշման հետ:
- Ինչպես ստանալ փաստաթղթերի, տվյալների և վարչական շրջանի որոշումների առնչվող այլ տեղեկությունների պատճենները:
- Ինչպես բողոքարկում ներկայացնել վարչական շրջան:
- Ինչպես պահանջել նահանգային արդար լսում, եթե Ձեզ չի բավարարում Ձեր բողոքարկման վերաբերյալ վարչական շրջանի որոշումը:
- Ինչպես պահանջել արագացված բողոքարկում կամ արագացված նահանգային արդար լսում:
- Ինչպես օգնություն ստանալ բողոքարկում կամ նահանգային արդար լսման պահանջ ներկայացնելու հարցում:
- Որքան ժամանակ կարող եք ներկայացնել բողոքարկում կամ նահանգային արդար լսում:

- Ձեր իրավունքը՝ շարունակել ստանալ ծառայություններ, քանի դեռ սպասում եք բողոքարկման կամ նահանգային արդար լսման որոշմանը, ինչպես պահանջել այս ծառայությունների շարունակում, և արդյոք Medi-Cal-ը կփակի այս ծառայությունների ծախսերը:
- Երբ պետք է Դուք ներկայացնեք բողոքարկում կամ նահանգային արդար լսման պահանջ, եթե ցանկանում եք, որ ծառայությունները շարունակվեն:

***Ի՞նչ պետք է անեմ, եթե ստանամ «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցում»***

Երբ Դուք ծանուցում եք ստանում նպաստի բացասական որոշման մասին, Դուք պետք է ուշադիր կարդաք ծանուցման մեջ նշված բոլոր տեղեկությունները: Եթե Դուք չեք հասկանում ծանուցումը, Ձեր վարչական շրջանը կարող է օգնել Ձեզ: Կարող եք նաև մեկ այլ անձի խնդրել օգնել Ձեզ:

Դուք կարող եք պահանջել դադարեցված ծառայության վերականգնում, երբ Դուք բողոքարկում եք ներկայացնում կամ դիմում եք նահանգային արդար լսումների համար: Դուք պետք է պահանջեք Ծառայությունների շարունակականությունը ոչ ուշ, քան 10 օրացուցային օր հետո՝ սկսած այն օրվանից, երբ «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցման» վրա փոստային նշում է արվել կամ ծանուցումն առաքվել է Ձեզ կամ մինչև փոփոխության ուժի մեջ մտնելը:

***Կարո՞ղ եմ շարունակել ստանալ ծառայություններս, քանի դեռ սպասում եմ բողոքարկման որոշմանը***

Այո, Դուք կարող եք շարունակել ստանալ Ձեր ծառայությունները, քանի դեռ սպասում եք որոշմանը: Սա նշանակում է, որ Դուք կարող եք շարունակել այցելել Ձեր մատակարարին և ստանալ անհրաժեշտ բուժօգնությունը:

***Ի՞նչ պետք է անեմ, որպեսզի շարունակեմ ստանալ իմ ծառայությունները***

Դուք պետք է բավարարեք հետևյալ պայմանները.

- Դուք խնդրում եք շարունակել ստանալ ծառայությունը վարչական շրջանի՝ «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցումը» ուղարկելուց հետո 10 օրացուցային օրվա ընթացքում կամ մինչև այն օրը, որը շրջանը նշել է ծառայության դադարեցման համար՝ նայած, թե որ ամսաթիվն է ավելի ուշ:
- Դուք բողոքարկել եք «Նպաստի բացասական որոշման մասին ծանուցման» օրվանից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում:
- Բողոքարկումը վերաբերում է այն ծառայության դադարեցմանը, կրճատմանը կամ կասեցմանը, որը Դուք արդեն ստանում եք:

- Ձեր մատակարարը հաստատել է, որ ծառայություն անհրաժեշտ է Ձեզ:
- Ծառայության համար շրջանի կողմից արդեն հաստատված ժամանակահատվածը դեռ չի լրացել:

***Ի՞նչ պետք է անեմ, եթե բողոքարկումից հետո վարչական շրջանը որոշի, որ ես ծառայության կարիքը չունեմ***

Դուք պարտավոր չեք լինի վճարել բողոքարկման ընթացքում ստացված ծառայությունների համար:

**Անդամի պարտականություններ**

***Որո՞նք են իմ՝ որպես Medi-Cal-ի անդամի պարտականությունները***

Կարևոր է, որ Դուք հասկանաք, թե ինչպես են աշխատում վարչական շրջանի ծառայությունները, որպեսզի կարողանաք ստանալ Ձեզ անհրաժեշտ բուժումը: Կարևոր է նաև՝

- Հաճախել Ձեր բուժման ժամադրություններին, ինչպես նախատեսված է: Դուք կունենաք լավագույն արդյունքը, եթե աշխատեք Ձեր մատակարարի հետ՝ Ձեր բուժման նպատակները մշակելու և այդ նպատակներին հասնելու համար: Եթե Դուք պետք է բաց թողնեք ժամադրությունը, զանգահարեք Ձեր մատակարարին առնվազն 24 ժամ առաջ և տեղափոխեք մեկ այլ օր և ժամ:
- Միշտ Ձեզ հետ ունեցեք Medi-Cal-ի նպաստների նույնականացման քարտը (BIC) և լուսանկարով նույնականացման քարտ (ID), երբ գնում եք բուժման:
- Եթե բանավոր թարգմանչի կարիք ունեք, այդ մասին տեղեկացրեք Ձեր մատակարարին նախքան Ձեր ժամադրությունը:
- Հայտնեք Ձեր մատակարարին առողջության հետ կապված Ձեր բոլոր մտահոգությունների մասին: Որքան ավելի շատ տեղեկություններ հաղորդեք Ձեր կարիքների մասին, այնքան ավելի հաջող կլինի Ձեր բուժումը:
- Անպայման Ձեր մատակարարին տվեք ցանկացած հարց, որն ունեք: Շատ կարևոր է, որ Դուք ամբողջությամբ հասկանաք այն տեղեկությունները, որոնք ստանում եք բուժման ընթացքում:
- Հետևեք այն նախատեսված քայլերին, որոնք Դուք և Ձեր մատակարարը համաձայնեցրել եք:
- Կապ հաստատեք վարչական շրջանի հետ, եթե Ձեր ծառայությունների վերաբերյալ հարցեր ունեք կամ եթե ունեք Ձեր մատակարարի հետ խնդիրներ, որոնք չեք կարող լուծել:
- Տեղեկացրեք Ձեր մատակարարին և վարչական շրջանին, եթե Ձեր անձնական

տվյալների մեջ որևէ փոփոխություն կա: Սա ներառում է Ձեր հասցեն, հեռախոսահամարը և ցանկացած այլ բժշկական տեղեկություն, որը կարող է ազդել բուժմանը մասնակցելու Ձեր կարողության վրա:

- Ձեզ ծառայություններ մատուցող անձնակազմին վերաբերվեք հարգանքով և քաղաքավարությամբ:
- Եթե խարդախության կամ անօրինականության կասկած ունեք, հաղորդեք այդ մասին.
  - Առողջապահական Ծառայությունների Վարչությունը խնդրում է, որ նրանք, ովքեր Medi-Cal-ի խարդախության, վատման կամ չարաշահման կասկած ունեն, զանգահարեն Առողջապահական Ծառայությունների Վարչության՝ Medi-Cal-ի խարդախության թեժ գծին 1-800-822-6222 հեռախոսահամարով: Եթե կարծում եք, որ սա վտանգավոր իրավիճակ է, խնդրում ենք զանգահարել 911՝ շտապ օգնության համար: Չանգն անվճար է, և զանգահարողը կարող է մնալ անսնուն:
  - Դուք կարող եք նաև հայտնել խարդախության կամ չարաշահման կասկածի մասին Էլ. փոստով՝ [fraud@dhcs.ca.gov](mailto:fraud@dhcs.ca.gov), կամ օգտագործել առցանց ձևաչափը՝ <http://www.dhcs.ca.gov/individuals/Pages/StopMedi-CalFraud.aspx>:

### **Արդյո՞ք ես պետք է վճարեմ Medi-Cal-ի համար**

Medi-Cal-ից օգտվող մարդկանց մեծ մասը ստիպված չեն վճարել բժշկական կամ վարքային առողջության ծառայությունների համար: Որոշ դեպքերում Դուք կարող եք ստիպված լինել վճարել բժշկական և/կամ վարքային առողջության ծառայությունների համար՝ հիմնվելով ամսական Ձեր ստացած կամ վաստակած գումարի չափի վրա:

- Եթե Ձեր եկամուտը Ձեր ընտանիքի չափի համար նախատեսված Medi-Cal-ի սահմանաչափերից քիչ է, Դուք ստիպված չեք լինի վճարել բժշկական կամ վարքային առողջության ծառայությունների համար:
- Եթե Ձեր եկամուտն ավելին է, քան այն գումարը, որ Ձեր ընտանիքի չափի համար նախատեսված է Medi-Cal-ի սահմանաչափերովը, Դուք ստիպված կլինեք որոշակի գումար վճարել Ձեր բժշկական կամ վարքային առողջության ծառայությունների համար: Այն գումարը, որը Դուք վճարում եք, կոչվում է Ձեր «ծախսի մասնաբաժին»: Երբ վճարեք Ձեր «ծախսի մասնաբաժինը», Medi-Cal-ը կվճարի այդ ամսվա Ձեր ապահովագրված բժշկական վճարների մնացած մասը: Այն ամիսներին, երբ Դուք չունեք բժշկական ծախսեր, ոչինչ պետք չէ վճարել:
- Չնարավոր է, որ Դուք ստիպված լինեք վճարել «համավճար» Medi-Cal-ի շրջանակներում ցանկացած բուժման համար: Սա նշանակում է, որ Դուք Ձեր գրպանից գումար եք վճարում ամեն անգամ, երբ Ձեզ մատուցվում է բժշկական

Ծառայություն կամ երբ գնում եք հիվանդանոցի շտապ օգնության բաժին՝ Ձեր կանոնավոր ծառայությունների համար:

- Ձեր մատակարարը Ձեզ կհայտնի, եթե անհրաժեշտ լինի համավճար վճարել:

## **ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Խտրականությունն օրենքին դեմ է: Լոս Անջելեսի Շրջանը հետևում է քաղաքացիական իրավունքի նահանգային և դաշնային օրենքներին: Լոս Անջելեսի Շրջանը ապօրինի խտրականություն չի դնում, չի մերժում մարդկանց կամ այլ վերաբերմունք ցույց չի տալիս նրանց՝ սեռի, ռասայի, գույնի, կրոնի, ծագման, ազգային պատկանելության, էթնիկական խմբի, տարիքի, մտավոր / հոգեկան հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության, առողջական խնդրի, գենետիկական տեղեկության, ամուսնական կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման պատճառով:

Լոս Անջելեսի Շրջանը տրամադրում է՝

- Անվճար օգնություն և ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց՝ օգնելու նրանց ավելի լավ հաղորդակցվել, օրինակ՝
  - Ժեստերի լեզվի որակավորված թարգմանիչներ
  - Գրավոր տեղեկատվություն այլ ձևաչափերով (խոշոր տպված, բրայլյան, ձայնային կամ մատչելի էլեկտրոնային ձևաչափեր)
- Անվճար լեզվական ծառայություններ այն մարդկանց, ում հիմնական լեզուն անգլերենը չէ, օրինակ՝
  - Որակավորված բանավոր թարգմանիչներ
  - Այլ լեզուներով գրված տեղեկատվություն

Եթե այս ծառայությունների կարիքն ունեք, կապ հաստատեք վարչական շրջանի հետ օրը 24 ժամ՝ շաբաթը 7 օր՝ զանգահարելով 1-800-854-7771 հեռախոսահամարով: Կամ, եթե չեք կարողանում լավ լսել կամ խոսել, խնդրում ենք զանգահարել (TTY: 711): Պահանջի դեպքում այս փաստաթուղթը կարող է հասանելի լինել Ձեզ բրայլյան, խոշոր տպված, ձայնային կամ մատչելի էլեկտրոնային ձևաչափերով:

### **ԻՆՉՊԵՍ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ**

Եթե կարծում եք, որ Լոս Անջելեսի շրջանը չի տրամադրել այս ծառայությունները կամ ապօրինի կերպով այլ կերպ խտրականություն է դրսևորել սեռի, ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ծագման, ազգային ծագման, էթնիկական խմբի, տարիքի, մտավոր / հոգեկան հաշմանդամության, ֆիզիկական հաշմանդամության,

բժշկական հոգեկան հաշմանդամության, գենետիկական տեղեկությունների, ամուսնական կարգավիճակի, գենդերի, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման պատճառով, Դուք կարող եք բողոք ներկայացնել Լոս Անջելեսի Շրջանին հեռախոսով, գրավոր, անձամբ կամ Էլեկտրոնային եղանակով.

### **Հոգեկան Առողջության Վարչություն**

- **Հեռախոսով:** Կապ հաստատեք Լոս Անջելեսի Շրջանի Հոգեկան Առողջության Վարչության՝ Հիվանդների իրավունքի գրասենյակի հետ առավոտյան 8:30-ից երեկոյան 5:00-ն՝ զանգահարելով (800) 700-9996 կամ (213) 738-4888 հեռախոսահամարներով: Կամ եթե Դուք չեք կարողանում լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել (TTY: 711):
- **Գրավոր:** Լրացրեք բողոքի ձևաթուղթ կամ նամակ գրեք և ուղարկեք հետևյալ հասցեին.  
Los Angeles County Department of Mental Health Patients' Rights Office  
510 South Vermont Avenue, 21<sup>st</sup> Floor, Los Angeles, CA 90020
- **Անձամբ:** Այցելեք Ձեր բժշկին կամ Լոս Անջելեսի Շրջանի Հոգեկան Առողջության Վարչություն, որը գտնվում է հետևյալ հասցեում՝ 510 South Vermont Avenue, Los Angeles, CA 90020, և հայտնեք, որ ցանկանում եք բողոք ներկայացնել:
- **Էլեկտրոնային միջոցով:** Այցելեք Լոս Անջելեսի Շրջանի Հոգեկան Առողջության Վարչության՝ Հիվանդների իրավունքի գրասենյակի կայքէջ՝ <https://dmh.lacounty.gov/our-services/patients-rights/>:

Հանրային Առողջության Վարչության՝ Թմրանյութերի չարաշահման կանխարգելում և վերահսկում

- **Հեռախոսով:** Կապ հաստատեք Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ Թմրանյութերի չարաշահման կանխարգելման և վերահսկման գրասենյակի հետ՝ առավոտյան 8:30-ից երեկոյան 5:00-ն՝ զանգահարելով (626) 299-4532 կամ (888) 742-7900, սեղմեք 2: Կամ եթե Դուք չեք կարողանում լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել (TTY: 711):
- **Գրավոր:** Լրացրեք [բողոքի ձևաթուղթ](#) կամ նամակ գրեք և ուղարկեք հետևյալ

հասցեին.

Substance Abuse Prevention and Control, Contracts and Compliance Branch  
1000 South Fremont Avenue, Building A9 East, 3rd Floor, Box 34, Alhambra,  
California 91803

- Անձամբ: Այցելեք Ձեր բժշկի գրասենյակ կամ Թմրանյութերի չարաշահման կանխարգելման և վերահսկման գրասենյակ, որը գտնվում է հետյալ հասցեում՝ 1000 South Fremont Avenue, Building A9 East, Alhambra, California 91803, և հայտնեք, որ ցանկանում եք բողոք ներկայացնել:
- Էլեկտրոնային տարբերակով: Այցելեք Թմրանյութերի չարաշահման կանխարգելման և վերահսկման գրասենյակի՝ Հիվանդներ աղբյուրների կայքէջ՝ <http://ph.lacounty.gov/sapc/PatientPublic.htm>:

---

### **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ. ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋԱԴԱՅԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Դուք կարող եք նաև քաղաքացիական իրավունքների վերաբերյալ բողոք ներկայացնել Կալիֆորնիայի Առողջապահական Ծառայությունների Վարչության՝ Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ հեռախոսով, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով.

- Հեռախոսով: Չանգահարեք **916-440-7370**: Եթե չեք կարողանում լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել **711 (California State Relay)**:
- Գրավոր: Լրացրեք բողոքի ձևաթուղթը և կամ նամակ ուղարկեք՝

**Department of Health Care Services**  
**Office of Civil Rights**  
**P.O. Box 997413, MS 0009**  
**Sacramento, CA 95899-7413**

Բողոքի ձևաթղթերը հասանելի են այստեղ՝

<https://www.dhcs.ca.gov/discrimination-grievance-procedures>

- Էլեկտրոնային եղանակով: Էլ. Նամակ ուղարկեք այս հասցեին՝ [CivilRights@dhcs.ca.gov](mailto:CivilRights@dhcs.ca.gov):

---

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ. ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Եթե կարծում եք, որ խտրականության եք ենթարկվել ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության, տարիքի, հաշմանդամության կամ սեռի պատճառով, կարող եք նաև քաղաքացիական իրավունքների բողոք ներկայացնել ԱՄՆ Առողջապահության և Մարդկային Ծառայությունների Նախարարության՝ Քաղաքացիական իրավունքների գրասենյակ՝ հեռախոսով, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով.

- Հեռախոսով: Չանգահարեք **1-800-368-1019**. Եթե չեք կարողանում լավ խոսել կամ լսել, խնդրում ենք զանգահարել **TTY/TDD 1-800-537-7697**:
- Գրավոր: Լրացրեք բողոքի ձևաթուղթը և կամ նամակ ուղարկեք՝

**U.S. Department of Health and Human Services  
200 Independence Avenue, SW  
Room 509F, HHH Building  
Washington, D.C. 20201**

Ձևաթղթերը հասանելի են այստեղ՝  
<http://www.hhs.gov/ocr/office/file/index.html>:

- Էլեկտրոնային եղանակով: Այցելեք Քաղաքացիական իրավունքների բողոքների կայք՝ <https://ocrportal.hhs.gov/ocr/portal/lobby.jsf>:

## ԾԱՆՈՒՑՈՒՄ ԳԱՐՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՈԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բժշկական տվյալների գաղտնիության պահպանման վերաբերյալ վարչական շրջանի քաղաքականությունն ու ընթացակարգերը նկարագրող հայտարարությունը հասանելի է և Ձեզ կտրամադրվի պահանջելու դեպքում: Եթե Դուք այն տարիքում կամ վիճակում եք, որ կարող եք Ձեր համաձայնությունը տալ վարքային առողջության ծառայություններին, ապա Ձեզից չի պահանջվում ստանալ որևէ այլ անդամի թույլտվությունը՝ վարքային առողջության ծառայություններից օգտվելու կամ վարքային առողջության ծառայությունների համար դիմում ներկայացնելու համար:

Դուք կարող եք խնդրել Ձեր վարչական շրջանին վարքային առողջության ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ ուղարկել Ձեր ընտրած մեկ այլ փոստային հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի կամ հեռախոսահամարի: Սա կոչվում է «Հաղորդագրության գաղտնիությունը պահպանելու վերաբերյալ խնդրանք»: Եթե Դուք համաձայնություն եք տվել ստանալ բժշկական խնամք, վարչական շրջանը Ձեր վարքային առողջության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրի որևէ մեկին առանց Ձեր գրավոր թույլտվության: Եթե Դուք չտրամադրում փոստային հասցե, էլեկտրոնային փոստի հասցե կամ հեռախոսահամար, վարչական շրջանը Ձեր անունով հաղորդագրություններ է ուղարկում փաստաթղթերում եղած հասցեին կամ հեռախոսահամարին:

Շրջանը կբավարարի Ձեր խնդրանքները՝ գաղտնի հաղորդագրությունները տրամադրել Ձեր խնդրած ձևով և ձևաչափով: Կամ նրանք կապահովեն, որ Ձեր հաղորդագրությունները հեշտությամբ ներկայացվի Ձեր խնդրած ձևով և ձևաչափով: Շրջանը դրանք կուղարկի Ձեր ընտրած մեկ այլ վայր: Հաղորդագրությունների գաղտնիության վերաբերյալ Ձեր խնդրանքը ուժի մեջ է մինչև այն չեղարկեք կամ հաղորդագրությունների գաղտնիության մասին նոր խնդրանք ներկայացնեք:

Դուք կարող եք հաղորդակցության գաղտնիություն խնդրել Լոս Անջելեսի Շրջանի Հոգեկան Առողջության Վարչության (LACDMH) կամ «Թմրանյութերի չարաշահման կանխարգելում և վերահսկում» ծրագրի (SAPC) ցանկացած մատակարարից կամ հաստատությունից: Խնդրանքի համար բացատրություն անհրաժեշտ չէ:

Շրջանի Medi-Cal-ի կողմից կազմակերպվող դեղերի առաքման համակարգի՝ Ձեր բժշկական տվյալների պաշտպանությանը վերաբերող քաղաքականության և գործելակարգերի մասին հայտարարությունը (կոչվում է «Ծանուցում գաղտնիության պահպանմանը վերաբերող գործողությունների մասին») կարող եք գտնել Շրջանի կայքում՝

Լոս Անջելեսի Շրջանի Հոգեկան Առողջության Վարչություն (LACDMH)՝  
<https://dmh.lacounty.gov/our-services/consumer-and-family-affairs/privacy/>

«Թմրանյութերի չարաշահման կանխարգելում և վերահսկում» ծրագիր(SAPC)՝  
<http://ph.lacounty.gov/sapc/PatientPublic.htm>

## ԲԱՌԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ

**988 Ինքնասպանության և ճգնաժամային դեպքերի ուղիղ գիծ (Suicide and Crisis Lifeline):** Հեռախոսահամար, որը տրամադրում է անվճար, գաղտնիություն պահպանող աջակցություն հոգեկան առողջության ճգնաժամ ապրող մարդկանց, այդ թվում՝ ինքնասպանության մտքեր ունեցողներին: Այն հասանելի է շաբաթը 7 օր՝ օրը 24 ժամ, որպեսզի զանգահարողներին կապի պատրաստված խորհրդատուների հետ, ովքեր կարող են օգնություն և օժանդակություն առաջարկել:

**Վարչական իրավունքի դատավոր (Administrative law judge):** Դատարվոր, որը լսում է նպաստի բացասական որոշման մասին որոշումները և որոշում կայացնում դրանց վերաբերյալ:

**Կախվածության դեմ դեղերի հարցով ամերիկյան միություն (ASAM):** Մասնագիտական բժշկական միություն, որը ներկայացնում է բժիշկներին և կախվածության բուժման մեջ մասնագիտացած առողջապահության այլ մասնագետներին: Այս կազմակերպությունը ստեղծել է ASAM չափանիշները, որոնք կախվածության բուժման ազգային չափանիշների ամբողջությունն են:

**Բողոքարկման վճիռ (Appeal resolution):** Գործընթաց՝ լուծելու Ձեր անհամաձայնությունը, որը կապված է պահանջվող ծառայության ապահովագրության վերաբերյալ շրջանի կողմից կայացված որոշման հետ: Ավելի պարզ ասած՝ դա այն միջոցն է, որով Դուք երկրորդ անգամ անդրադառնում եք այն որոշմանը, որի հետ համաձայն չեք:

**Հիվանդին հասանելի հավելվածների ծրագրավորման հարթակներ (APIs):** API-ները նման են մեսենջերների, որոնք թույլ են տալիս տարբեր ծրագրային ապահովումների (software) «խոսել» միմյանց հետ և փոխանակել տեղեկատվություն:

**Գնահատում (Assessment):** Ծառայություն, որը նախատեսված է մտավոր, հուզական կամ վարքային առողջության ներկայիս վիճակը գնահատելու համար:

**Թույլտվություն (Authorization):** Թույլ տալը կամ հաստատելը:

**Լիազորված ներկայացուցիչ (Authorized representative):** Անձ, ով օրինական իրավունք ունի գործել մեկ այլ անձի անունից:

**Վարքային առողջություն (Behavioral Health):** Վերաբերում է մեր հուզական, հոգեբանական և սոցիալական առողջ վիճակին: Ավելի պարզ ասած՝ այն վերաբերում է մեր մտածելուն, զգալուն և ուրիշների հետ շփվելուն:

**Նպաստներ (Benefits):** Այս առողջապահական ծրագրի շրջանակներում ծրագրի կողմից վճարվող առողջապահական ծառայություններ և դեղեր:

**Medi-Cal-ի նպաստների նույնականացման քարտ (BIC):** Նույնականացման քարտ՝ Ձեր Medi-Cal բժշկական ապահովագրությունը հաստատելու համար:

**Բուժումը համակարգող ծառայություններ (Care Coordination Services (Coordination of Care)):** Օգնում է մարդկանց կողմնորոշվել առողջապահական համակարգում:

**Խնամող (Caregiver):** Անձ, ով խնամում և օժանդակում է օգնության կարիք ունեցող մեկ այլ անձի:

**Գործի կառավարիչ (Case manager):** Գրանցված բուժակներ (registered nurses) կամ սոցիալական աշխատողներ, որոնք կարող են օգնել անդամին հասկանալ առողջական լուրջ խնդիրները և կազմակերպել բուժումը անդամի մատակարարների հետ:

**Գործի կառավարում (Case management):** Սա ծառայություն է, որն օգնում է անդամներին օգտվել անհրաժեշտ բժշկական, ուսումնական, սոցիալական, վերականգնողական կամ այլ համայնքային ծառայություններից: Այլ կերպ ասած, այն օգնում է մարդկանց ստանալ անհրաժեշտ խնամքն ու աջակցությունը:

**Երեխաների բժշկական ապահովագրության ծրագիր (CHIP):** Պետական ծրագիր, որն օգնում է ընտանիքներին ձեռք բերել բժշկական ապահովագրություն իրենց երեխաների համար, եթե իրենք չունեն դրա հնարավորությունը:

**Քաղաքացիական իրավունքի համակարգող (Civil Rights Coordinator):** Ապահովում է, որ կազմակերպությունը (օրինակ՝ դպրոցը, ընկերությունը կամ պետական մարմինը) հետևի մարդկանց խտրականությունից պաշտպանող օրենքներին:

**Չաճախորդահեն (Client-driven):** Որևէ բան, որը կենտրոնանում է հաճախորդի կարիքների և նախապատվությունների վրա:

**Չամայնքային կազմակերպություններ (Community-based organizations):** Մարդկանց խմբեր, որոնք միասին աշխատում են՝ իրենց համայնքը բարելավելու համար:

**Չամայնքային ծառայություններ չափահասների համար (CBAS):** Իրավասու անդամների համար ամբուլատոր (հիվանդանոցում չմնալով), հաստատություններում գործող ծառայություններ՝ մասնագիտացած բուժակների կողմից իրականացվող խնամքի, սոցիալական ծառայությունների, թերապիաների, անձնական խնամքի, ընտանիքի և խնամողների վերապատրաստման և աջակցության, սննդի ծառայությունների, փոխադրամիջոցի և այլ ծառայությունների համար:

**Համայնքի վրա հիմնված կայունացում (Community-based stabilization):** Օգնում է հոգեկան առողջության ճգնաժամ ապրող մարդկանց աջակցություն ստանալ իրենց համայնքում՝ հիվանդանոց գնալու փոխարեն:

**Ծառայության շարունակում (Continuation of service):** Տես «բուժման շարունակականությունը»:

**Բուժման շարունակականություն (Continuity of care):** Ծրագրի անդամի կարողությունն է՝ շարունակել Medi-Cal ծառայություններ ստանալ ցանցի մեջ չմտնող ներկայիս մատակարարից մինչև 12 ամիս, եթե մատակարարը և վարչական շրջանը համաձայն են:

**Համավճար (co-pay):** Ապահովագրողի վճարումից բացի այլ վճարում, որը անդամը կատարում է՝ սովորաբար ծառայության պահին:

**Ապահովագրության կողմից վճարվող ծառայություններ (Covered Services):** Medi-Cal-ի ծառայություններ, որոնց վճարման համար պատասխանատու է վարչական շրջանը (county): Ապահովագրված ծառայությունները տրվում են համաձայն Medi-Cal պայմանագրի, պայմանագրի ցանկացած փոփոխության և անդամների համար այս ձեռնարկում նշված պայմանների, սահմանափակումների և բացառությունների (հայտնի է նաև որպես Ապահովագրության համակցված ապացույց» (Combined Evidence of Coverage, EOC) և «Հայտարարման ձև» (Disclosure Form):

**Մշակույթն ըմբռնող ծառայություններ (Culturally competent services):** Ծառայությունների այնպիսի մատուցում, որը հարգում է անձի մշակույթը, լեզուն և համոզմունքները և համաձայնեցվում դրանց:

**Կարևոր աջակցության նշանակված անձ(անձինք) (Designated significant support person(s):** Անձ (անձինք), որին ծրագրի անդամը կամ մատակարարը կարևոր են համարում բուժման հաջողության համար: Սա կարող է ներառել անչափահասի ծնողներին կամ օրինական ինսամակալներին, նույն տանն ապրող ցանկացած անձի և անդամի այլ ազգականներին:

**DHCS:** Կալիֆորնիայի՝ Առողջապահական Ծառայությունների Վարչություն (The California Department of Health Care Services). սա նահանգի այն գրասենյակն է, որը վերահսկում է Medi-Cal ծրագիրը:

**Խտրականություն (Discrimination):** Անձի նկատմամբ անարդար կամ անհավասար վերաբերմունք՝ հիմնված նրա ռասայի, սեռի, կրոնի, սեռական կողմնորոշման, հաշմանդամության կամ այլ բնորոշիչի վրա:

**Վաղ և պարբերական գնում, ախտորոշում և բուժում (EPSDT):** Ստուգեք «Medi-Cal երեխաների և դեղառասների համար» բաժինը:

**Ընտանիքը ներառող բուժման ծրագրեր (Family-based treatment services):**

Իրականացնում է երեխաների և նրանց ընտանիքների աջակցություն և բուժում տանը՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրները լուծելու համար:

**Ընտանիքի պլանավորման ծառայություններ (Family planning services):**

Հղիությունը կանխելուն կամ հետաձգելուն ուղղված ծառայություններ:

Ծառայությունները տրամադրվում են վերարտադրողական տարիքում գտնվող անդամներին՝ նրանց հնարավորություն տալով որոշել երեխաների թիվը և ծննդաբերությունների միջև ընկած ժամանակահատվածը:

**Medi-Cal-ի վճարում ծառայության դիմաց (FFS):** Վճարման մոդել, որի դեպքում վարքային առողջության մատակարարներին վճարվում է ոչ թե յուրաքանչյուր հիվանդի համար ամսական կամ տարեկան վճար, այլ նրանք վճարվում են հիվանդին մատուցվող յուրաքանչյուր ծառայության համար: Medi-Cal Rx-ը ներառված է այս ծրագրում:

**Ֆինանսական պարտավորություն (Financial liability):** Պատասխանատու լինելն է պարտքը կամ ծախսը վճարելու համար:

**Խնամատար տուն (Foster home):** Տուն, որտեղ ծնողներից կամ խնամակալներից բաժանված երեխաների համար ապահովվում է փոխարինողների կողմից իրականացվող 24-ժամյա խնամք:

**Խարդախություն (Fraud):** Միտումնավոր արարք, որն արվել է խաբելու կամ սխալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով և որը կատարող անձը գիտակցում է, որ խաբեությունը կամ սխալ ներկայացնելը կարող է իր կամ մեկ ուրիշի համար առաջացնել որոշակի չարտոնված օգուտ:

**Լիարժեք (Full-scope) Medi-Cal:** Անվճար կամ ցածր գնով առողջապահական ծառայություններ Կալիֆորնիայի բնակիչների համար, որոնք ապահովվում են ոչ միայն հրատապ բժշկական օգնություն: Այն ապահովվում է բժշկական, ատամնաբուժական, հոգեկան առողջության, ընտանիքի պլանավորման և տեսողության բժշկական խնամք: Այն նաև ներառում է ակոհոլի և թմրանյութերից կախվածության բուժումը, Ձեր բժշկի կողմից նշանակված դեղամիջոցները և այլն:

**Բողոք (Grievance):** Անդամի բանավոր կամ գրավոր դժգոհության արտահայտություն, որը վերաբերում է Medi-Cal-ի, կառավարվող խնամքի ծրագրի, վարչական շրջանի կամ Medi-Cal մատակարարի կողմից ապահովվագրված ծառայությանը: Բողոքը նույնն է, ինչ դժգոհությունը:

**Խնամակալ (Guardian):** Անձ, որը օրենքով պատասխանատու է մեկ այլ անձի՝ սովորաբար երեխայի կամ ինքն իր մասին հոգ տանելի չկարողացող անձի խնամքի և բարօրության համար:

**Հիվանդանոց:** Վայր, որտեղ անդամը ստանում է ստացիոնար (այնտեղ գիշերելով) և ամբուլատոր (այնտեղ չգիշերելով) բուժում բժիշկների և բուժականների կողմից:

**Հոսպիտալացում (Hospitalization):** Հիվանդանոց ընդունվելը որպես այնտեղ գիշերելով բուժում ստացող (ստացիոնար) հիվանդ:

**Հնդկացիների բժշկական ծառայությունների մատակարարներ (IHCP):** «Indian Health Service»-ի (IHS), «Indian Tribe»-ի, «Tribal Health Program»-ի, «Tribal Organization»-ի կամ «Urban Indian Organization»-ի (UIO) կողմից իրականացվող առողջապահական ծրագրեր՝ համաձայն «Հնդկացիների առողջապահության բարելավման մասին» օրենքի 4-րդ հոդվածում սահմանված տերմինների (ԱՄՆ օրենսգրքի գլուխ 25, հոդված 1603):

**Նախնական գնահատում (Initial Assessment):** Անդամի վիճակի գնահատում՝ հոգեկան առողջության ծառայությունների կամ թմրանյութերից կախվածության բուժման անհրաժեշտությունը որոշելու համար:

**Ստացիոնար (հիվանդանոցում մնալով) դետոքսիֆիկացիա (Inpatient Detoxification):** Չրկանքի հետ կապված բարդություններ ունեցող անդամների դետոքսիֆիկացիայի համար անհապաղ բուժօգնություն, որը տրվում է հիվանդի կամքով:

**Համապարփակ հիմնական գործողությունների մոդել (Integrated Core Practice Model):** Ուղեցույց, որը ներկայացնում է Կալիֆորնիայում երեխաների, պատանիների և ընտանիքների հետ աշխատելու վերաբերող արժեքները, չափանիշները և գործելակարգը:

**Հոգեկան առողջության՝ արտոնագիր ունեցող մասնագետ (Licensed mental health professional):** Ցանկացած մատակարար, որին տրված է արտոնագիր՝ համաձայն Կալիֆորնիայի նահանգի գործող օրենսդրության. այդպիսիք են՝ արտոնագիր ունեցող բժիշկ, արտոնագիր ունեցող հոգեբան, արտոնագիր ունեցող կլինիկական սոցիալական աշխատող, արտոնագիր ունեցող կլինիկական մասնագետ-խորհրդատու, արտոնագիր ունեցող՝ ամուսնության և ընտանեկան թերապիստ, գրանցված բուժակ, արտոնագիր ունեցող մասնագիտացած բուժակ (LVN), արտոնագիր ունեցող հոգեբուժության տեխնիկ:

**Արտոնագիր ունեցող հոգեբուժական հիվանդանոց (Licensed psychiatric hospital):** Հոգեկան առողջության բուժման կենտրոն, որն ունի արտոնագիր՝ հոգեկան

խանգարումներ ունեցող, անգործունակ կամ իրենց կամ ուրիշների համար վտանգ ներկայացնող անձանց 24-ժամյա ստացիոնար (հիվանդանոցում մնալով) խնամք տրամադրելու համար:

**Արտոնագիր ունեցող բնակելի հաստատություն (Licensed residential facility):**

Հաստատություններ, որտեղ բնակվում և ոչ բժշկական ծառայություններ են ստանում ալկոհոլի կամ այլ թմրանյութերի (AOD) օգտագործման կամ չարաշահման հետ կապված խնդիրներից ձերբազատվող չափահասները:

**Կառավարվող խնամքի ծրագիր (Managed care plan):** Medi-Cal-ի բժշկական ապահովագրություն, որը Medi-Cal-ի այս ծրագրի բաժանորդներին առաջարկում է միայն որոշակի բժիշկների, մասնագետների, կլինիկաների, դեղատների և հիվանդանոցների ծառայություններ:

**Medi-Cal:** Դաշնային Medicaid ծրագրի Կալիֆորնիայի տարբերակն է: Medi-Cal-ը Կալիֆորնիայում բնակվող իրավասու անձանց առաջարկում է անվճար և ցածր գնով բժշկական ապահովագրություն:

**Medi-Cal երեխաների և դեռահասների համար (Medi-Cal for Kids and Teens):** Medi-Cal-ի՝ 21 տարեկանից փոքր անդամների համար նախատեսված նպաստ՝ նրանց առողջությունը պահպանելու համար: Անդամները պետք է անցնեն իրենց տարիքին համապատասխան առողջական ստուգումներ և համապատասխան հետազոտություններ՝ առողջական խնդիրները հայտնաբերելու և հիվանդությունները վաղ փուլում բուժելու համար: Նրանք պետք է բուժում ստանան՝ ստուգումների ժամանակ հնարավոր հիվանդությունները բուժելու կամ դրանք բարելավելու համար: Դաշնային օրենքում այս նպաստը հայտնի է նաև որպես «Վաղ և պարբերական գնման, ախտորոշման և բուժման (EPSDT) նպաստ»:

**Medi-Cal-ի՝ վիճակակիցների աջակցության մասնագետ (Medi-Cal Peer Support Specialist):** Անհատ, ով վարքային առողջության կամ թմրամիջոցների օգտագործման խնդիրների անձնական փորձ ունի և գտնվում է ապաքինման փուլում, ով կատարել է վարչական շրջանի՝ նահանգի կողմից հաստատված հավաստագրման ծրագրի պահանջները. այս անձը տրամադրում է այս ծառայությունները վարքային առողջության մի մասնագետի ղեկավարությամբ, ով ունի արտոնագիր, թույլտվություն (waivered) կամ գրանցված է նահանգում:

**Medi-Cal Rx:** Դեղատան նպաստների ծառայություն, որը Medi-Cal-ի «Վճարում ծառայության դիմաց» (FFS) ծրագրի մաս է կազմում և Medi-Cal-ի բոլոր անդամներին տրամադրում է դեղատան նպաստներ և ծառայություններ, այդ թվում՝ դեղատոմսով դեղեր և որոշ բժշկական պարագաներ:

**Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ (կամ բժշկական անհրաժեշտություն) (Medically necessary; medical necessity):** 21 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անդամների համար ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, երբ այն ողջամիտ է և անհրաժեշտ է կյանքը պահպանելու, լուրջ հիվանդությունը կամ լուրջ հաշմանդամությունը կանխելու կամ ուժեղ ցավը մեղմելու համար: 21 տարեկանից փոքր անդամների համար ծառայությունը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, եթե այն նախատեսված է հետազոտական ծառայության կողմից հայտնաբերված հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ բարելավելու համար:

**Դեղորայքով օժանդակվող բուժումը (MAT):** Սննդի և դեղորայքի վարչության (FDA) կողմից հաստատված դեղերի օգտագործումը՝ խորհրդատվության կամ վարքային թերապիաների հետ միասին, որպեսզի չթմրանյութերից կախվածությունը բուժելուն տրվի «բուժառուն ամբողջությամբ» (“whole-patient”) մոտեցում:

**Անդամ (Member):** Անձ, որը գրանցված է Medi-Cal ծրագրում:

**Հոգեկան առողջության ճգնաժամ (Mental health crisis):** Երբ որևէ մեկը գտնվում է այնպիսի իրավիճակում, որ իր վարքագիծը կամ ախտանիշները վտանգի են ենթարկում իրեն կամ ուրիշներին և պահանջում են անհապաղ ուշադրություն:

**Հոգեկան առողջության ծրագիր (Mental health plan):** Յուրաքանչյուր վարչական շրջան ունի հոգեկան առողջության ծրագիր, որը պատասխանատու է իր շրջանում Medi-Cal անդամներին մասնագիտացված հոգեկան առողջության ծառայություններ մատուցելու կամ դրանք կազմակերպելու համար:

**Ցանց (Network):** A group of doctors, clinics, hospitals, and other providers contracted with the county to provide care. Բժիշկների, կլինիկաների, հիվանդանոցների և այլ մատակարարների մի խումբ, որը պայմանագիր է կնքել շրջանի հետ՝ բուժօգնություն իրականացնելու համար:

**Ոչ շտապ բժշկական փոխադրամիջոց (Non-emergency medical transportation):** Փոխադրում շտապօգնության մեքենայով, անվասայլակի հարմարանք ունեցող մեքենայով (van) կամ պատգարակի հարմարանք ունեցող մեքենայով այն մարդկանց համար, ովքեր չեն կարողանում օգտվել հանրային կամ անձնական մեքենաներից:

**Ոչ բժշկական փոխադրամիջոց (Non-medical transportation):** Փոխադրամիջոց՝ դեպի Medi-Cal-ի կողմից վճարվող և մատակարարի կողմից թույլատրված ժամադրության վայր ուղևորվելու և այնտեղից վերադառնալու համար, ինչպես նաև նշանակված դեղերը և բժշկական պարագաները վերցնելու համար:

**Օմբուդսմենի գրասենյակ (Office of the Ombudsman):** Օգնում է լուծել խնդիրները չեզոք դիրքից՝ համոզվելու համար, որ անդամները ստանում են բժշկական առումով բոլոր այն անհրաժեշտ և ապահովագրված ծառայությունները, որոնց համար ապահովագրական ծրագրերը պայմանագրային պատասխանատվություն են կրում:

**Տեղավորում տնից դուրս միջավայրում (Out-of-home placement):** Երեխայի ժամանակավոր կամ մշտական տեղափոխում իր տնից ավելի անվտանգ միջավայր, օրինակ՝ խնամատար ընտանիքը կամ խմբային տունը:

**Ցանցի մեջ չմտնող մատակարար (Out-of-network provider):** մատակարար, որը չի մտնում շրջանի՝ պայմանագրով գործող ցանցի մեջ:

**Գրպանից վճարում (Out-of-pocket):** Անդամի անձնական ծախսը՝ ապահովագրված ծառայություններ ստանալու համար: Սա ներառում է ապահովագրավճարները, համավճարները կամ ապահովագրված ծառայությունների համար ցանկացած լրացուցիչ ծախս:

**Արտահիվանդանոցային (ամբուլատոր) հոգեկան առողջության ծառայություններ (Outpatient mental health services):** Թեթև և միջին ծանրության հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անդամների համար արտահիվանդանոցային ծառայություններ, ներառյալ՝

- Հոգեկան առողջության անհատական կամ խմբային գնահատում և բուժում (հոգեթերապիա)
- Հոգեբանական թեստավորում, երբ բժշկական պատճառներով նշված է հոգեկան առողջության վիճակը գնահատելու համար
- Արտահիվանդանոցային ծառայություններ՝ դեղերով բուժումը վերահսկելու համար
- Հոգեբուժական խորհրդատվություն
- Արտահիվանդանոցային լաբորատորիա, պարագաներ և հավելումներ

**Մասնակից մատակարար (կամ մասնակից բժիշկ) (Participating provider, participating doctor):** Բժիշկ, հիվանդանոց կամ առողջապահության՝ արտոնագիր ունեցող այլ մասնագետ կամ արտոնագիր ունեցող առողջապահական հաստատություն, ներառյալ ոչ շատ սուր առողջական խնդիրների հաստատություններ (sub-acute facilities), որոնք վարչական շրջանի հետ պայմանագիր ունեն անդամներին ապահովագրված ծառայություններ մատուցելու համար այն պահին, երբ անդամը ստանում է բուժխնամք:

**Ծրագրի մշակում (Plan development):** Ծառայություն, որի մեջ են մտնում հաճախորդների համար ծրագրերի մշակումը, հաճախորդների ծրագրերի հաստատումը և/կամ անդամի առաջընթացի մոնիթորինգը:

**Դեղատոմսով տրվող դեղեր (Prescription drugs):** Դեղամիջոց, որի տրամադրելու համար օրինականորեն պահանջվում է արտոնագիր ունեցող մատակարարի կողմից տրված դեղատոմս՝ ի տարբերություն ազատ վաճառվող դեղերի, որոնք դեղատոմս չեն պահանջում:

**Առողջության առաջնային պահպանում (Primary care):** Հայտնի է նաև որպես «սովորական բուժխնամք»: Սրանք ներառում են բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայություններ, և կանխարգելիչ խնամք, երեխայի առողջության համար այցեր կամ բուժխնամք, օրինակ՝ կանոնավոր ստուգման համար այցեր: Այս ծառայությունների նպատակն է կանխել առողջական խնդիրները:

**Առողջության առաջնային պահպանման մատակարար (հիմնական մատակարար) (Primary care provider (PCP)):** Արտոնագիր ունեցող մատակարար, որին անդամը դիմում է առողջապահական խնամքի մեծ մասի համար: Առողջության առաջնային պահպանման մատակարարն օգնում է անդամին ստանալ անհրաժեշտ խնամքը: Առողջության առաջնային պահպանման մատակարար կարող է լինել՝

- Ընդհանուր բժիշկ
- Թերապևտ
- Մանկաբույժ
- Ընտանեկան բժիշկ
- Մանկաբարձ-գինեկոլոգ
- Հնդկացիների բժշկական ծառայությունների մատակարարներ (IHCP)
- Դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոն (FQHC)
- Գյուղական առողջապահական կլինիկա (RHC)
- Բուժքույր-մասնագետ
- Բժշկի օգնական
- Կլինիկա

**Նախօրոք տրվող թույլտվություն (Prior authorization; pre-approval):** Գործընթաց, որի միջոցով անդամը կամ նրա մատակարարը պետք է շրջանից թույլտվություն խնդրեն որոշակի ծառայությունների համար, որպեսզի համոզվեն, որ շրջանը կվճարի նրանց ծառայությունների ծախսը: Ուղեգիրը թույլտվություն չէ: Նախօրոք տրված թույլտվությունը նույնն է, ինչ նախօրոք արված հաստատումը:

**խնդրի լուծում (Problem resolution):** Գործընթաց, որը թույլ է տալիս անդամին լուծել շրջանի պարտականություններին վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ խնդիր կամ մտահոգություն, ներառյալ ծառայությունների մատուցումը:

**Մատակարարների տեղեկատու (Provider Directory):** Շրջանի ցանցի մեջ մտնող մատակարարների ցանկն է:

**Անհետաձգելի հոգեբուժական միջամտություն պահանջող վիճակ (Psychiatric emergency medical condition):** Հոգեկան խանգարում, որի դեպքում ախտանիշներն այնքան լուրջ են, որ անմիջական վտանգ են ներկայացնում անձի կամ շրջապատողների համար, կամ անձը հոգեկան վիճակի պատճառով չի կարող ինքնուրույն ապահովել կամ օգտագործել սնունդ, կացարան կամ հագուստ:

**Հոգեբանական թեստավորում (Psychological testing):** Թեստ, որը օգնում է հասկանալ մարդու մտքերը, զգացմունքները և վարքագիծը:

**Ուղղորդում (Referral):** Երբ անդամի հիմնական բժիշկը ասում է, որ անդամը կարող է բուժում ստանալ մեկ այլ մատակարարից: Ապահովագրությամբ վճարվող որոշ բժշկական ծառայությունների համար պահանջում է ուղղորդում (ուղեգիր) և նախօրոք տրված թույլտվություն:

**Վերականգնողական և զարգացման թերապիայի ծառայություններ և սարքեր (Rehabilitative and habilitative therapy services and devices):** Ծառայություններ և սարքեր՝ օգնելու համար վնասվածքներ, հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություններ ունեցող անդամներին ձեռք բերել մտավոր և ֆիզիկական հմտություններ կամ վերականգնել դրանք:

**Բնակելի ապաստանի ծառայություններ (Residential shelter services):** Ապահովում է ժամանակավոր կացարան և աջակցություն անօթևան կամ բնակարանային լուրջ խնդիրներ ունեցող մարդկանց:

**Հետազոտություններ (Screening):** Արագ ստուգումներ, ոոնք արվում են ամենահարմար ծառայությունները որոշելու համար:

**Ծախսի մասնաբաժին (Share of cost):** Գումարի այն մասը, որն անդամը պետք է վճարի իր բժշկական ծախսերի համար, նախքան Medi-Cal-ը կվճարի ծառայությունների համար:

**Լուրջ հուզական խանգարումներ (խնդիրներ) Serious emotional disturbances (problems):** Վերաբերում է երեխաների և դեռահասների մոտ մտավոր, վարքային կամ հուզական նշանակալի խանգարմանը, որը խոչընդոտում է տանը, դպրոցում կամ համայնքում գործելու նրանց կարողությանը:

**Մասնագետ կամ մասնագիտացած բժիշկ (Specialist; specialty doctor):** Բժիշկ, որը բուժում է որոշակի առողջական խնդիրներ: Օրինակ՝ օրթոպեդ վիրաբույժը բուժում է կոտրված ոսկորները, ալերգոլոգը՝ ալերգիաները, իսկ սրտաբանը՝ սրտի խնդիրները: Մասնագետի մոտ գնալու համար հիմնականում անդամին անհրաժեշտ է լինում ուղեգիր իր ընտանեկան բժշկից:

**Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ (Specialty mental health services (SMHS)):** Սրանք ծառայություններ են այն անդամների համար, որոնց հոգեկան առողջության խնդիրները պլեյի ծանր են, քան թույլ կամ միջին աստիճանի խանգարումը:

**Ուժեղ կողմերի վրա հիմնված (Strength-based):** Դիտարկելն է, թե ինչ է ի վիճակի անել անձը՝ հակառակ կենտրոնանալու նրանց խնդիրների վրա:

**Թմրանյութերից կախվածությանն առնչվող ծառայություններ (Substance use disorder services):** Ծառայություններ, որոնք օգնում են թմրանյութերից կամ ալկոհոլից կախվածության դեմ պայքարող մարդկանց:

**Հեռաառողջապահություն (Telehealth):** Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով առողջապահական ծառայություններ մատուցելու միջոց՝ հիվանդի առողջապահական խնամքը հեշտացնելու համար:

**Տրավմա (Trauma):** Խորը հուզական և հոգեբանական տառապանք, որն առաջանում է սարսափելի իրադարձության միջոց անցնելու կամ դրան ականատես լինելու հետևանքով:

**Տրավմայի մասին տեղեկությունների վրա հիմնված հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ (Trauma-informed specialty mental health services):** Այս ծառայությունները տրամադրողները գիտակցում են, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող շատ մարդիկ տրավմա են ապրել, և նրանք տրամադրում են բուժխնամք, որը նկատի է ունենում զգայունությունը և աջակցում է տրավմա ստացածներին:

**Բուժման ծրագիր (Treatment Plan):** Անդամի կարիքները բավարարելու և առաջընթացը վերահսկելու ծրագիր՝ անդամի լավագույն հնարավոր ֆունկցիոնալ մակարդակը վերականգնելու համար:

**TTY/TDD:** Սարքեր, որոնք օգնում են խուլ, լսողության խնդիրներ ունեցող կամ խոսքի խանգարում ունեցող մարդկանց կատարել և ստանալ հեռախոսազանգեր: TTY-ն անգլերեն նշանակում է «Teletypewriter» («Հեռավար գրամեքենա»): TDD-ն նշանակում է «Telecommunications Device for the Deaf» («Հեռահաղորդակցության սարք խուլերի համար»):

**Աշխատանքի համար ծառայություններ:** Ծառայություններ, որոնք օգնում են մարդկանց գտնել աշխատանք կամ պահպանել այն:

**Սպասման ցուցակ:** Այն մարդկանց ցուցակը, որոնք սպասում են ինչ-որ բանի՝ որը ներկայումս հասանելի չէ, բայց հետագայում կարող է լինել:

**Ծանոթացում և փոխանցում (Warm handoff):** Բժշկական խնամքի սահուն փոխանցում մեկ մատակարարից մյուսին:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

### Հատուկ վարչական շրջանին վերաբերող լրացուցիչ տեղեկություններ

- Լոս Անջելեսի Շրջանի «Medi-Cal-ի կողմից կազմակերպվող դեղերի առաքման համակարգն» առաջարկում է Medi-Cal-ի՝ վիճակակիցների աջակցության ծառայություններ և Արտակարգ իրավիճակների կառավարման ծառայություններ:
- Այլ լեզուներով կամ այլընտրանքային ձևերով, ինչպիսիք են բրայլյան գրերով կամ խոշոր տառերով տպված տեղեկատվություն խնդրելու համար ստուգեք այս ձեռնարկի սկզբում գտնվող «Վարչական շրջանի կապի տվյալներ» բաժինը:
- Լոս Անջելեսի Շրջանի Հոգեկան առողջության մասնագիտացված ծառայությունների մատուցման համակարգը առաջարկում է Medi-Cal-ի՝ վիճակակիցների աջակցության ծառայություններ: